İST. BELEDİYE
930
KÜTÜPHANESİ

Արդարեան

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Բնական, Քաղաքական եւ Ուսումնական

Ռ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի պէտս

ԱԶԳ. ՏԱՐՐԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԱՅ

ԸՍՏ ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ

ԵՒ

ՎԱՒԵՐԱՑՄԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՐԴՈՑ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1894

1891

SÜLEDİYE KÜTÜPHANESİ

Հեղինակին ստորագրությունը չկրող

օրինակները կեղծ են :



ՈՂԲԱՅԵԱԼ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀՕԳԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂՆ

Ի ՆՇԱՆ ԱՆՁՆՈՒԷՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Անցեալ 1892–93 դպրոցական Տարեշրջանի սկիզբներն հրատարակած մեր սոյն «Տարրական Աշխարհագրութիւն»ը սուղ միջոցի մէջ սպառած ըլլալով՝ ձեռնարկեցինք Երկրորդ տպագրութեան։

Այս առթիւ հարկ սեպեցինք, գործոյս հիմը նոյնը պահելով՝ ինչ ինչ կարեւոր յաւելուածներ ու փոփոխութիւններ ընել։

Վստահ ենք որ, Պատ. Ուսուցիչք՝ գործոյս երկրորդ տպագրութիւնն ալ առաջիոյն նման՝ իրենց ներողամիտ ընդունելութեամբն պատուելով՝ զմեզ պիտի քաջալերեն։

Գ. Մ.

ՏԱՐԲԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԴԱՍ Ա.

1. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ երկրիս մակերեւոյթին նկարագրութիւնն է։

2. Երկիրս նարնջի նման կլոր է (1)։ Երբ այնպէս երեւակայենք որ՝ այդ նարնջին մէջ տեղէն գուլպայի մը չիշ անցուած է, այդ չիշը կը կոչուի երկրիս Առանցքը և անոր երկու ծայրերն ալ՝ Բեւեռ կ'ըսուին։

3. Մեր երկիրը 24 ժամը մէկ անգամ իր առանցքին վրայ կը դառնայ և ասոր համար կ'ըլլայ Գիշեր ու Ցորեկ։ 365 օրուան, այսինքն մէկ տարուան մէջ ալ Արեգակին բոլորտիքը դառնալուն համար՝ յառաջ

(1) Ուսուցիչը պէտք է նախ երկրիս կլորութեան ապացոյցները տայ աշակերտին։

կուգան տարբոյն չորս եղանակները որք են՝ Գարուն, Ամառ, Աշուն և Ձմեռ։

4. Երկիրս ունի 40,000 քիլոմէթր շրջապատ. — Արեգակէն 1,300,000 անգամ փոքր և Լուսինէն 49



Երկրագունա

անգամ մեծ է։

5. Երկիրս Արեգակին բոլորտիքը դառնալուն համար կը կոչուի Մոլորակ, որովհետեւ Լուսինն ալ երկրիս բոլորտիքը կը դառնայ, այն ալ կը կոչուի երկրիս Արբանեակը։

Երկրագունց եւ Քարտէս

6. Երկրիս մակերեւոյթը (երեսը) և այդ մակերեւոյթին այլ և այլ ձեւերը դիւրաւ և աղէկ սորվելու համար՝ Երկրագունց ու Քարտէսներ կը գործածուին։

7. Գունց կամ Երկրագունց ըսելով կը հասկնանք, ձեռքով շինուած Գունտ մը՝ որու վրայ նշանակուած են ջուրի և ցամաքի այլ և այլ ձեւերը, երկիրները, քաղաքները և։

8. Աշխարհացոյց Քարտէս կ'ըսուին այն զանազան դիրքով թուղթերն՝ որոնց վրայ գծագրուած է երկրիս ամբողջ մակերեւոյթը կամ անոր մէկ մասը։

9. Համաստարած կ'ըսուին այն աշխարհագրական քարտէսներն՝ որոնց վրայ երկրիս ամբողջ մակերեւոյթը նկարագրուած է։

10. Երբ թուղթի մը վրայ միայն մէկ երկրի կամ մէկ տէրութեան մը մակերեւոյթն գծագրուած ըլլայ, այդ աշխարհագրական պատկերը կը կոչուի Առանձնաքարտէս կամ Մասնաքարտէս։

ԴԱՍ Բ.

Երկրիս չորս գլխաւոր կողմերը

1. Երկիրս չորս գլխաւոր կողմեր ունի։ Հորիզո-

նին երկինքին այն կողմը՝ ուսկից Արեւը կը ծագի, կը կոչուի Արեւելք. — Արեւելքի հակառակ կողմն՝ ուս-



Երկրիս չորս գլխաւոր կողմերը

կից Արեգակը մարը կը մտնէ՝ կը կոչուի Արեւմուտք։ — Երբոր երեսնիս դէպ արեւելք դարձուցեմք, աջ կողմերնիս կ'ըլլայ Հարաւ և ձախերնիս՝ Հիւսիս։

2, Այս չորս գլխաւոր կողմերուն մէջտեղուանքը կան չորս ալ Երկրորդական կողմեր, ինչպէս՝ Հիւսիսային Արեւելք և Հիւսիսային Արեւմուտք. — Արեւելեան Հարաւ ու Արեւմտեան Հարաւ՝ որոնք կը կոչուին նաև Միջանկեալ կողմեր։

3. Աշխարհացոյց տախտակի մը վերի կողմը Հիւսիս, վարի կողմը Հարաւ, աջ կողմը Արեւելք, և ձախ կողմը Արեւմուտք։

4. Երկիրս կը բաժնուի 5 գօտիներու, — կեդրոնը՝ որ կը կոչուի նաեւ Հասարակած, սաստիկ տաք կ'ընէ և կ'ըսուի Այրեցեալ գօտի։ Գունտին երկու ծայրերը՝ ուր տեղուանք սաստիկ ցուրտ կ'ընեն՝ կը կոչուի Սառուցեալ գօտիներ. իսկ Այրեցեալին և Սառուցեալ

գօտիներուն միջեւ գտնուած մասերուն մէջ՝ տաքն ու ցուրտը չափաւոր ըլլալուն համար՝ կը կոչուին Բարեխառն գօտիներ։

Գունտը կը բաժնուի երկու մասերու, երբ հիւսիսէն ի հարաւ կտրուած նկատուի՝ կ'ունենանք երկու կիսագունտ՝ Արեւելեան և Արեւմտեան կիսագունտեր։

Ցամաքին բաժանումները

5. Երկրիս մակերեւոյթին երեք մասը Ջուր և մէկ մասը Ցամաք է։ Ցամաք երկիրները երկու որոշ մասերու կը բաժնուին. — Առաջինը կը պարունակէ ԵՒՐՈՊԱ, ԱՍԻԱ և ԱՓՐԻԿԷ՝ որոնք կը կոչուին Հին Աշխարհ, որովհետեւ շատ հին դարերէ ի վեր մարդոց ծանօթ են։ Երկրորդը կը պարունակէ ԱՄԵՐԻԿԱ և ՈՎԿԷԱՆԻԱ, որոնք կը կոչուին նաև Նոր Աշխարհ, ինչու որ ասկից դեռ 400 տարի առաջ գտնուեցան։

6. Այսպէս՝ Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա և Ովկէանիա Երկրիս ցամաքները կամ հինգ մասերը կը կոչուին։

Հին Աշխարհը կը գտնուի Արեւելեան և Նորը՝ Արեւմտեան կիսագունտին մէջ։

Ցամաքին այլ եւ այլ ձեւերը

7. Ամէն կողմէն ջրով շրջապատուած ցամաք մը Կղզի կը կոչուի։ Իրարու մօտ գտնուած շատ մը կղզիներու խումբը՝ Արշիպեղագոս կամ Կղզեխումբ կ'ըսուի։

8. Թերակղզի կ'ըսեն այն ցամաքին որ, երեք

կողմէն ջրով շրջապատուած և միայն մէկ կողմէն հողի նեղ կտորով մը ցամաքին հետ միացած է։ Իսկ



Արշիպեղագոս

Թերակղզին ցամաքին կապող այն հողի նեղ կտորն ալ Պարանոց կը կոչուի։

9. Գլուխ կ'ըսուի ցամաքի մ'այն մասը որ դէպ ի



Հրուանդան

ծով երկնցած է։ — Եթէ Գլուխը բարձր ու լեռնային ըլլայ՝ կ'ըսուի Հրուանդան։

10. Երկրիս տափարակ և ընդարձակ տեղուանքը

Դաշտ. իսկ աւազուտ և անբեր դաշտերը կը կոչուին Անապատ։ Ովասիս անունը կուտան անապատներու

Անապատ

մէջ գտնուած ջրարբի և բարեբեր տեղերուն։

11. Զոր կ'ըսուին երկու լերանց մէջտեղը գըտնուած խորունկ տեղերը։

ԴԱՍ Գ.

1. Լեռ կ'ըսուին երկրիս վրայ գտնուած հողէ

Լեռնաշղթայ

կամ քարէ բնական բարձրութիւնները։ Եթէ լեռը փոքր ըլլայ, կ'ըսուի Բլուր։

2. Լեռնաշղթայ կամ Գօտի լեռանց կ'ըսուին իրարու միացած լեռներու երկար շարքերը։

3. Հրաբուխ կը կոչուին այն լեռներն՝ որոց խորը



Հրաբուխ լեռ

գտնուած հանքերն ու կազերը ատեն ատեն բռնկելով՝ լերան գագաթը կը ծակեն և կրակ, մուխ ու քարեր դուրս կը սրոթկան։ Այդ հրաբուխ լերան բերանը կը կոչուի Խառնարան և անկէց դուրս վազած հեղուկն ալ՝ Լաւա։

4. Հովիտ կ'ըսուին երկու լերանց՝ գօտիներու միջև տարածուած դաշտերը։

5. Կիրճ կ'ըսուին լերանց շղթաներու մէջ գըտնուած նեղ և օձապտոյտ անցքերը։

6. Այր կամ Անձաւ (մաղարա) կ'ըսուին լեռներու կամ ժայռերու մէջ գտնուած բնական մեծամեծ ծակերը։

Ջրոյ բաժանումներ

7. Ինչպէս որ տեսանք, երկրիս մակերեւոյթին երեք մասը ջուր և մէկ մասը միայն ցամաք է։ — Աղի ջուրի ընդարձակ տարածութիւններն կը կոչուին Ծով, իսկ մեծամեծ ցամաքներ չրջապատող մեծատարած ծովերն ալ՝ Ովկէանոս կ'ըսուին։

8. Հինգ Ովկէանոս կայ։ Արևելեան, Խաղաղական կամ Մեծ Ովկէանոս, Արջային, Հակարջային և Հնդկաց Ովկէանոս։

9. Ծոց կ'ըսուի ջուրին դէպ ի ցամաք ներս մտած



Ծոց

մասը։ — Իսկ եթէ ծոցը լայն բերան կ'ըսուի Ծովածոց, փոքրիկ ծոցերուն ալ Խորշ անունը կուտան։

10. Նեղուց կ'ըսուի ջուրի այն նեղ կտորին որ

երկու ծով կամ երկու ովկիանոս իրար կը միացնէ ու երկու ցամաք իրարմէ կը բաժնէ։ — Եթէ նեղուցը շատ լայն ըլլայ՝ կ'ըսուի Դրանցք։



Նեղուց

11. Գետ կ'ըսուին ցամաքին վրայէն շարունակ վազելով ծովը թափող այն անոյշ ջուրերը՝ որոնք լե-



Գետաբերան

բանց խորերէն կը բղխին։ Գետի մը բղխած տեղը կը-

ուի Ակ. իսկ ծովը թափած տեղը՝ գետին Բերանը։

Ջրվէժ

12. Երբոր գետ մը յանկարծ բարձր տեղէ մը վար թափի, կ'ըսուի Ջրվէժ։

13. Լիճ և լճակ. — Լիճ կ'ըսուին ցամաքին մէջ գտնուած ջուրի անշարժ տարածութիւնները։ — Երբ-լիճ մը շատ փոքրիկ է՝ Լճակ կ'ըսուի։

ԴԱՍ Դ.

Մարդկային ցեղեր

1. Մարդիկ սփռուած են Երկրիս հինգ մասանց մէջ և կը հաշուուին 1,400 միլիոնի չափ։ Բայց իրենց գոյնին և մարմնոյն կազմութեան համեմատ՝ կը բաժնուին հինգ գլխաւոր ցեղերու և են 1. Սպիտակ կամ Կովկասեան ցեղ, 2. Դեղին կամ Մոնկոլեան ցեղ, 3.

Թխագոյն կամ Մալայեան ցեղ, 4. Եվրոպական կամ Խափշիկ ցեղ, 5. Պղնձագոյն կամ Ամերիկեան Հնդիկ

Կովկասեան ցեղ

Խափշիկ ցեղ

Մոնկոլեան ցեղ

Ամերիկեան Հնդիկ

2. Քաղաքակրթեալ կ'ըսուին այն ազգերը՝ որոնք մեծ ընկերութեամբ կ'ապրին, ունին օրէնք, կանոնաւոր բնակարաններ և կզբաղին արհեստներով, վաճառականութեամբ և ն։ Իսկ Վայրենի կամ Բարբարոս կ'ըսուին այն մարդիկ՝ որք առանձին առանձին կ'ապրին խրճիթներու կամ քարայրներու մէջ և իրենց զբաղումն է աւազակութիւն կամ որսորդութիւն։

3. Աշխարհիս վրայ երեք գլխաւոր կրօնք կայ. Քրիստոնէութիւն, Մահմէտականութիւն և Մովսիսականութիւն։ Այս երեք կրօնքներուն հետեւողներն ալ կը հաւատան միակ և ճշմարիտ Աստուծոյ։

4. Կռապաշտ կ'ըսուին այն ժողովուրդներն՝ որոնք քարէ կամ մետաղէ բազմաթիւ արձաններու կ'երկրպագեն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԵՒՐՈՊԱ

ԴԱՍ Ե.

1. ԵՒՐՈՊԱ կը գտնուի Արեւելեան կիսագունտին մէջ։ Թէեւ երկրիս հինգ մասանց փոքրագոյնը՝ բայց ամենէն զօրաւոր ու քաղաքակրթեալն է։

2. Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս, արեւելքէն՝ Ասիա, հարաւէն՝ Կովկասու գօտին, Սեւ ծով, Միջերկրականն ու Ճիպրալթարի նեղուցը, արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս։

3. *Եւրոպա ունի* 10,180.000 *քիլմ. քառ. տարածութիւն և* 370,000.000*ի չափ բնակիչ՝ որոնք կը բաժնուին երեք մեծ ընտանիքներու*, Լատինական, Գերմանական *և* Սլաւական։

Եւրոպիոյ ջրոյ բաժանումները

4. *Եւրոպիոյ ծովերն են՝* Սպիտակ *և* Քարայի *ծով՝ որոնք ձեւացած են Սառուցեալ ովկիանոսէն։*

5. *Ատլանտեանէն ձեւացած են* Հիւսիսային, Մանշ, Պալթիկ, Իրլանտայի *և* Միջերկրական *ծովերը։ Այս վերջինէն ձեւացած են՝* Ադրիական, Յոնիական, Արշիպեղագոս, Մարմարա, Սեւ *և* Ազովու *ծովերը*(1)։

6. *Եւրոպիոյ գլխաւոր ծոցերն են՝* Պոթնեան, Ֆինլանտեան, Բիսկայի *և* Տանցիկի *ծոցերը՝ Պալթիկ ծովէն ձեւացած։ Հիւսիսային ծովէն ձեւացած է՝* Զուիտէրզէի *ծոցը։ Ս. Գէորգայ և Հիւսիսային ջրանցքները՝ Իրլանտայի ծովուն և Ատլանտեանի միջեւ։ Ատլանտեան ովկիանոսէ կազմուած են՝* Կասթեանի *մեծ ծոցէն ի զատ՝ նաեւ* Պրիսդոլի *ծոցը։*

7. *Միջերկրական ծովէն ձեւացած են՝* Լիոնի, Ճէնովայի *և* Նաբոլիի *ծոցերը։ — Անդրիականէն ձեւացած են՝* Վենետկի *և* Թրիէստէի *ծոցերը. — Յոնիականէ՝* Տարէնտոնի *և* Լէբանդի *ծոցերը։ — Արշիպեղագոսի մէջ կան՝* Նաւարէնի, Աթէնքի, Սէլանիկի, Էնոսի *և* Սարոսի *ծոցերը։ — Սեւ ծովէն ձեւացած են՝* Պուրկասի, Վառնայի *և* Օտեսայի *ծոցերը։*

8. *Եւրոպիոյ ովկիանոսներուն և ծովերուն միջեւ կը գտնուին հետեւեալ գլխաւոր նեղուցները։*

---

(1) *Կասպից ծովը թէեւ լիճ մ'է. բայց շատ մեծ ըլլալուն համար ծով կ'ըսուի։*

Սմակէր-ռաֆ, Քաբէկաղ, Սուցն և Գէլբ՝ *Պալթիկ ու Հիւսիսային ծովերուն միջեւ։*

Բա-տր-ֆալէի Նեղուց, *Հիւսիսային և Մանչի ծովերուն միջեւ։*

Ճիպրալթարի Նեղուց՝ *Ատլանտեան ովկէանոսի և Միջերկրականի միջեւ։*

Մեսինայի Նեղուց՝ *Միջերկրական և Յոնիական ծովերուն մէջ տեղ։ — Օթրանթի ջրանցք՝ Ադրիականի և Յոնիականի միջեւ։ — Կորնթոսի ջրանցք՝ Յոնիականի և Արշիպեղագոսի միջեւ։*

Չանակ-ֆալէի Նեղուց՝ *Արշիպեղագոսի և Մարմարայի միջեւ։*

Պոսֆորի *կամ* Կ. Պոլսոյ Նեղուց՝ *Մարմարայի և Սեւ ծովու միջեւ։*

Կերչի Նեղուց՝ *Սեւ և Ազովու ծովերուն միջեւ։*

9. *Եւրոպիոյ գլ. լիճերն են՝* Լատոկա, Օնէկա, Իլմէն, Բէյփուս՝ *Ռուսիոյ մէջ։ —* Վէնէր, Վէթէր, Մէլար՝ *Շուէտի մէջ։ —* Ճինէվրա, Քոստանցա, Յուրիխ, Լուչէռնա, Նէօշաթել՝ *Զուիցերիոյ մէջ։ —* Մանիորէ, Կոմո, Կարտա՝ *Իտալիոյ մէջ։ —* Պալաթոն՝ *Աւստրիոյ մէջ։*

10. *Եւրոպիոյ երեւելի գետերն են՝* Փէչորա՝ *կը թափի Սառ. ովկէանոս։*

Պալթիկի մէջ կը թափին՝ Թորնէա, Նէվա, Տուինա, Տվինա, Նիէմէն, Վիսթուլա *և* Օտէր։

Հիւս. ծովը կը թափին՝ Էլպա, Վէզէր, Հոնենոս, Մէօզ, Էսֆօ *և* Թամիզ։

Ֆռանսայէն Մանչի ծովը կը թափի՝ Սէն *գետ։*

Ատլանտեանի մէջ կը թափին՝ Լուարա, Կարոն, Մինիոն, Տուրո, Թակօ, Կուատիանա *և* Կուատալքիվիր։

Միջերկրական կը թափին՝ Էպրո, Ռոն, Արնս *և* Տիբերիս։

Ադրիական կը թափին՝ Բo և Ասիճէ։

Արշիպեղագոս կը թափին՝ Վarsar և Մարիձա։

Սեւ ծով կը վազեն՝ Դանուբ, Փրուբ, Տնիեսբէր և Տնիեբէր։

Տoն՝ *կը թափի Ազովու ծովը։*

Վoլկա և Ուրալ՝ *կը թափին Կասպից ծով։*

ԴԱՍ Զ.

Ցամաքի բաժանումները

1. *Եւրոպա ունի 4 մեծ ու երկու փոքր թերակղզիներ։ — Զորս մեծերն են՝* Սքանդինավեան ցամաքակղզի (*Շուէտ-Նորվէկիա*), Պիրէնեան ցամաքակղզի (*Սպանիա-Փորթուկալ*), Ապէնինեան ցամաքակղզի (*Իտալիա*) և Պալքանեան ցամաքակղզի՝ *Եւրոպիոյ հարաւային արեւելեան կողմը։*

2. *Երկու փոքրերն են՝* Նուբլանտ՝ *Պալթիկ և Հիւս. ծովերուն միջեւ, և* Խրիմ՝ *Սեւ ծովու մէջ։*

Եւրոպիոյ մէջ մէկ պարանոց կայ միայն՝ այն է Փերեքոփ՝ *որ Խրիմը ցամաքին կը միացնէ։*

3. *Եւրոպիոյ գլ. կղզիներն են,* Լoֆֆoտէնի *Արշիպեղագոս,* Իսլանտա, Անգլիա, Իրլանտա *և ասոնց շրջակայ փոքր Արշիպեղագոսները։ Ատլանտեան ովկէանոսի մէջ. —* Ալանտ, Էoզէլ, Կoբլանտ, Լալանտ, Շէբլանտ *և* Ֆիoնիա՝ *Պալթիկ ծովուն մէջ. —* Բալէարեան *Արշիպեղագոս,* Քoրսիքա, Սարտէնիա, Սի-

Կիլիա, Էլպա, Մալթա, Կրեսէ, և Մorա՝ *Միջերկրականի մէջ։*

Քorֆու, Սանդա-Մաւրա, Քէֆալօնիա և Զանդա՝ *Յոնիականի մէջ։*

Արշիպեղագոսի մէջ կը գտնուին՝ Նէկրոբոնդ *և ուրիշ շատ մը մանր կղզիներ։*

Եւրոպիոյ գլ. Լեռնագօտիներն են՝ Քէօլէն *կամ* Սմանցիցալեան *լերինք՝* Շուէտ-Նորվէկիոյ *միջեւ։*

Ուրալ *լերինք՝ Եւրոպիոյ արեւելեան կողմը։ —* Կովկաս *լերինք՝ Սեւ և Կասպից ծովերուն միջեւ։*

Պիրէնեան *լերինք՝ Սպանիոյ և Ֆռանսայի միջեւ։*

Ալպեան *լերինք՝ Ֆռանսայի, Զուիցերիոյ և Իտալիոյ սահմաններուն վրայ։*

Ապէնինեան *լերինք՝ կ'երկարին Իտալիոյ հիւսիսէն ի հարաւ։*

Կարպաթեան *լեռնագօտի՝ Մաճառիստանի և Աւստրիոյ միջեւ։*

Պալքան *լերինք՝ Եւրոպական Թուրքիոյ հիւսիսային և* Տինատեան *լերինք՝ արեւմտեան կողմը։*

Եւրոպիոյ մէջ երեք գլխաւոր հրաբուխ կայ։ Վէսուվ՝ *Իտալիոյ մէջ,* Եսնա՝ *Սիկիլիոյ մէջ,* Հէքլա՝ *Իսլանտա կղզւոյն մէջ։*

Գ. *Եւրոպիոյ մեծ հրուանդաններն են՝* Նորս-Քին՝ *Շուէտ հիւսիսային կողմը։*

Լէնցսէնց՝ *Անգլիոյ հարաւային արեւմտեան կողմը։*

Ֆինիսդէր՝ *Սպանիոյ արեւմտեան կողմը։*

Ս. Վիչէնցիոս՝ *Փորթոկալի հարաւային ծայրը։ —* Էմինէ՝ *Եւրոպական Թուրքիոյ արեւելեան կողմը,* Մաթափան՝ *Յունաստանի հարաւային կողմը։*

ԴԱՍ Է.

Կլիմայ, Բոյսք, Կենդանիք եւ Հանք

7. Եւրոպիոյ հիւսիսային կողմերը ցուրտ, միջին մասերը բարեխառն և հարաւային կողմերը բաւական տաք կ'ընեն։ Եւրոպիոյ մէջ կան բարեբեր երկիրներ որոնք աղէկ մշակուած են և կ'արտադրեն ցորեն, գարի, գետնախնձոր, ճակնդեղ, որթատունկ, ձիթենի բամպակ, ծխախոտ, բրինձ, առատ և աղնիւ մրգեղէններ, նարինջ լեմոն և այլն։

8. Եւրոպիոյ մէջ շատ բազմացած են ընտանի և կաթնատու կենդանիները։ Նոյնպէս ծովերու մէջ կը գտնուին տեսակ տեսակ համով առատ ձուկեր։

9. Եւրոպիոյ այլ և այլ երկիրներուն մէջ առատօրէն կը գտնուին երկաթի, հանքածխոյ, պղնձի, անագի, ոսկւոյ, անդկի, ծծումբի, զինկի և մարմարիոնի հանքեր։

10. Եւրոպա բաժնուած է 20 տէրութեանց. — Հիւս. մասին մէջ կը գտնուին՝ Նուէս-Նորվէկիա, Ռուսիա, Մեծն Բրիտանիա և Տանիմարքա։

Միջին մասը կը պարունակէ Ֆռանսա, Պելճիքա, Հոլանտա, Գերմանիա, Զուիցերի և Աւստրո-Հունգարիա։

Հարաւային Եւրոպա կը պարունակէ Փորթուկալ, Սպանիա, Իտալիա, Եւրոպական Թուրքիա, Ռումանիա, Սերպիա, Պուլկարիա, Գարատաղ և Յունաստան։

11. Եւրոպական կառավարութեանց ձեւը Սահմանադրապետութիւն է։ Ասոնց մէջ Ֆռանսա և Զուիցերի Հանրապետութիւն, իսկ Օսմ. Պետութիւնը և Ռուսիա՝ բացարձակ Միապետութիւններ են։

———

ԴԱՍ Բ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ԱՆԳԼԻԱ կամ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

ԱՆԳԼԻԱ կամ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ կը տարածուի Եւրոպիոյ հիւս. արեւմտեան կողմը և բաղկացած է երեք գլխաւոր մասերէ. 1. Բուն ԱՆԳԼԻԱ, 2. ՍԿՈՎՏԻԱ, 3. ԻՐԼԱՆԴԱ։ Ասոնցմէ զատ կան շատ մը մանր կղզիներ։ Անգլիոյ արեւմտեան կողմը կայ՝ Կալլէսի փոքր երկիրը։

Անգլիոյ օդը խոնաւ է։ Հողը թէև ոչ այնքան բարեբեր, բայց շատ լաւ մշակուած է։ Ունի հանքածուխի ու երկաթի առատ հանքեր։

Տարածութիւնն է 315,000 քիլմ. քառակուսի, իսկ բնակչաց թիւն է 39,000,000։

Մայրաքաղաքն է ԼՈՆԴՈՆ որ շինուած է Թայմզ գետին վրայ և ունի 5,000,000 բնակիչ։ Լոնտոն իւր բազմամարդութեամբ. ընդարձակ առեւտուրովը ու գեղեցիկ ձեռագործներով՝ աշխարհիս ամենէն մեծ քաղաքներէն մէկն է։

Անգլիոյ ներքին ամենէն նշանաւոր քաղաքներն են՝ Մանչէսդր, Եորք, Լիսս, Պէրմինկհէմ, Նիւքէսըլ, Օքսֆորդ, Շէֆֆիլտ և այլն։

Գլխաւոր նաւահանգիստներն են՝ Լիվրբուլ, Պրիսթըլ, Տուվր, Քարտիֆ, Փորթսմութի և այլն։

Սկովտիոյ գլխաւոր քաղաքներն են՝ ԷՏԻՄՊՈՒՐԳ, և Կլասկո։ Իրլանտայի գլ. քաղաքներն են՝ ԴԲՊԼԻՆ Պելֆասդ և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Անգլիոյ կտաւեղէնները, բրդեղէնները երկաթէ ու պողպատէ գործուածքները շատ յարգի են։ — Անգլիացիք ճարտարագէտ, վաճառական և ծովային մեծ ազգ մ'են։ Նոյնպէս Եւրոպայէ դուրս, Անգլիա երկրիս չորս մասանց մէջ ընդարձակ և հարուստ կալուածներ ունի։

Անգլիացիք կրօնիւ բողոքական՝ իսկ Իրլանտացիք կաթոլիկ են։

ԴԱՍ Թ.

ՏԱՆԸՄԱՐՔԱ

ՏԱՆԸՄԱՐՔԱ կամ ԴԱՆԻԱ կը գտնուի Հիւսիսային և Պալթիկ ծովերուն միջեւ, իսկ հարաւէն սահմանն է Գերմանիա։

Տանըմարքա երկու մասերէ կը բաղկանայ, 1. Եութլանդ թերակղզին և Դանիական կղզիները՝ Պալթիկ ծովուն մէջ։ Տանըմարքա տափարակ ու խոնաւ երկիր մ'է. միայն կղզիները բարեբեր են։

Տանըմարքա ունի 38,000 քիլոմ. քառ. տարածութիւն ու 2,000,000 բնակիչ

Մայրաքաղաքն է ԿՈՓԷՆՀԱԿ, Զէլանտ կղզւոյն վրայ՝ գեղեցիկ ու բանուկ նաւահանգիստ է։ Երեւելի են նաեւ Հելսինկոր, Ալպորկ, Վիպորկ, Արհիւս և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Տանըմարքացիք աշխատասէր և կրթեալ մարդիկ են։ Ձեռագործ, առեւտուր և դաստիարակութիւն բաւական յառաջ գացած են իրենց մէջ։

Տանըմարքայի կը վերաբերի Իսլանցա հրաբխային կղզին, ու Ամերիկայի մէջ ալ՝ Կրօէնլանցա։

Տանըմարքացիք կրօնիւ բողոքական են։

ԴԱՍ Ժ.

ՕՔԱՆՏԻՆԱԻԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՇՈՒԷՏ — ՆՈՐՎԷԳԻԱ

Սքանտինաւիա Եւրոպայի հիւսիսակողմը մեծ ցամաքակղզի մ'է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սառ. Ովկէանոս, արեւելքէն՝ Ռուսիա և Պալթիկ ծով, հարաւէն՝ Սքակէրրաքի նեղուց, արեւմուտքէն Ատլանտեան Ովկէանոս և Հիւսիսային ծով։

Սքանտինաւիա լեռնոտ երկիր մ'է, հիւս. կողմերը սաստիկ ցուրտ կ'ընէ։ Ունի գեղեցիկ անտառներ և պղնձի ու երկաթի հարուստ հանք։

Տարածութիւնն է 775,000 քիլմ. քառակուսի. իսկ բնակչաց թիւն է 6,500,000, որու 4,500,000ը Շուէտի և մնացեալն ալ Նորվէկիոյ մէջ է։

Մայրաքաղաքն է ՍԴՈՌՀՈԼՄ, որ Մէլար լճին մօտ գուարճալի ու ծաղկեալ քաղաք է։ Երեւելի են նաեւ Կոբէնպուրկ, Ուփսալա, Քարլսքրոնա, Քալմար եւայլն։

Նորվէկիոյ մայրաքաղաքն է ՔՐԻՍՏԻԱՆԻԱ համանուն ծոցին խորը, ունի երեւելի համալսարան և ընդարձակ վաճառականութիւն։ Երեւելի են նաև Պէրժէն և Տրոնդհայմ։

ԳԻՏԵԼԻՔ

Սքանտինաւիոյ բնակիչք պարկեշտ, ուսեալ և շատ աշխատասէր են։ Երկրին գլ. հարստութիւններն են չինութեան աղնիւ փայտ, պղինձ, երկաթ և Մօրի ձկան իւղ։ Այս երկրին մէջ կը գտնուի հիւսիսային եղնիկ կոչուած կենդանին՝ զոր տեղացիք իրենց Բալխիրները քաշելու կը գործածեն։ Այս երկրին կը վերաբերին Բալէարեան կղզիք։

Սքանտինաւիացիք կրօնիւ բողոքական են։

ԴԱՍ ԺԱ.

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսիա Եւրոպիոյ ամենէն ընդարձակ երկիրն է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սառ. ովկիանոս, արեւելքէն Ուրալ լերինք և Ուրալ գետ. հարաւէն՝ Կասպից ծով, Կովկաս լերինք ու Սեւ ծով. — Արեւմուտ-

քէն՝ Շուէտ, Պալթիկ ծով, Գերմանիա, Աւստրիա և Ռումանիա։

Ռուսիոյ հիւսիսային կողմերը սաստիկ ցուրտ կ՚ընեն. շատ տեղ կը տեսնուին սառած ընդարձակ ճահիճներ. իսկ հարաւային կողմերուն կլիման բարեխառն և հողը բարեբեր է։

Ռուսիա ունի 5,300,000 քիլմ. քառակուսի ընդարձակութիւն և 95,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Ս. ԲԷԹԷՐՍԲՈՒՐԳ որ Նէվա գետին վրայ ընդարձակ և փառաւոր քաղաք է։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Մոսկուա, Վարշաւիա, Քազան, Քիէվ, Օրէնպուրգ, Նիժնի-Նովգորոտ, Բոլդավա և այլն։

Գլխաւոր նաւահանգիստներն են. Օտէսա, Ռիգա, Քրոնշդատ, Աժտէրխան, Նիքոլայէվ, Թանկարոգ, Սեւաստաբոլ և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Ռուսիա կ՚արտադրէ մեծ առատութեամբ ցորեն, գարի և հաճար։ Ունի նաեւ ոսկւոյ, բլաթինի, պղընձի ու երկաթի հարուստ հանքեր։ Անուանի է այս երկրին խաւեարը, առագաստի կտաւը, պարանը, մուշտակը, մորթը և այլն։

Ռուսիա Ասիոյ մէջ ունի ընդարձակ երկիրներ։

Ռուսիոյ մէջ այլ և այլ ազգութիւններէ բնակիչներ կան։ Ռուսք յունադաւան են։

ԴԱՍ ԺԲ.

ՖՐԱՆՍԱ

ՖՐԱՆՍԱ կը գտնուի Եւրոպիոյ արեւմտեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Մանշի ծով, արեւելքէն՝ Պելճիքա, Գերմանիա, Զուիցերի և Իտալիա. հարաւէն՝ Միջերկրական ծով և Պիրէնեան լերինք. Արեւմուտքէն Ատլանտեան ովկիանոս։

Ֆռանսա ունի բարեխառն կլիմայ, բարեբեր հող և առատ բուսաբերութիւն։ Կան նաեւ ոչնկի, հանքածխոյ ու երկաթի հանքեր։

Ֆռանսա ունի 529,000 քիլմ. քառակուսի տարածութիւն ու 36,000,000 բնակիչ։ Երկիրը բաժնուած է 89 գաւառներու։

Մայրաքաղաքն է ԲԱՐԻԶ, Սէն գետին վրայ, Եւրոպիոյ ամենէն գեղեցիկ, հարուստ ու ծաղկեալ քաղաքներէն մին է։ Փարիզի մէջ կը գտնուի փառաւոր շէնքեր, թանգարաններ, երեւելի վարժարաններ, գեղեցիկ զարդեղէններ ու զուարճալի գբօսատեղիներ։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Լիոն, Օռլէան, Լիլ, Պրզանսօն, Թուլուզ, Ռուան, Նանսի, Ամիէն, Թուռ, Ավինեօն և այլն։

Երեւելի նաւահանգիստներն են. Մարսիլիա, Թուլոն, Պորտօ, Քալէ, Լը-Հավռ, Պրէսթ, Շէռպուռ, Նանդ և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Ֆռանսա շատ քաղաքակրթեալ երկիր մ'է։ Ուսում, ձեռագործ, ճարտարութիւն, առեւտուր շատ

ծաղկած են։ Անուանի են Ֆռանսայի զարդեղէնները, մետաքսեղէնները, գինին և այլն։ Ֆռանսա Եւրոպայէ դուրս բաւական կալուած ունի, իսկ Եւրոպայի մէջ իրեն կը պատկանի Քորսիկա կղզին։

Ֆռանսացիք կաթոլիկ են։

ԴԱՍ ԺԳ.

ՊԵԼՃԻՔԱ

ՊԵԼՃԻՔԱ Հիւս. ծովուն եզերքը փոքր՝ բայց շատ յառաջադէմ երկիր մ'է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Հոլանտա և Հիւսիսային ծով. արեւելքէն՝ Գերմանիա, հարաւէն՝ Ֆռանսա և արեւմուտքէն՝ Հիւս. ծով։

Պելճիքայի օդը բարեխառն է, հողը բարեբեր և շատ աղէկ մշակուած ըլլալով՝ բաւական քանակութեամբ արմտիք կ'արտադրէ։ Ունի հանքածխոյ, զինկի, երկաթի հարուստ հանքեր։ Պելճիքա ունի 30,000 քիլոմ. քառ. տարածութիւն և 6,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՊՐԻՒՔՍԷԼ. Էսքօ գետին վրայ շինուած վաճառաշահ և փառաւոր քաղաք է։ Մէջը կը գտնուին Եբեւելի Մայր եկեղեցի, թագաւորական փառաւոր պալատ, գործարաններ և այլն։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Պրուժ, Կանտ։ Լիէժ, Նամիւր, Վէրվիէ և այլն։ Իսկ Անվէրս, Էսքօ գետին վրայ անուանի նաւահանգիստ է։

ԳԻՏԵԼԻՔ

Պելճիքա իւր գեղեցիկ ձեռագործներով, իւր ճարտարութեամբ. ընդարձակ առեւտուրովն՝ Եւրո-

պայի ամենէն նշանաւոր և քաղաքակրթեալ երկիրներէն մէկն է։ Անուանի են այս երկրին կտաւեղէնները, գորգերը, ժանեակները (տանթէլա) մետաքսեղէններն, չուխաները և այլն։

Պէլճիքացիք կաթոլիկ են։

ԴԱՍ ԺԴ.

ՀՈԼԱՆԴԱ

ՀՈԼԱՆԴԱ Հիւսիսային ծովուն եզերքը խոնաւ ու տափարակ երկիր մ'է։ Սահմաններն են հիւսիսէն և արեւմուտքէն՝ Հիւսիսային ծով, արեւելքէն՝ Գերմանիա և հարաւէն՝ Պելճիքա։ Այս երկրին հիւսիսային մասերը շատ տեղ ծովէն ցած ըլլալուն՝ բումբեր կանգնած են երկիրը ողողումէ պահպանելու համար։ Կլիման խոնաւ և փոփոխական է։ Հոլանտա քիչ քանակութեամբ արմտիք կ'արտադրէ։

Հոլանտա ունի 33,000 քիլմ. քառ. տարածութիւն և 4,520,000 բնակիչ։ Մայրաքաղաքն է ՀԱ-ՀԷ կամ ՀԱԱԿ որ գեղեցիկ քաղաք է։

Երեւելի նաւահանգիստներն են. Ամսդերտամ և Ռոթէրտամ։

Ներքին քաղաքներն են. Հարլէմ, Ութրէխ և Լէյտա և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Հոլանտացիք յառաջադէմ և աշխատասէր ազգ մ'են։ Գիտութիւն, արուեստ և ձեռագործ բաւա-

կան յառաջ գացած են իրենց մէջ։ Հոլանտա Եւրոպայէ դուրս կարեւոր կալուածներ ունի։

Հոլանտացիք բողոքական են։

ԴԱՍ ԺԵ.

ՉՈՒԻՑԵՐԻ

ՉՈՒԻՑԵՐԻ փոքր ու լեռնային երկիր մ'է Ֆրանսայի, Գերմանիոյ, Ռուսիոյ և Իտալիոյ միջեւ։ Այս երկրին մէջ կը տարածուին Ալպեանց մէկ մասին բազուկները՝ որոց գլխաւոր գագաթներն են Ս. Պեռնառ, Ս. Կոթառ, և այլն։ Զուիցերի բնական խիստ զուարճալի տեսարաններ և գեղեցիկ գբօսատեղիներ ունի։ Երկրագործութիւնը շատ ծաղկած է այս երկրին մէջ, ունի երկրագործական բերքեր և կաթնառատ անիւ կենդանիներ։ Տարածութիւնն է 41,000 քիլ. քառ. իսկ բնակչաց թիւն է 3,000,000։

Մայրաքաղաքն է ՊԷՌՆ, որ շատ զուարճալի ու փառաւոր քաղաք է։ Երեւելի են. Ճինէվրա, Յուրիխ, Պալ, Նէօշաթէլ, Լուչէռնա, Լօզան, Ֆրիպուրգ և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Զուիցերի թէև փոքր, բայց շատ քաղաքակրթեալ երկիր մ'է։ Արուեստ, ուսում, ձեռագործ, ճարտարութիւն շատ յառաջ գացած են։ Երեւելի են այս

երկրին ժամացոյցները, ոսկիէ ու գոհարեղէն զարդերը, պանիրը, մեռաքսեղէնները, և այլն։

Զուիցերացիք Գերմաններէ, Ֆռանսացիներէ և Իտալացիներէ բաղկացած ժողովուրդ մ'են։

ԳԱՍ ԺԶ.

ԳԵՐՄԱՆԻԱ

ԳԵՐՄԱՆԻԱ Եւրոպիոյ միջին մասին մէջ ընդարձակ կայսրութիւն մ'է։ Սահմաններն են հիւսիսէն Պալթիկ ծով, Տանիմարքա և Հիւս. ծով, արեւելքէն Ռուսիա և Աւստրիա, հարաւէն՝ Աւստրիա և Զուիցերի, արեւմուտքէն՝ Ֆռանսա, Պելճիքա և Հոլանտա։

Գերմանիոյ հիւսիսային կողմերը ցուրտ ու խոնաւ, իսկ հարաւային մասերուն մէջ օդը բարեխառն, հողը բարեբեր և լաւ մշակուած է։ Գերմանիա ամէն տեսակ հանք առատօրէն ունի։ Գերմանիոյ տարածութիւնն է 540,000 քլմ. քառ. և բնակիչն է 50,000 000։

Գերմանիա 4 թագաւորութեանց. 6 Մեծ դքսութեանց և ուրիշ մանր մունր իշխանութիւններու բաժնուած է։

Չորս թագաւորութիւններն են՝ 1. ԲՐՈՒՍԻԱ մայրաքաղաքն է ՊԵՐԼԻՆ, որ շէն ու ծաղկեալ քաղաք մ'է։ 2. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՎԵՐԻՈՅ, մայրաքաղաքն է Միւնիխ։ 3. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԱՔՍՈՆԻՈՅ, մայրաքաղաքն է Տրէզտա։ 4. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՎԻՒՐԹԷՄԲԷՐԳԻ, մայրաքաղաքն է Շտուրկարտ։

Ներքին երեւելի քաղաքներն են՝ Պրէսլաւ, Մակ

տէպուրկ, Քասէլ, Հանովր, Քոլոներ, Ֆրանֆֆորթ, Քարլսրուհէ, Տարմշդաս, Լայպցիգ, Պակէն Մէց, Շբրաղպուրկ՝ Պրունսվիգ և այլն։

Երեւելի նաւահանգիստներն են՝ Համպուրկ, Տանցիկ, Քէօնիկսպէրկ, Քիլ, Պրէմա, Շթէթէն և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Գերմանիա Եւրոպիոյ մեծ տէրութեանց մին է։ Գիտութիւն, ուսում, ճարտարութիւն և ձեռագործ շատ զարգացած են։ Գերմանիոյ շատ մը քաղաքաց մէջ կը գտնուին երեւելի համալսարաններ։

Հիւսիսային Գերմանիոյ բնակիչք՝ բողոքական, իսկ հարաւայիններն ընդհանրապէս կաթոլիկ են։

ԴԱՍ ԺԷ.

ԱՒՍՏՐՕ—ՀՈՒՆԳԱՐԻԱ

ԱՒՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ՝ Գերմանիոյ արեւելեան կողմը ընդարձակ կայսրութիւն մ'է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Գերմանիա, արեւելքէն՝ Ռուսիա, հարաւէն՝ Սերպիա, Ռումանիա, Թուրքիա և Գարատաղ, արեւմուտքէն՝ Ադրիական ծով, Իտալիա, Զուիցերի և Գերմանիա։

Աւստրիա ընդհանրապէս լեռնոտ երկիր մ'է, օդը բարեխառն և հողն ալ աղէկ մշակուած ըլլալով՝ ամէն տեսակ արմտիք կ'արտադրէ։ Աւստրիոյ մէջ կան երկաթի, կապարի, գինկի, հանքածիոյ աղի հանքե-

րէ ի զատ՝ նաեւ ընտանի կենդանիներ։ Իսկ Մաճառիստանի ձին և գինին շատ համբաւաւոր են։

Աւստրօ-Հունգարիա միացեալ տէրութիւնն, ունի 614,000 քիլի. քառ. տարածութիւն և 40,000,000 բնակիչ։ Կը բաժնուի երկու ընդարձակ մասերու՝ բուն Աւստրիա և Մաճառիստան։ Աւստրիոյ մայրաքաղաքն է Վիէննա, Դանուբի վրայ շինուած հոյակապ ու ծաղկեալ քաղաք է։ Մէջը կան փառաւոր շէնքեր ու գեղեցիկ զբօսատեղիներ։

Ներքին երեւելի քաղաքներն են՝ Բրակա, Լէմպէրկ, Պրիւն, Բրաֆովիա, Սալցպուրկ, կրաց, Ինսպրուք եայլն։

Մաճառիստանի մայրաքաղաքն է՝ ՊՈՒՏԱ-ՓԷՇԹ, վաճառաշահ ու ծաղկեալ քաղաք է Դանուբի վրայ։ Երեւելի են նաեւ Տէպրէցին, Շէմնից, Հէրմանշտատ, Մոեաց, Մառիա-Թերիզօբուլ եայլն։

Իսկ Ադրիականի վրայ երեւելի նաւահանգիստներն են՝ Ֆիումէ, Զարա, Բակուզա, նա մանաւանդ՝ ԹՐԻԷՍԹ։

ԳԻՏԵԼԻՔ

Աւստրիա շատ մը գաւառներու բաժնուած ընդարձակ կայսրութիւն մ'է։ Հողագործութիւն, ձեռագործ, ճարտարութիւն, առեւտուր և դաստիարակութիւն բաւական ծաղկած են։ Այս երկրին մէջ բացի Գերմանացիներէ և մաճառներէ՝ կան նաեւ զանազան ազգութիւններ բնակիչներ։ Կաթոլիկ, բողոքական և յունադաւան ազգութիւններ կան։

ԳԼԽ ԺԷ.

ՍՊԱՆԻԱ

ՍՊԱՆԻԱ Փորթոկալի հետ՝ Եւրոպիոյ հարաւային երեք մեծ ցամաքակղզիներէն մին կը կազմէ։ Սահմաններն են հիւսիսէն՝ Ատլանտեան ովկիանոս և Ֆրանսա, արեւելքէն՝ Միջերկրական ծով, հարաւէն՝ Ճիպրալթարի նեղուց, արեւմուտքէն՝ Փորթոկալ և Ատլանտեան ովկիանոս։

Սպանիա լեռնոտ երկիր մ'է. ունի խոր և ընդարձակ գետեր, պարարտ հող՝ բայց ազէկ մշակուած չէ։ Գլխաւոր բոյսերն են նարինջ, լիմոն, որթատունկ, ձիթենի, գեղեցիկ պտուղներ, արմաւ ևն։ Ունի նաեւ այլ և այլ հանքեր և Մէրինոս ըսուած ոչխարը։ Սպանիա ունի 500 000 քիլմ. քառ. տարածութիւն եւ 17,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՄԱԴՐԻԴ որ գեղեցիկ քաղաք է, ունի երեւելի շէնքեր։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Սարակոսա, Սալամանքա, Վալլատոլիտ, Սանդիակո, Վալէնցա, Սէվիլ, Կրանատա, Քորտովա և այլն։

Անուանի նաւահանգիստներ են. Պառչէլոնա, Կարթագինէ, Քատիքս, Մալակա, Սանդանտէր, Ալիանտէ և այլն։ Իսկ Ճիպրալթար պատերազմական նաւահանգիստը կը պատկանի Անգղիոյ։

ԳԻՏԵԼԻՔ

Սպանիա ժամանակաւ շատ ծաղկեալ ու զօրաւոր

տէրութիւն մ'էր։ Երեւելի են այս երկրին գինիները, Մէրիսնոս անուն ոչխարը, գեղեցիկ պտղատու ծառերը, հարուստ հանքերը եւայլն։ Սպանիոյ կը վերաբերին Միջերկրականի մէջ Բալէարեան կղզիները։ Նոյնպէս Սպանիա Եւրոպայէ դուրս՝ բաւական կալուած ունի։

Սպանիացիք կաթոլիկ են։

ԴԱՍ ԺԹ.

ՓՈՐԹՈԿԱԼ

Սպանիոյ արեւմտեան կողմը նեղ ու երկար երկիր մ'է Փորթոկալ։ Այս երկրին ծովեզերքը տաք, իսկ ներսերը բարեխառն են։ Հողագործութիւնը շատ յառաջ գացած չէ։

Փորթոկալ ունի 92,000 քիլմ. քառ. տարածութիւն ու 5,000,000 բնակիչ։ Մայրաքաղաքն է ԼԻԶՊՕՆԱ, Թակո գետին բերանը շինուած գեղեցիկ ու վաճառաշահ նաւահանգիստ է։ Երեւելի են Օ'Բորթօ, Քոիմպրա, Սէպուվալ, Բրակա եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ

Փորթոկէզները հին ատեն շատ երեւելի էին նաւարկութեան մէջ, այնպէս որ իրենք գտան Հնդկաստանի ծովային ճանապարհը և ընդարձակ կալուածներու տիրացան։ Այսօր քանի մը գաղթականութիւններ միայն ունին։

Փորթոկէզք կաթոլիկ են։



Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՃԱԿԱՏԸ

ԳԱՍ Ի.

ԻՏԱԼԻԱ

ԻՏԱԼԻԱ հար. Եւրոպայի երեք մեծ ցամաքակըղզիներէն մէկն է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Ալպեան լերինք, արեւելքէն՝ Աւստրիա, Ադրիական ծով և Օթրանթի ջրանցքը, հարաւէն՝ Յոնիական ծով, արեւմուտքէն՝ Միջերկրական ծով և Ֆռանսա։

Իտալիա լեռնոտ երկիր մ'է, բայց ունի զուարճալի կլիմայ, բնական շատ սիրուն տեսարաններ, բարեբեր հող և հարուստ բոյսեր, ինչպէս որթատունկ, նարինջ, լիմոն, ձիթենի, բամպակ են։ Իտալիա հարուստ հանքեր, և կաթընտու կենդանիներ ալ ունի։ Շատ յարգի է Իտալիոյ մարմարիոնը։

Երկրին տարածութիւնն է 290,000 քառ. քիլոմ. իսկ բնակչաց թիւն է 32.000,000։ Մայրաքաղաքն է ՀՌՈՄ, Տիբերիս գետին վրայ՝ հին ու փառաւոր քաղաք է։ Մէջը շատ մը երեւելի հին շէնքերու մնացորդներ կան, հռչակաւոր է Ս. Պետրոսի հրաշակերտ եկեղեցին։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Ֆիորէնցա, Միլանս, Թուրինս, Ալեքսանդրիա, Պոլոնիա, Բառմա, Մոդէնա, Ռավէնա, Բադուա, Վէրոնա Պէրկամա են։

Գլխաւոր նաւահանգիստներն են. Նաբոլի, Վենետիկ, Ճէնովա, Անքոնա, Պրինտիզի, Լիվոռնո, Բիզա, Տարէնտոն և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Իտալիոյ մէջ գեղարուեստ, ճարտարապետութիւն, երաժշտութիւն շատ յառաջ գացած են։ Նոյնպէս

գինիները, կարագը, աղած ձուկերը, պանիրը, մեռաքսեղէնները, երաժշտական գործիքները և յարդէ գործուածքները մեծ յարգ ունին։

Իտալացիք կաթոլիկ են։

ԴԱՍ ԻԱ.

ՌՈՒՄԱՆԻԱ

ՌՈՒՄԱՆԻՈՅ սահմաններն են հիւսիսէն՝ Աւստրիա, արեւելքէն՝ Ռուսիա և Սեւ ծով, հարաւէն՝ Դանուբ, արեւմուտքէն՝ Աւստրիա և Սերպիա։

Ռումանիոյ կլիման ընդհանրապէս բարեխառն է, բայց կան տեղեր ալ որ վատառողջ են։ Հողը բարեբեր և լաւ մշակուած ըլլալով՝ առատ արմտիք կարտադրէ։ Ռումանիա ունի քարիւղ և հանքային աղ, նոյնպէս կաթընտու կենդանիներ։ Տարածութիւնն է 130,000 քիլմ. քառ. և բնակչաց թիւն է 5,400 000։

Ռումանիա 3 գաւառներու բաժնուած է. Վալաքիա, Մոլտավիա և Տոպրուճա։

Մայրաքաղաքն է ՊՈՒՔՐԷՇ, գեղեցիկ և վաճառաշատ քաղաք է։ Ունի սիրուն դբոսատեղիներ, թատրոններ, և այլն։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Եաս, Թուլչա, Ալեքսանդրիա,

Երեւելի նաւահանգիստներն են. Քէօսթէնճէ, Կալաց, Իպրայիլ, Ճուրճովա, Սուլինա և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Ռումանիոյ մէջ երկրագործութիւնը շատ յառաջ գացած է, մեծ քանակութեամբ դուրս կը ղրկէ արմըտիք, արջառ նոյնպէս առաղձ։ Եւրոպիոյ ամենէն կարեւոր գետերէն մէկը Դանուբ՝ այս երկրին հարաւէն կ'անցնի որ մեծ կարեւորութիւն ունի, ինչու որ հաղորդակցութիւնը կը դիւրացնէ։

Ռումանք յունադաւան են։ Բայց կան նաեւ զանազան ազգութիւններէ բնակիչներ։

ԴԱՍ ԻԲ.

ՍԵՐՊԻԱ

ՍԵՐՊԻԱ Պալքանեան տէրութեանց մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Դանուբ. արեւելքէն՝ Ռումանիա և Պուլկարիա, հարաւէն՝ Թուրքիա և արեւմուտքէն՝ Աւստրիա։ Երկիրը լեռնային ըլլալուն պատճառաւ՝ ձմեռը սաստիկ ցուրա կ'ընէ։ Հողը բարեբեր և բաւական լաւ մշակուած է։

Կ'արտադրէ արմտիք, ծխախոտ և որթատունկ,

Տարածութիւնն է 48,500 քիլմ. քառ. և բնակչաց թիւն է 2,200 000։

Երկրին մայրաքաղաքն է ՊԵԼԿՐԱՏ, Դանուբի վրայ ամուր և վաճառաշահ քաղաք է։

Երեւելի են նաեւ Նիս, Սէմէնտրիա, Փիրոբ և ալն։

Սերպիա երկրագործական երկիր մ'է։ Բնակիչք

աշխատասէր են: Կը վաճառէ բուրդ, արմտիք, խոզ, ծխախոտ և այլն:

Սերպիացիք կրօնիւ յունադաւան են:

ԴԱՍ ԻԳ.

ՄՕՆԹԷՆԷԿՐՕ ԿԱՄ ԳԱՐԱՏԱՂ

ԳԱՐԱՏԱՂ Ադրիականի եզերքը փոքր ու լեռնային երկիր մ'է. հողը քարուտ և անբեր: Այս պատճառաւ իրեն պէտք եղած արմտիքը դուրսէն առնելու ստիպեալ է: Բնակչաց թիւն է 250 000 Մայրաքաղաքն է ՉԷԹԻՆԷ՝ ուր կը բնակի երկրին իշխանը:

Գլխաւոր են Տուլչիճо, Անդիվարի, և Փoտկoրիցա:

Գարատաղցիք գործունեայ և աշխատասէր մարդիկ են: Կրօնիւ յունադաւան են:

ԴԱՍ ԻԴ.

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՐՈՒՄԷԼԻ

Այս երկու գաւառներն ալ Օսմ. Պետութեան հարկատու և անոր գերիշխանութեան ներքեւ են:

Պուլկարիոյ սահմաններն են հիւսիսէն՝ Դանուբ, արեւելքէն՝ Սեւ ծով. հարաւէն Պալքան լերինք և արեւմուտքէն Սերպիա: Այս երկրին մէջ՝ Պալքան

լերանց պատճառաւ՝ ձմեռները սաստիկ ցուրտ, իսկ միւս եղանակաց մէջ բարեխառն է։

Պուլկարիոյ բարեբեր հողը աղէկ մշակուած է և առատօրէն կ՚արտադրէ արմտիք։ Ունի նոյնպէս կա-



Երկրագործ

թընտու ազնիւ կենդանիներ։ Երկրին տարածութիւնն է 63,900 քիլ. քառ. և բնակիչն է 3.000 000։

Մայրաքաղաքն է ՍՕՖԻԱ. հոս կը բնակի երկրին իշխանը։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Վիտին, Շումլու, Թրնովա, Կապրովա, Սիլիսթրէ, Բլէվնա և լն։

Գլխաւոր քաղաքներն են. Վառնա, Սեւ ծովու վրայ, Ռուսճուգ և Նիկոպոլիս՝ Դանուբի վրայ։

Պուլկարները կ՚զբաղին ընդհանրապէս երկրագործութեամբ, հովութեամբ և առեւտրով։

Կրօնքով յունադաւան են։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՐՈՒՄԷԼԻ

Այս վիճակը գաւառը Պալքան լերանց ստորոտը կը տարածուի։ Շատ արգասաւոր երկիր է և առատ արմտիք, պատուական ոչխար ու վարդի իւղ ունի։ Բնակչաց թիւն է 1,000,000։

Գլխաւոր քաղաքն է Ֆիլիպէ, Մարիցա գետին վրայ վաճառաշահ քաղաք։ Երեւելի են նաեւ Թարար-Փազարճիկ, Էսկի-Զաղարա, Գըզանլըգ և այլն։ Պուրկազ նաւահանգիստ է Սեւ ծովու վրայ։

ԴԱՍ ԻԵ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ՝ կարեւոր մէկ մասն է Օսմ. մեծազօր կայսրութեան, որու սահմաններն են հիւսիսէն՝ Գարատաղ, Աւստրիա, Սերպիա և Պուլկարիա, Արեւելքէն՝ Սեւ ծով. հարաւէն՝ Պոսֆորի նեղուց, Մարմարա, Տարտանէլ, Արշիպեղագոս և Յունաստան. արեւմուտքէն՝ Յոնիական ծով, Օթրանթի ջրանցք և Ադրիական ծով։

Եւրոպական Թուրքիա թէեւ լեռնոտ երկիր մ'է, բայց այդ լերանց ստորոտները կը տարածուին ընդարձակ հովիտներ որոց հողին նման արգասաւոր ուրիշ տեղ քիչ կը գտնուի։ Կլիման թէպէտ՝ ձմեռները ցուրտ՝ բայց միւս եղանակներուն մէջ շատ բարեխառն է։ Եւր. Թուրքիայէն կարեւոր գետեր կը հոսին, ինչ-

պէս Մարիցա, Քարասու, Վarsar և ինճէ Քարասու որոնք կը թափին Արշիպեղագոսի մէջ։ Իսկ Ադրիանկան կը թափին Պոյանա, Տրին, Քալամաս և Լն։

Ինչպէս որ ըսինք. Եւր. Թուրքիա ունի շատ բարեբեր հող և կ'արտադրէ առատ ու ընտիր արմտիք. ծխախոտ, որթատունկ, ներկի նիւթեր, բազմաթիւ պտղատու ծառեր. ձիթենի, վարդենի և Լն։ Ասոնց մէջ շատ կան ընդարձակ անտառներ։ Եւր. Թուրքիա կապարի, մարմարիոնի, fromի, պղինձի ու երկաթի հանքեր ունի։ Իսկ կենդանեաց մէջ երեւելի են կովը և մանաւանդ ոչխարը՝ որու ամիսը շատ համեղ և բուրդը յարգի է։

Եւր. Թուրքիա ունի 165,438 քիլմ. քառ. տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Բաժնուած է 7 կուսակալութեանց (վիլայէթ) որք են՝ 1. Կ. Պոլիս, 2. Էտիրնէ, 3. Սէլանիկ, 4. Մանաստիր, 5. Քոսովա, 6. Շքոտրա, 7. Նանեա։

Օսմ. պետութեան մայրաքաղաքն՝ Կ. ՊՈԼԻՍ որ իւր բնական սքանչելի դիրքովն ու գեղեցկութեամբ, աշխարհիս առաջին քաղաքն է (1)։ Բնական հաղարուստ զմայլելի տեսարաններէն ի զատ՝ երեւելի են Այա Սոֆիայի, Սուլթան Ահմէտի, Նուրի Օսմանիի, մզկիթները, Սուլթան Մահմուտի դամբարանը, Մեծ Շուկան, Զինելի Քիոշկը և Նոր Միւզէն։ Կայսերական պալատներուն մէջ ամէնէն փառաւորներն են Տոլմա-Պաղչէի, Զըրաղանի, Պէյլէր-Պէյիի հրաշակերտ շինուածքներն։ Նոյնպէս Սիլտիզի գեղակերտ պալատն՝

---

(1) Տեղեկոն Աշխարհագրութեան մէջ՝ աշակերտը արդէն պէտք է տեսած ըլլայ Օսմ. Մայրաքաղաքին մանրամասնութիւնները։

ուր ընդհանրապէս կը բնակի մեր Օգոստափառ ինքնակալն ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆ։

Եւր. Թուրքիոյ ներքին գլ. քաղաքներն են.

ԷՏԻՐՆԷԻ կուսակալութեան մէջ. — Էտիրնէ կամ Ադրիանուպոլիս, Մարիցա գետին վրայ մեծ ու վաճառաշահ քաղաք է։ Երեւելի են նաեւ Քըրք-Քիլիսէ, Տիմօթիքա, Մուսթաֆա-Փաշա և այլն։

ՍԷԼԱՆԻԿԻ կուսակալութեան մէջ՝

Սէլանիկէն ի զատ՝ որ Եւր. Թուրքիոյ առաջին վաճառաշահ նաւահանգիստն է, կը գտնուին նաեւ, Տրամա, Տէմիր-Հիսար։ Սէրէս և այլն։

ՄԱՆԱՍԹԸՐԻ կուսակալութեան մէջ՝ Մանասթիր կամ Պիթոլիա, ամուր քաղաք է. — Երեւելի են նաև ՍէրՖիջէ, Օխրիտա, Էլպասան, Ֆլօսինա և այլն։

ԿՈՍՈՎԱՅԻ կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են՝ Բրիզրինա, Իփէք և այլն։

ՇԿՈՏՐԱՅԻ կուսակալութեան մէջ՝ Շkոտրա համանուն լճին եզերքը մեծ ու վաճառաշահ քաղաք է։ Երեւելի են նաեւ Քավայա, Աֆ-Հիսար, Ալէսիո և այլն։

ԵԱՆԻԱՅԻ կուսակալութեան մէջ՝ Եանիա, համանուն լճին մօտ մեծ ու ծաղկեալ քաղաք է. — Երեւելի են նաեւ Էրկէրի, Պէրաթ, Մէցօվօ և այլն։

Եւրոպական Թուրքիոյ գլ. նաւահանգիստներն են.

Սիլիվրի և Ռոտոսթօ՝ Մարմարայի վրայ։

Կէլիպոլու՝ համանուն նեղուցին վրայ։

Տէտէ Աղաճ, Գավալա, Էնոս, Եէնիճէ, ՕրՖանօ և մանաւանդ Սէլանիկ, կը գտնուին Արշիպեղագոսի վրայ։

Արեւմտեան կողմը՝ Յոնիականի և Անդրիականի վրայ կը գտնուին՝ Բրէվէզա, Բարկա, Ավլօնա, Արազ կամ Տուրացցօ և այլն։



ԱՅԱ ՍՈՖԻԱ ՄԶԿԻԹԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ

ԳԻՏԵԼԻՔ

Ինչպէս որ տեսանք, Եւր. Թուրքիա իւր բնական գեղեցիկ դիրքով, իւր բազմատեսակ հարստութիւններովն աշխարհիս առաջին կարգի երկիրներէն մին է։

Եւրոպական Թուրքիա օտար երկիրներու կը վաճառէ արմտիք, ծխախոտ, գինի, բուրդ, մորթ, մուշտակ, վարդի իւղ, բամպակ և այլն։

Հողագործութիւն, տեղական ձեռագործներ, երկաթուղեաց շինութիւնք հետզհետէ յառաջ երթալու վրայ են՝ ՍՈՒԼԹԱՆ ԱԶԻԶ-ԻԲՆ-ՀԱՄԻՏԻ նման իմաստուն և աշխարհաշէն թագաւորի մ'օրով, Որոյ միակ և գլխաւոր փափաքն է երկրին յառաջադիմութիւնը։

ԳԱՍ ԻԶ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ Եւրոպիոյ հարաւակողմը փոքր երկիր մ'է և կը բաղկանայ երեք մասերէ. 1. Յամաfայիկ Յունաստան կամ Հելլադա. 2. Մօրա կամ Պէլոպոնէս մեծ կղզին և 3. Շրջակայ կղզիները։ Յունաստան ընդհանրապէս լեռնային ու երկրաշարժի ենթակայ երկիր մ'է. օդը բարեխառն է, միայն ծովեզերքները տաք ու վատառողջ են։ Գլխաւոր բերքերն են ձիթենի, թուզ, չամիչ, լեմոն, նուշ, ապնիւ գինի, սուսամ և պտղատու ծառեր։ Ունի նաև մեղր, մետաքս և ընտիր մարմարիոն։

Տարածութիւնն է 65,000 քիլմ. քառ. և բնակչութիւն է 2,200,000։

Մայրաքաղաքն է ԱԹԻՆԲ որ հին ատեն շատ երեւելի էր իրրեւ ուսմանց և գիտութեանց կեդրոն։ Սակայն աշխարհիս ամէն կողմէն կը դիմէին ուսմունք սորվելու։

Ներքին գլխաւոր քաղաքներն են. Լարիսա կամ Եէնի-Շէհիր, Թրիքալա, Ֆարսալա և այլն։

Երեւելի նաւահանգիստներն են. Պիրէոն, Բադրաս, Կորնթոս, Նաւբլէա, Նաւարին, Վոլո և այլն։

Գլխաւոր կղզիներն են. Զանդա, Քէֆալոնիա, Սանդա-Մաւրա և Թէաքի՝ Յոնիականի մէջ։ Նէկրոբոնդէ, Շիրա, Անտրոս, Թինոս, Նաքսոս, Բարոս և Արշիպեղագոսի մէջ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒՐՈՊԻՈՅ ՎՐԱՅ

1

Եւրոպա ո՞ր կիսագունտին մէջ կը գտնուի. — Ի՞նչ է իւրքնական ձեւը. — Քանի՞ ովկէանոս կը տեսնէ. — Որո՞նք են գլխաւոր ծովերը. — Ո՞ր ծովերէն ձեւացած են Պոթնիոյ, Ֆինլանտայի, Ռիգայի և Ֆանցէկի ծոցերը. — Ատլանտեան ովկէանոսէ և Միջերկրական ծովէ ո՞ր ծոցերը ձեւացած են. — Ի՞նչ կարեւոր ծոցեր կան Ադրիականի, Յունականի, Արշիպեղագոսի և Սեւ ծովերու մէջ. — Եւրոպիոյ ովկէանոսներն ու ծովերը ի՞նչ կարեւոր նեղուցներով միացած են։

2

Եւրոպա քանի՞ գլխաւոր աւազան ունի. — Հիւսիսային Եւրոպիոյ գլխաւոր գետերը ո՞րոնք են. — Միջերկրական, Սեւ ո-

կասպից ծովերու մէջ ո՞ր կարեւոր գետերը կը թափին. — Եւրոպայի ո՞ր մայրաքաղաքները գետերու վրայ շինուած են. — Ո՞ր ո՞նք են Եւրոպայի գլխաւոր կղզիները և թերակղզիները. — Ո՞ր թերակղզիները առանձին տէրութիւններ կը կազմեն. — Եւրոպա քանի՞ գլխաւոր հրուանդան ունի. — Ո՞ր կը գտնուին Ուրալ, Քէօլէն, Կովկաս, Այպեան, Պիրէնեան, Ապենինեան, Կարպաթ և Պալքան լեռնագօտիները. — Եւրոպիոյ մէջ քանի՞ հրաբուխ կայ. — Եւրոպիոյ կլիմային վրայ ի՞նչ գիտես. — Ի՞նչ տեսակ բոյսեր կ'արտադրէ. — Հանքային գլխաւոր հարստութիւններն ո՞ր ո՞նք են. — Եւրոպա ի՞նչ ընտանի կենդանիներ ունի։

3

Եւրոպա ո՞րչափ բնակիչ ունի և քանի՞ մեծ ընտանիքներու կը բաժնուին. — Ի՞նչ կրօն կը դաւանին Եւրոպացիք. — Քանի՞ տէրութեանց բաժնուած է և ի՞նչ է անոնց կառավարութեան ձեւը. — Եւրոպիոյ ո՞ր երկիրները գինի կ'արտադրեն. — Ո՞ր երկիրները հեռաւոր գաղթականութիւններ ունին։ Եւրոպիոյ ամենէն լեռնային և ամենէն դաշտային երկիրները ո՞ր ո՞նք են։ Ո՞ր երկրաց մէջ յառաջ գացած է երկրագործութիւնը. — Եւրոպիոյ ո՞ր երկիրները բնաւ ծով չեն տեսներ. — Բոլորովին կղզիներէ ձեւացած տէրութիւնը ո՞րն է. — Ո՞ր երկիրները ունին առատ արմըտիք եւ կաթնտու կենդանիներ։

4

Ո՞րն է Եւրոպայի ամենէն ընդարձակ տէրութիւնը. ամենէն մեծ ծո՞վը. լի՞ճը. գե՞տը. լեռնագօտի՞ն. թերակղզի՞ն. կղզի՞ն եւ ամենէն բարձր գագաթը։

Ո՞րն է Եւրոպայի ամենէն հիւսիսային, ամենէն արեւմտեան, և ամենէն հարաւային գլուխը. — Եւրոպայի երկու մեծ գետերը ո՞ր երկրին մէջ կը գտնուին։ Միջերկրականի սահմանակից երկիրները ո՞ր ո՞նք են. — Ատլանտեան ովկէանոսը ո՞ր երկիրները կը թրջէ. — Հիւսիսային եւ Պալթիկ ծովերը ո՞ր երկիրները. — Ռիկայէն Օտեսա նաւով գալու համար ո՞ր ովկէանոսէն. ծովերէն,

Նեղուցներէն անցնելու է եւ այդ առթիւ ո՞ր երկիրները պիտի տեսնենք։ Եւրոպայի ո՞ր երկրաց մէջ կարեւոր լիմեր կը գտնուին։

ՀՐԱՀԱՆԳ

Աշակերտը պէտք է Այբ ու Բէնական կարգաւ նշանակուած հետեւեալ նաւահանգիստներուն ո՛ր երկրաց մէջ ըլլալն քարտէսի վրայ ցոյց տայ։

1

Աժտերխան, Ալթօնա, Ալպօրկ, Ամստերտամ, Անքօնա, Բադրաս, Բրեմէզ, Թրիէստէ, Թուլօն, Իպրայիլ, Լիզպօնա, Լիվրբուլ, Լոնտոն, Կալաց. Կարթագինէ, Կլասքօ, Կէլիպօլու, Կորնթոս, Կոթէնպուրկ, Կ. Պոլիս, Համպուրկ, Հավռ, Ճէնովա, Մալակա, Մէսինա, Մարսիլիա, Նաւփլէա, Նաբօլի, Նիքօլայէվ, Շթեթէն, Շերպուրկ, Ուփսալա, Պարչէլօնա, Պիրէոն, Պրիսթիլ, Պորտօ, Վարնա, Վենետիկ, Տանցիկ, Տարէնտօն, Տուրացցօ, Իէվէլ, Իրկա, Ռոտոսթօ, Քիլ, Օտէսա, Օ'փորթօ, եւն։

2

Նոյնպէս հետեւեալ ներքին քաղաքաց ո՛ւր գտնուիլն պէտք է աշակերտը ցոյց տայ քարտէսի վրայ։

Ալեքսանդրիա, Ամիէն, Բատովա, Գրզանլըդ, Գորտովա, Եանեա, Եաշ, Եորք, Էսկի Զաղարա, Էտիրնէ, Թիլսիթ, Թմշվար, Թուրին, Թրնովա, Ինսպուրկ, Լարիսա, Լէմպերկ, Լէյտա, Լիլ, Լիսս, Լիէժ, Լիօն, Կապրօվա, Կանտ, Կրընատա, Կրաց, Հանովր, Հելսինկոր, Հերմանշդատ, Ճլնէվրա, Մանատրբր, Մանչէսդրբր, Մակտեպուրկ, Մէց, Միլանօ, Միւնիխ, Մոսքուա, Մոնս, Նէօշատէլ, Նիս, Նիժնի-Նովկորոտ, Շթուլթկար, Շթրալզպուրկ, Շքօտրա, Շումլու, Ութրէխ, Պալ, Պէռն, Պէլֆասթ, Պրէսլաւ, Պզանսոն։

Պրիւն, Պրուժ, Ռաթիզպոնա, Սանթիակո, Սեմենտրիա, Սեվիլ, Վալենցիա, Վարշաւիա, Վերվիե, Վիսոլրկ, Վիտին, Տեպրեցին, Տրեզրա, Ցուրիխ, Փեշթա, Փրեզպուրկ, Փրակա, Քաղան, Քասել, Քեմպրիճ, Քիեվ, Քրրբ-Քիլիսե, Քլաուզենպուրկ, Քոյոնիա, Քոսովա, Քրաքովիա, Օռենսե, Օրենպուրկ, Օրլեան, Օքսֆորթ, Ֆերաալա, Ֆիլիպե, Ֆիօրենցա, Ֆրանքֆորթ։

Ծանօթ. — Պատ. Ուսուցիչք վերոգրեալ Հարցարաններն ու Հրահանգները կրնան մանրամասնել և քաղաքաց կարեւորութեան վրայ ծանօթութիւններ տալ՝ աշակերտաց կարողութեան չափով։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍԻԱ

ԴԱՍ Ա.

ԱՍԻԱ. Արեւելեան կիսագունտի մեծագոյն ցամաքն է և կը գրաւէ անոր հիւսիսային արեւելեան մասերը։ Ասիա՝ Եւրոպայէն հինգ անգամ մեծ է։

Ասիա կը տեսնէ երեք ովկիանոս. Հիւսիսային Սառուցեալ՝ հիւսիսային կողմը, Խաղաղական՝ արեւելեան կողմը, Հնդկաց՝ հարաւային կողմը։

Խաղաղականէ ձեւացած են Պէհրինկայի, Օխոդսքի, Ճաբոնի, Դեղին, Կապոյտ և Ջինաց ծովերը։ Հընդկաց Ովկիանոսէ ձեւացած են երկու մեծ ծոցեր՝ Պէնկալայի և Օմանի ծոցերը։ Արեւմտեան կողմը կը գտնուին՝ Կարմիր, Միջերկրական, Արշիպեղագոս, Մարմարա, Սեւ և Կասպիյ ծովերը։

Ասիոյ գլխաւոր ծոցերն են՝ Օպի ու Ենիսէյ՝ Սառուցեալ Ովկէանոսի մէջ։ Անատիրի, Բէչիլի, Թոնկինի և Սիամի ծոցերը՝ Խաղաղական Ովկէանոսի մէջ։ Իսկէնտէրունի և Ատալիայի ծոցերը՝ Միջերկրականի մէջ։ Զմիւռնիոյ ծոցը Արշիպեղագոսի մէջ. իսկ Մարմարայէ ձեւացած են՝ Նիկիոյ և Նիկոմիդիոյ ծոցերը։

Ասիոյ գլխ. նեղուցներն են՝ Պէհրինկայի նեղուց՝ Սառուցեալ և Խաղաղական Ովկէանոսներու միջեւ. Մալաքքայի նեղուց՝ Չինաց ծովուն և Հնդկաց Ովկէանոսին միջեւ, Հիւրմիւզի նեղուց՝ Օմանի ծոցին եւ Պարսկայի ծոցին միջեւ։ Պապ-իլ-Մանտէպի նեղուց՝ Ատէնի ծոցին և Կարմիր ծովուն միջեւ։ Սուէզի Ջրանցք՝ որով Կարմիր ծովը կը միանայ Միջերկրականի հետ։ Տարտանելի և Կ. Պոլսոյ նեղուցք՝ որոնցմով կը միանան Արշիպեղագոսը, Մարմարան և Սեւ ծովերը։ Կէրչի նեղուցը՝ Սեւ և Ազովու ծովերուն միջեւ։

Ասիոյ գլխաւոր լիճերն են՝ Կասպից և Արալ, որոնք իրենց մեծութեանը համար կը կոչուին ծով։ Կովկասու մէջ կայ Սեւանայ լիճը։ Ասիական Թուրքիոյ լիճերն են՝ Վանայ լիճ, Թուզ կէօլ, Աֆ Շէհիր, Սեռեալ լիճ, եւայլն։ Ուրմիա՝ Պարսկաստանի մէջ. Պայքալ և Պայքաշ՝ Սիպերիոյ մէջ։

Ասիոյ մէջ կան հետեւեալ թերակղզիները.

Անատոլու կամ Փոքր Ասիա՝ արեւմտեան կողմը։

Արաբիա, Հնդկաստան, Հնդկա-Չին եւ Մալաքքա՝ հարաւային կողմը։

Քորէա եւ Քամչադքա՝ արեւելեան կողմը։

Ասիոյ գլխաւոր կղզիներն են.

Սաքալեան, Ճաբոնեան, Հայնան, Ֆորմոզա եւ Մաքաօ՝ Խաղաղականի մէջ։ Սէյլան, Լաքէտիվեան,

Մալտիվեան՝ Հնդկաց Ովկիանոսին մէջ։ Կիպրոս՝ Միջերկրականի մէջ, Հռոդոս, Սամոս, Քիոս և Միտիլի Արշիպեղագոսի մէջ։

Ասիոյ գլխաւոր լեռներն են՝ Ալդայ և Սդանցօվ՝ Զինու և Սերպիոյ միջեւ։ Հիմալայա գօտին՝ Զինու և Հնդկաստանի միջեւ, Աւարաս, Տորոս, Անտի-Տորոս և Լիբանան՝ Ասիական Թիւրքիոյ մէջ, Կովկաս՝ Սեւ և Կասպից ծովերուն միջեւ. Ուրալ լերինք՝ Ասիոյ արեւմտեան կողմը։ Երեւելի են նաեւ՝ Ուրալ, Հինտուքուշ, Էլ-Ալէք և այլն։

Ասիոյ չորս գլխաւոր հրուանդաններն են՝ Հիւսիսային գլուխ՝ Ասիոյ հիւսիսային կողմը, Արեւելեան գլուխ՝ հիւսիսային արեւելեան կողմը. Պապա Պուրնու՝ Ասիական Թուրքիոյ արեւմտեան կողմը. Գոմորին՝ Հնդկաստանի հարաւակողմը. Բազէկաք՝ Արաբիոյ հարաւակողմը։

Ասիոյ գլխաւոր գետերն են՝ Օպի, Եենիսէյ՝ կը թափին Սառուցեալ Ովկիանոս։ Ամուր, Հօանկ-Հօ, կամ Դեղին, Քեանկ կամ Կապոյտ, Քամպօճ և Մէնամ կը թափին արեւելեան աւազանը։ Պրանմափուրա, Գանգէս, Կոտավէրի՝ կը թափին Պէնկալայի ծոցը։ Ինդոս կը թափի Օմանի ծոցը։ Եփրատ և Տիգրիս կը թափին Պարսկային ծոցը։ Ասիական Թուրքիայէն Սև. ծով կը թափին Զիւրիւք Սու, Գըզըլ-Ըրմագ, Եէշիլ-Ըրմագ և Սագարիա։ Արշիպեղագոս կը թափի Մէնտէր։ — Մեռեալ ծովուն մէջ կը թափի Յորդանան։ Կուր և Երասխ կը թափին Կասպից և Սիհուն, Ճիհուն՝ Արալայ ծովուն մէջ։

Ասիա կը գտնուի հիւս. Սառուցեալ, հիւս. Բարեխառն և Այրեցեալ գօտիներուն ներքեւ։ Հիւսի-

սային կողմերը սաստիկ ցուրտ, խոնաւ և շատ տեղ սառնապատ է, միջին կողմերը բարեխառն եւ հարաւային մասերն ալ շատ տաք կ'ընեն։

Պօա օձ

Ասիոյ բոյսերն են՝ արմտիք, բամպակ, խահուէ, շաքարեղէգ, բրինձ, թէյ, արմաւ. համեմունք, խընձ-

կեղէն, պանան, fofo, կինամոն, ծխախոտ, ներկի նիւթեր, որթատունկ, ձիթենի, լեղակ, բանջարեղէն պտղատու ծառեր, եւայլն։

Ասիա ունի թանկագին և հարուստ հանքեր, ինչպէս ոսկի, արծաթ, բլաթին, պղինձ, քարիւղ, նաւդ, անագ, կապար, երկաթ, մարմարիոն, հանքածուխ եւայլն։

Ասիոյ ընտանի կենդանեաց մէջ երեւելի են ուղտը, ձին, ջորին, այծը, ոչխարը։ Իսկ վայրի գազաններն են առիւծ, ինձ, ռնգեղջիւր, փիղ, ընձուղտ, կոկորդիլոս, պօա, օձ, թունաւոր ճճիներ, որոնք կը գտնուին հարաւային մասանց մէջ։

Ասիա ունի 44.160 000 քառ. քիլմ. տարածութիւն և 800.000.000 ի չափ բնակիչ, որոնք կը բաղկանան Մոնկոլեան, Մալայեան, Կովկասեան եւ այլ ցեղերէ։ Ասոնց կրօնքն է Քրիստոնէութիւն, Մահմէտականութիւն և Կռապաշտութիւն։ Այս վերջինին հետեւողներուն թիւն ամենէն մեծն է։

Ասիա քաղաքակրթութեան մէջ ընդհանրապէս ետ մնացած է։

Ասիա բաժնուած է տասներկու տէրութեանց՝ որք են՝

Ռուսական Ասիա, Կովկասիա, Ասիական Թուրքիա, Թուրքաստան, Պարսկաստան, Աֆղանիստան, Պելուճիստան, Հնդկաստան, Հնդկա-Չին, Չինաստան եւ Ճաբոն։

ԱՍԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՔ

ԴԱՍ Բ.

ՍԻՊԵՐԻԱ

ՍԻՊԵՐԻԱ կը գրաւէ Ասիոյ ամբողջ հիւսիսային մասը և բոլոր Եւրոպայէն աւելի մեծ է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս, Արեւելքէն՝ Պէհրինկոյի նեղուց և Խաղաղական ովկիանոս, հարաւէն՝ Չին և Թուրքաստան, արեւմուտքէն՝ Կասպից ծով, Ուրալ գետ ու Եւրոպա։

Սիպերիա տափարակ, ցուրտ և ճախճախուտ երկիր մ'է, այս պատճառաւ քիչ բոյս կ'արտադրէ, բայց ունի ոսկւոյ, արծաթի, բլախինի հարուստ հանքեր։ Երեւելի են նաև այս երկրին մուշտակաւոր կենդանիները։

Սիպերիա ունի 12.500,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԹՈՊՈԼՍՔ, երեւելի քաղաք է, ունի կաշիի գործարաններ և ընդարձակ վաճառականութիւն։

Երեւելի են նաև Իրքուրսք, Եակուրսք, Նէրչէնսք, Էքաթէրինպուրկ, Նիքոլայէվ, Վլատիվոստոք եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ

Իւր մեծութեանը նայելով՝ Սիպերիա շատ քիչ

բնակիչ ունի, որովհետև երկիրը սաստիկ ցուրտ և անբերէ։ Սիբերիա նոր դարու մէջ ճանչցուեցաւ և ա-

Ս.ՏԵՐԵՐԻՆ

Բալխիր

ռաջ Սկիւթիա կը կոչուէր։ Բնակիչք Մոնկոլ, Թաթար, Ռուս և ուրիշ ազգերէ կը բաղկանան։ Տեղացիները ձմեռը սառոյցին վրայէն բալխիրով կը ճամբորդեն։

ԴԱՍ Գ.

ԿՈՎԿԱՍԻԱ

ԿՈՎԿԱՍԻԱ կը տարածուի համանուն լեռնագօտ. ույն հարաւակողմը՝ Սեւ ու Կասպից ծովերուն միջև, իսկ հարաւային սահմանն է՝ Թուրքիա եւ Պարսկաստան։ Կովկասիա լեռնոտ երկիր մ է, ձմեռները ցուրտ իսկ ամառները դաշտերուն մէջ սաստիկ տաք կ՚ընէ։ Հողը բարեբեր ու լաւ մշակուած է։ Գլխաւոր բոյսերն են արմտիք, որթատունկ, ձիթենի, աղնիւ մրգեղէններ եւայլն։

Ունի հարուստ հանքեր երկաթի, պղնձի և մանաւանդ քարիւղի որ կը գտնուի Կասպից ծովուն եզերքը՝ Պաքու քաղաքին մօտ։

Կովկասիա ունի 460.000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 7.500.000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Թիֆլիս կամ Տփղիս, կուր գետին վրայ մեծ ու վաճառաշահ քաղաք է։ Ունի երեւելի եկեղեցիներ, թատրոններ ու դպրոցներ։ Երեւան՝ հին քաղաք է։ Ասոր մօտն է Վաղարշապատ՝ ուր կը գտնուի Էջմիածնի հռչակաւոր վանքը։

Երեւելի են նաեւ Պաքու, Բօրի, Պաթում որոնք նաւահանգիստներ են։ Ներքին քաղաքներն են Կարս, Երեւան, Ախալցխա, Կիւմրի Աբտահան, Պայազիտ, Եղիսաբէթուպոլիս եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ

Կովկասիա թէ բուսաբերութեան և թէ քարիւղի հանքերու մասին շատ հարուստ երկիր մ՚է. ձեռա-

գործ և վաճառականութիւնն ալ օր ըստ օրէ ծաղկելու վրայ են։ Կովկասի մէջ՝ բաց ի Ռուսերէ կը գըտնուին նաեւ Վրացի, Հայ Թուրք, Թաթար, Չերքէզ, Լազ, Հրեայ, Պարսիկ եւայլն։

ԴԱՍ Դ.

ԹՈՒՐՔԱՍՏԱՆ

ԹՈՒՐՔԱՍՏԱՆ ընդարձակ ու անապատային երկիր մ'է որ կը տարածուի Սիպերիոյ, Չինու, Աֆղանիստանի և Կասպից ծովուն միջեւ։

Այս երկրին հիւսիսարեւմտեան կողմերը կը տարածուին ընդարձակ անապատներ։ Ամառները սաստիկ տաք, իսկ լեռնային տեղերը ձմեռը ցուրտ կ'ըլլան։ Գլխաւոր բոյսերն են ցորեն, ծխախոտ, գարի, բամպակ, մրգեղէն եւայլն։

Ունի ոսկւոյ, պղնձի, արծաթի եւ թանկագին քարերու հարուստ հանքեր։

Թուրքաստանի տարածութիւնն է 3,400,000 քիլմ. քառ. տարածութիւն, իսկ բնակչաց թիւն է 5,000,000։

Թուրքաստան բաժնուած է անկախ ու հարկատու այլ և այլ իշխանութեանց։

Գլխաւոր քաղաքներն են Սմրղանցs, ճարտարարուեստ ու վաճառաչահ քաղաք է. Խիվա, Թաշքէնցs, Պուխարա, Մէրվ՝ նոյնպէս երեւելի քաղաքներ են։

ԳԻՏԵԼԻՔ

Թաթարները հին ատեն շատ զօրաւոր ազգ մ'էին։ Այսօր կրօնիւ Մահմետական են և կ'գրային խաչնա-

բածութեամբ, երկրագործութեամբ ու նախնական արհեստներով։ Թաթարիստան բաժնուած է զանազան իշխանութեանց։

ԳԱՍ Ե.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ կը տարածուի Ասիական Թուրքիոյ արեւելեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Կովկաս, Կասպից ծով և Թաթարիստան, արեւելքէն՝ Պելուճիստան և Աֆղանիստան. հարաւէն՝ Պարսից ծոց, Հիւրմիւզի նեղուց և Օմանի ծոց, արեւմուտքէն՝ Թուրքիա։

Պարսկաստանի արեւմտեան կողմերը լեռնոտ, իսկ արեւելեան մասերը դաշտային և շատ տեղ ալ անապատային են։ Կլիման հիւսիսային կողմերը բարեխառն իսկ մնացեալ տեղերը տաք կ'ընեն։ Գլխաւոր բոյսերն են՝ արմտիք, բրինձ, չամիչ, վուշ, կանեփ, թէնպէքի, մետաքս, բամպակ, ազնիւ պտուղներ, և այլն։ Երկրին մէջ կան ջուրի, այծ ու ոչխար։

Հանքերուն մէջ կարեւորներն են՝ ոսկի, արծաթ, քարիւղ, թանկագին քարեր, և այլն։

Պարսկաստան ունի, 1,650,000 քիլոմ. քառ. տարածութիւն և 7 000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԹԷՀՐԱՆ ուր երեւելի է Շահին պալատը։

Պալիզուզ, Բէcs, Պուշիր և Պէնտէրապասի՝ նաւահանգիստներ են։

Ներքին վաճառաշահ քաղաքներն են՝ Դաւրէժ կամ Թէպրիզ, Իսպահան, Շիրազ, Համանեան, և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Պարսիկները գործունեայ, աշխատասէր ու տեղական հին ձեռարուեստի մէջ բաւական զարգացած են։ Երեւելի են իրենց գորգերը, շալերը, պղնձէ անօթները և հին ոճով զէնքերը։ Պարսկաստան օտար երկիրներու կը ծախէ բրինձ, վարդի իւղ, չամիչ, թանկագին քարեր, շալ, գորգ, Թէնպէքի և լն։

ԴԱՍ Զ.

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ փոքր պետութիւն մ'է Պարսկաստանի արեւելեան կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Թուրքաստան, արեւելքէն Հնդկաստան, հարաւէն՝ Պելուճիստան, արեւմուտքէն՝ Պարսկաստան։

Այս երկրին մէջ կը գտնուի Հիսուս-Քուշ գօտին։ — Երկրին մէջ՝ տեղ տեղ անապատներ կան, իսկ բարեբեր հովիտներու մէջ յառաջ կուգան ցորեն, բրինձ, ծխախոտ, բամպակ, շաքարեղէգ, պտղատու ծառեր, և այլն։ Ունի ոսկւոյ, արծաթի, պղնձի և սնդիկի հարուստ հանքեր։

Երկրին տարածութիւնն է 720 000 քիլ. քառ. և բնակչաց թիւն է 6.000 000։

Մայրաքաղաքն է ՔԱՊՈՒԼ, գեղեցիկ պարտէզ-

ներով շրջապատուած և Ասիոյ ամենէն հին քաղաքներէն մին է։ Հոս կը բնակի երկրին էմիրը։

Երեւելի են նաեւ Հէրաթ, Գանտահար, Ճէլալապատ և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Աֆղանք չարքաշ են. կ'զբաղին երկրագործութեամբ ու տեղական արհեստներով։ Կրօնիւ մահմետական են. ունին առանձին էմիր մը՝ որու իշխանութիւնը սահմանափակ է։

ԴԱՍ Է.

ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ

ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ Ասիոյ փոքր տէրութիւններէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Աֆղանիստան, արեւելքէն՝ Հնդկաստան, հարաւէն՝ Օմանի ծոցը և արեւմուտքէն՝ Պարսկաստան։ Երկրին հիւսիսային կողմերը լեռնոտ ըլլալուն համար՝ ձմեռները ցուրտ, հովտաց մէջ բարեխառն ու տեղ տեղ ալ անապատներու պատճառաւ սաստիկ տաք կ'ընեն։

Գլխաւոր բոյսերն են արմտիք, բամպակ, լեղակ, շաքարեղէգ, արմաւ, նուշ։ Հարուստ հանքեր ալ ունի, բայց երեսի վրայ թողած են։

Մայրաքաղաքն է ՔԷԼԱԹ. ամուր և վաճառաշահ քաղաք է։ Հոս կը բնակի երկրին խանը։

Երեւելի են նաեւ կանտավա, Պէլա, Քէտան։

ԳԻՏԵԼԻՔ

Գելուճիստանցիք կ'գբաղին երկրագործութեամբ ու խաշնարածութեամբ։ Կրօնքով մահմետական են։ Քաղաքակրթութեան մէջ շատ ետ մնացած են։

ԴԱՍ Ը.

ԱՐԱԲԻԱ

ԱՐԱԲԻԱ Ասիոյ հարաւային երեք մեծ ցամաքակղզիներէն մին է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Ասիական Թուրքիա, արեւելքէն՝ Պարսից ծոց և Օմանի ծով, հարաւէն՝ Հնդկաց ովկէանոս, արեւմուտքէն՝ Պապ-իւլ-Մանտէպի նեղուց. Կարմիր ծով եւ Սուէզի ջրանցք։ Արաբիոյ ամենամեծագոյն մասը անապատ է, միայն արեւմտեան կողմը գտնուած Հիճազ ու Եէմէն գաւառները բարեբեր ու բազմամարդ են։ Երկրին կլիման սաստիկ տաք է։

Գլխաւոր բոյսերն են խնկեղէն, խահուէ, շաքարեղէգ, արմաւ, խաւծ, լեզակ, համեմունք և այլն։

Կենդանեաց մէջ անուանի են ուղտը, ջորին, բայց մանաւանդ ձին՝ որ շատ գեղեցիկ է։

Արաբիա ունի 2.850,000 քիլմ. քառ. տարածութիւն և 8-10,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքն է Մէքքէ, ուր ծնած է Իսլամաց Մարգարէն։

Ճիտտէ, Եամպու, Աէն և Մաշկաթ՝ նաւահանգիստներ են. — Երեւելի են նաեւ Մէտինէ և Մոխա։

ԳԻՏԵԼԻՔ

Արաբիոյ արեւմտեան երկու գաւառները՝ Հիճազ ու Եէմէն շատ բարեբեր են և այս պատճառաւ կոչուին Եոչանիկ Արաբիա և կը պատկանին Օսմանեան պետութեան։ Հողագործութեամբ զբաղողները կոչուին Ֆէլլահ, իսկ թափառական հովիւներն ալ Պէտէվի։

ԴԱՍ Թ.

ՃԱԲՈՆ

ՃԱԲՈՆ՝ Ասիոյ արեւելեան կողմը մեծ ու փոքր կղզիներէ բաղկացած տէրութիւն մ՝է։ Գլխաւոր կղզիներն են՝ Նիֆոն, Սիkոf, Քիու-Սիու, Էոզո և այլն։

Այս կղզիք լեռնոտ և հրաբխային են։ Ճաբոնի կղզեաց մէջ գրեթէ ամէն տեսակ կլիմայ կը տիրէ։ Հողը շատ աղէկ մշակուած է և կ՝արտադրէ բրինձ, ցորեն, հաճար, վարսակ, թէյ, պտղատու ծառեր և այլն։ Ճաբոն ունի ամէն տեսակ պիտանի հանքեր որք կը շահագործուին։

Ունի 380 000 քիլոմէտր քառակուսի տարածութիւն և 40,000 000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԵՏՕ կամ ԹՕՔԻՕ, Նիֆոն կղզւոյն մէջ՝ գեղեցիկ, ընդարձակ ու վաճառաշահ քաղաք է։ Ունի երեւելի պալատներ, վարժարաններ և գործարաններ։ Վաճառաշահ նաւահանգիստներն են Եօֆօ-Համա, Օսաֆա, Նակասաֆի, Քակօսիմա, և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Ճարոն իւր արուեստներով, գիտութիւններով, ձեռագործներով և դասախարակութեամբ Ասիոյ ամենէն քաղաքակրթեալ և յառաջադէմ երկիրն է։ Ճարոնի արտաքին վաճառականութեան նիւթերն են թէյ, յախճապակիէ գեղեցիկ անօթներ, բնաւոր մետաքսեղէններ, սատամէ զարդեր, բրինձ, աղաց ձուկ, և այլն։ Ճարոնի կայսրը կը կոչուի Միքաsо։ Բնակիչք կռապաշտ են։

ԴԱՍ Ժ.

ՀՆԴԿԱՍՏԱՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆ Ասիոյ հարաւակողմը մեծ ցամաքակղզի մ'է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Հիմայալա լերինք, արեւելքէն՝ Հնդկա-Չին և Պէնկալայի ծոց, հարաւէն՝ Հնդկաց ովկիանոս, արեւմուտքէն՝ Օմանի ծոց, Աֆղանիստան և Պելուճիստան։

Հնդկաստանի կը պատկանին Սէյլան, Լաքէտիվեան ու Մալտիվեան կղզիները։

Հնդկաստանի հիւսիսային կողմը կը կանգնի Հիմալայա գօտին՝ որ աշխարհիս բարձրագոյն գագաթները կը պարունակէ։

Երկրին հիւսիսային կողմերը ցուրտ, միջին մասերը բարեխառն ու հարաւային կողմերը սաստիկ տաք կ'ընեն։ Հողը շատ արգասաւոր է և կ'արտադրէ ար-

մրտիք, բրինձ, բամպակ. խահուէ, քափուր (հեա-
ֆիրի), աֆիոն, բժշկական բոյսեր, պանան, պամ-
պու եղէգ խնկեղէն, ծխախոտ, շաքարեղէգ, ազ-
նիւ պտուղներ, նարինջ, լեմոն, և այլն։

Հնդկաստան հանքի մասին ալ շատ հարուստ է։

Բամպակի տունկ

ունի ոսկի, ադամանդ, պողպատ, արծաթ, զէնկ-
պղինձ, կապար, հանքածուխ, և այլն։

Հնդկաստանի մէջ շատ մը բնտանի կենդանիներէ-
ի զատ՝ կը գտնուին նաեւ բազում վայրի գազաններ,
օձեր ու ճճիներ։

Երկրին տարածութիւնն է 3,800,000, իսկ բնակ-
չաց թիւն է 285,000,000։

Հնդկաստանի ամենամեծագոյն մասը կը պատկանի
Անգլիոյ, բայց կան նաեւ անկախ և կամ Անգլիոյ
հարկատու մի քանի փոքր իշխանութիւններ։ Ցրան-

սա և Փորթոկալ եւս մի քանի քաղաքներ ունին այս երկրին մէջ։

Մայրաքաղաքն է ԿԱԼԿԱԹԱ. Գանգէսի մէկ ճիւղին վրայ ծաղկեալ ու վաճառաշահ նաւահանգիստ է։

Գլխաւոր նաւահանգիստներն են Պոմպայ, Քալիքուբ, Քոչին, Մասրաս, Մասուլիփաթամ. և այլն։

Ներքին գլխաւոր քաղաքներն են՝ Պէնարէս, Ակրա. Ալլահապաս, Լահոռ, Տէլհի, Քաշմիր, Նակբոր, և այլն։

Ֆռանսայի կը պատկանին Չանտերնակոր, Եսանաս, Փոնտիշէրի. և Քարիքալ քաղաքները, իսկ Փորթոկալի կը վերաբերին Տիու, Տաման, և Կոա քաղաքները։

ԳԻՏԵԼԻՔ

Հնդիկները շատ հին դարերէ ի վեր երեւելի եղած են իրենց իմաստութեամբ, արհեստներովն ու վաճառականութեամբ։ Երկիրը ամէն կողմանէ շատ հարուստ է և այս պատճառաւ կոչուած է Ոսկւոյ երկիր։ Անուանի են Հնդկաց մետաքսեղէնները, շալերը գորգերը, ոսկիէ ու փողոսկրէ զարդեղէնները, և այլն։ Հնդկաց մեծագոյն մասին կրօնն է կռապաշտութիւն։ Կան նաեւ շատ մահմէտականներ։

ԴԱՍ ԺԱ.

ՉԻՆԱՍՏԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆ կը տարածուի Ասիոյ արեւելեան կողմը և որ կը կոչուի նաև Երկնային կայսրութիւն։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սիպերիա, արեւելքէն՝ Խա-

զաղական ովկիանոս, հարաւէն՝ Զինաց ծով, Հնդկաստան, Զին և Հնդկաստան, արեւմուտքէն՝ Թուրքաստան։

Այս ընդարձակ երկրին սահմաններուն վրայ կան գնին բարձրաբերձ լերանց գագաթներ, իսկ կեդրոնական մասին մէջ կայ Թիպէթի մեծագոյն լեռնադաշտը։

Զինաստան իւր ընդարձակութեան պատճառաւ ամէն տեսակ կլիմայ և ամէն կլիմայի յատուկ բոյսերի, ինչպէս գալի, հաճար, վարսակ, թէյ, բրինձ, բամպակ, եգիպտացորեն, լեղակ, քաֆուր, պամպուկ, եղէգ, շինութեան փայտի ընդարձակ անտառներ, թթենի, իւղալից հունաներ, համեմունք պտղատու ծառեր ևն։ Զինաստան ունի ամէն տեսակ ընտանի կենդանի և թռչուններ։

Հանքերն են պղինձ, գէնկ, անագ, կապար, ոսկի, արծաթ, ծծումբ, քարիւղ, թանկագին քարեր ևայլն։

Զինաստան ունի 11,500 000 քիլմ. քառ. տարածութիւն և 380,000 000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Բէյ-Գին, Բէյ-Հօ գետին վրայ — Հոս կը բնակի երկրին կայսրը։

Երեւելի նաւահանգիստներն են Թիէն-Զին, Հոնկ-Քոնկ, Քանդոն և Շանկ-Հայ։

Ներքին գլխաւոր քաղաքներն են Նանքին, Ուրկա, Նարքանդ և Քաշկար։

Քորէա թերակղզւոյն և փոքր տէրութեան մայրաքաղաքն է Սէուլ։

ԳԻՏԵԼԻՔ

Զինացիք շատ չարքաշ, աշխատասէր և ուշիմ մար-

դիկ են, բայց քիչ մը նենգամիտ։ Ասոնք Քրիստոսէ դարեր առաջ հնարած են կարկինը, վառօդը, կողմ-

Թէյի տունկ

նացոյցը, տպագրութիւնը։ Նշանաւոր են իրենց յախճապակիները, մելանը, գորգերը, մետաքսեղէն-ները, չուխան եւայլն։ Զինաց կայսրը կը կոչուի «Ոդի երկնից։»

ԴԱՍ ԺԳ.

ՀՆԴԿԱ-ՉԻՆ

ՀՆԴԿԱ-ՉԻՆ Ասիոյ ամենէն հարաւային երկիրն է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Չինաստան, արեւելքէն՝ Չինայի ծով, հարաւէն՝ Մալաքքայի նեղուց, արեւմուտքէն՝ Պէնկալայի ծով և Հնդկաստան։

ՀՆԴԿԱ-ՉԻՆ լեռնոտ և հրաբխային երկիր մ'է, հարաւակողմը կ'երկարի Մալաքքա թերակղզին։ Երկրին լեռնային գաւառները ցուրտ, իսկ ծովեզերեայ մէկ քանի տեղեր ջերմոտ ու վատառողջ են։ Հողը բարեբեր է և կ'արտադրէ Հնդկաստանի բերքերը, նաեւ թիւ ըսուած ընտիր փայտը։ Գլխաւոր հանքերն են ոսկի, արծաթ, պղինձ, թանկագին քարեր, հանքածուխ եւայլն։

ՀՆԴԿԱ-ՉԻՆ ունի 1.800.000 քիլոմ. քառ. տարածութիւն և 40.000,000 բնակիչ։

ՀՆԴԿԱ-ՉԻՆ կը բաժնուի 8 քաղաքական մասերու որք են.

1. Կայսրութիւն Անանամի. — Մայրաքաղաքն է Հուէ։
2. Ֆրանսական Քոչինչին. — » Սայկոն։
3. Թագաւորութիւն Քամպոճի » Բնոմ-Բէնկ։
4. Մալաքքա. — Գլ. քաղաքներն են Սալանկոր և Ճոհոր։
5. Թագաւորութիւն Սիամի. Մայրաքաղաքն է Պանգոք։
6. Պիրմանիա. » Մանտալէ։
7. Անգլիական Պիրմանիա » Ռանկուն։
8. Թոնգին » Հանոյ։

ԳԻՏԵԼԻՔ

Հնդկա-Չին թէ՛ բուսաբերութեան և թէ հանքերու մասին շատ հարուստ երկիր մ'է։ Տեղացւոց մեծ մասը դեռ կիսավայրենի է։ Ֆռանսայի տիրապետութեան ներքեւ են Անամ, Քոչինչին, և Քամպոճ։ Իսկ Պիրմանիոյ մեծագոյն մասը կը պատկանի Անգլիոյ։ Հնդկա-Չինու բնակիչք կռապաշտ են։

ԴԱՍ ԺԳ.

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՍԻԱ

ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ Օսմանեան ընդարձակ կայսրութեան ամենէն կարեւոր մասն է։ Սահմաններն են հիւսիսէն՝ Սեւ ծով և Կովկաս, արեւելքէն՝ Պարսկաստան և Պարսկային ծոց, հարաւէն՝ Արաբիա և Միջերկրական ծով, արեւմուտքէն՝ Արշիպեղագոս և Մարմարա։

Օսմ. Ասիա կը բաժնուի չորս բնական մասերու, 1. Փոքր Ասիա կամ Անատոլու՝ արեւմտեան կողմը. 2. Միջագետք՝ հարաւային արեւելեան կողմը. 3. Արեւելեան մաս՝ հիւսիսային արեւելեան կողմը և Սուրիա՝ Միջերկրականի արեւելեան կողմը։

Ինչպէս որ Ասիոյ բնական նկարագրութեանը մէջ տեսանք, Օսմ. Ասիոյ արեւելեան և արեւմտեան կողմերն ու Միջերկրականի արեւելեան ծովեզերքը լեռնոտ են։ Ասիական Թուրքիոյ հիւսիսային արեւել-

եան գաւառները՝ բարձր լերանց պատճառաւ ցուրտ, փոքր Ասիա աւելի բարեխառն, իսկ Միջագետք և Սուրիա տաք կ՚ընեն։

Օսմ. Ասիա ունի պտղաբեր հող և հարուստ բուսաբերութիւն։ Կ՚արտադրէ արմտիք, բամպակ, սուսամ, ծխախոտ, ձիթենի, որթատունկ, թուզ, չամիչ, աֆիոն, լեմոն, նարինջ, արմաւ, ներկի նիւթեր, շաքարեղէգ, խահուէ, բրինձ, կանեփ, հիւսելի նիւթեր, եւայլն։

Կենդանեաց մէջ երեւելի են էնկիւրիի այծը, նոյնպէս ջորին, ձին, ուղտը, ոչխարը, մուշտակաւոր կենդանիներն ու այլ և այլ վայրի գազաններ՝ հարաւային մասանց մէջ։

Օսմանեան Ասիոյ հանքերն են պղինձ, արծաթախառն կապար, աղ, քրոմ, պղտաս, եւայլն։

Օսմանեան Թուրքիա ունի 1.250.000 քիլմ. քառ. տարածութիւն և 16.000.000 բնակիչ։ Բաժնուած է 22 կուսակալութեանց՝ որք են.

Գասբէմունի և Տրապիզոն, Սեւ ծովու վրայ։

Խիւտավէնտիկեար և Պիրպս, Մարմարայի և վերջինը՝ մասամբ Արշիպեղագոսի վրայ։

Այտըն, Արշիպեղագոսի վրայ։

Քոնիա, Ատանա, Հալէպ, Պէյրուք, և Սուրիէ, Միջերկրականի վրայ։

Էրզրում, Ռուսիոյ սահմանին վրայ։

Վան, Մուսուլ, Պաղտատ, և Պասրա, Պարսից սահմանագլխին վրայ։

Էնկիւրի, Սրվազ, Մամուրէթ-իւլ-Ազիզ, Տիարպէքիր, Պիթլիս, Տէրսիմ, ներքին մասանց մէջ։ Ասոնցմէ ի զատ՝ Արշիպեղագոսի մէջ գտնուած հեռաւեալ

կղզիները՝ Իմպրոս, Լէմնոս, Թէնէդոս *կամ* Պոճնա-Ատասը, Լեսպոս *կամ* Միտիլլի, Քիոս *կամ* Սաքիզ, Քոս *կամ* Սպանիէոյ, Հռոդոս *կամ* Բատոս *եւայլն։ կը կազմեն առանձին կուսակալութիւն մը՝* — Ճէզայիրի Պահրը Սէֆիս *անուամբ։ Իսկ* Սամոս *և* Կրեսէ *արտաքնացեալ կուսակալութիւններ են։*

Գլխաւոր նաւահանգիստ Սեւ ծովու վրայ։

Տրապիզոն, Կիրասոն, Սինոպ, Սամսոն, Ինէպոլու, Էրէկլի։

Մարմարայի վրայ։ — Իզմիտ, Մուտանիա, *և* Պանտրմա։

Արշիպեղագոսի վրայ։ — Չանգաք-Քալէ, Իզմիր, Չէշմէ։



Երուսաղէմի մէջ Սիոն վերնատունը

Միջերկրականի վրայ։ — Ատալիա, Մէրսին, Խմէնտէրուն, Թարապուլուսը-Շարգ, Պէյրութ, Եաֆա *և լն։ Պարսկային ծոցին վրայ կայ* Պասրա *նաւահանգիստը։*

Արեւելեան մասին գլխաւոր քաղաքներն են.
Էրզրում, Պայպուրդ, Վան, Պիթլիս, Մուշ, Էրզինկեան, Տիարպէքիր, Մալաթիա, Էկին, Սրվոզ։
Հարաւային մասին գլխաւոր քաղաքներն են.

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Մուսուլ, Պաղտատ, Ուրֆա, Մարաշ, Հալէպ, Անթաքիա. Դամասկոս կամ Շամ-Շէրիֆ, Երուսաղէմ են։
Արեւմտեան մասին գլխաւոր քաղաքներն են.
Թոքատ, Ամասիա, Շապին-Գարահիսար, Եոզղատ,

Գայսերի, Էնկիւրի, Ատանա, Պուրսա, Գոնիա, Քէօ-թահիա, Դասթամպօլու, Այտրն, Դարամանի, Սիս, Ա-ֆիոն-Քարահիսար եւայլն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ասիական Թուրքիոյ աշխարհագրական դիրքը շատ գեղեցիկ է։ Հողը բարերեր և բուսական լաւ մշակուած է։ Արհեստ և ձեռագործ՝ մէկ քանի քաղաքաց մէջ սկսած են յառաջ երթալ։ Օսմանեան պետութիւնը Եւրոպական տէրութեանց կը վաճառէ բուսական և հանքային բերքեր, այծու մազ, բուրդ, կաշի, մուշտակ, մետաքս և տեղական գեղեցիկ ձեռագործներ։

Երկրին մէջ սկսած են կառուցիներ ու երկաթուղիներ շինուիլ՝ որոց շնորհիւ վաճառականութիւնը հետզհետէ պիտի զարգանայ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՄԱՆՔ ԱՍԻՈՅ ՎՐԱՅ

1

Ասիա արեւելեան կիսագունտի ո՞ր մասը կը գրաւէ. ի՞նչ գիտես իւր մեծութեանը վրայ. — Որո՞նք են սահմանները. — Քանի՞ ովկիանոս կը տեսնէ. — Այդ ովկիանոսներէն ո՞ր ծովերը ձեւացած են. — Ասիոյ գլխաւոր ծովերը որո՞նք են. — Ասիան Եւրոպայէն բաժնող ո՞ր նեղուցները կան. — Ասիա ո՞ր նեղուցով զատուած է Ամերիկայէ եւ որոցմով՝ Աֆրիկէէ։ Ասիա քանի՞ գլխաւոր ունի. — Որո՞նք են Հիւսիսային աւազանի գետերը. — Արեւելեան աւազանին մէջ ո՞ր մեծ գետերը կը թափին եւ ո՞ր երկիրներէն կ՚անցնին. — Գանգէս, Կոտավէրի, Պրահմափութրա, Ինդոս, Եփրատ ու Տիգրիս ո՞ր կը թափին. — Սեւ ծով թափող գետերը որո՞նք են. — Որո՞նք են Ասիոյ մեծագոյն լիճերը։

2

Ասիա ի՞նչ երեւելի թերակղզիներ ունի. — Ո՞ր թերակղզիները առանձին տերութիւններ կը կազմեն. — Ասիոյ երեւելի կղզիները որո՞նք են. — Ո՞ր կարեւոր արշիպեղագոսը առանձն տերութիւն մը կը կազմէ — Կլխաւոր հրուանդանները որո՞նք են. — Ասիոյ ամենէն լեռնային երկիրները որո՞նք են. — Ո՞ր կը գտնուին Ուրալ, Հիմալայա, Արարատ, Տորոս, Հինտու-Քուշ, Ալթայ, Կովկաս, եւ Լիբանան լերինք. — Ասիոյ մեծագոյն անապատները ո՞ր երկրաց մէջ կը գտնուին. — Ասիա քանի՞ գօտիներու ներքեւ կը գտնուի. — Ո՞ր երկիրները սառուցեալ. որո՞նք բարեխառնի տակ եւ որո՞նք այրեցեալի շատ մօտ կը գտնուին. — Որո՞նք են Ասիոյ գլխաւոր բոյսերը. — Ո՞ր երկիրները մեծ առատութեամբ բրինձ, թէյ ու բամպակ կ'արտադրուն. — Ո՞ր երկիրներն ունին խահուէ. համեմունք, խնկեղէն եւ դեղի բոյսեր։

3

Ասիական Թուրքիոյ բնական դիրքին վրայ ի՞նչ կրնաս ըսել. — Քանի՞ կուսակալութեանց բաժնուած է. — Ի՞նչ տեսակ բոյսեր, կենդանիներ ու հանքեր ունի. — Ներքին երեւելի քաղաքները որո՞նք են, Սեւ ծովու վրայ ո՞ր նաւահանգիստները կան. — Մէջերկրականի եւ Արշիպեղագոսի՞ վրայ. — Որո՞նք են Ասիոյ բնաւ ծով չտեսնող երկիրները. — Ասիական Թուրքիոյ գլխաւոր գետերը որո՞նք են. — Փոքր Ասիոյ մէջ ո՞ր լիճերը կան. Արեւելեան մասին մէջ ո՞ր մեծ լիճը. — Սեւ ծովու վրայ ամենէն բանուկ նաւահանգիստը ո՞րն է, Մարմարայի՞ վրայ, Արշիպեղագոսի՞ վրայ, Մէջերկրականի՞ վրայ. — Ասիոյ ամենէն երեւելի լեռնագօտիները ո՞ր երկրաց մէջ կը գտնուին. — Զինու եւ Սիպէրիոյ միջեւ ո՞ր մեծ լեռնադաշտը կայ. — Ասիոյ հարաւային երկաթուղիակղզիները որո՞նք են. — Հնդկաստանի վրայ ի՞նչ գիտես. — Ո՞րն է Ասիոյ ամենէն քաղաքակրթեալ երկիրը։

4

Ասիա ո՞ր քան բնակիչ ունի. — Քանի՞ գլխաւոր ցեղերու կը բաժնուին. — Ասիոյ մէջ քանի՞ գլխաւոր կրօն կայ. — Եւրո-

պական տերութիւնք Ասիոյ մէջ ի՞նչ կարեւոր կալուածներ ունին. — Ասիա ի՞նչ տեսակ յարգի բերքեր ունի. — Որո՞նք են Ասիոյ հանքային գլխաւոր հարստութիւնները. — Վայրի գազաններ ընդ հանրապէս ո՞ր երկիրն ու մէջ կը գտնուին. — Ո՞րն է Ասիոյ ամենէն ընդարձակ երկիրը. ամենէն մեծ ծո՞վը. ծոցը՞, լիճը՞, գետը՞, լեռնագագաթ՞ն, գագաթը՞, ամենէն բազմամարդ երկիրը՞, ամենէն հանքահարուստը՞, ամենէն ցուրտը՞, ամենէն տաքը՞, անապատայրնը՞, եւայլն։

ՀՐԱՀԱՆԳ

1

Աշակերտը պէտք է աշխարհացոյց քարտէսի վրայ՝ Ասիոյ հետեւեալ ներքին քաղաքաց ո՞ր երկիրներու մէջ ըլլալնին մատնանիշ ընէ։

Ալաշկերտ, Ալլահապատ, Ախլցխա, Ակրա, Այտըն, Անթաքիա, Արաբկիր, Աք-Հիսար, Բաբերդ, Գոնեա, Գայսերի, Գանտահար, Եարգանտ, Եաքուիտոք, Եղիսաբեթուպոլիս. Երեւան, Երուսաղէմ, Եոզղատ, Զաֆրանպոլու, Էնկիւրի, Էրզնկեան, Էրզրում, Էքսիթերինպուրկ, Թաշկենտ Թէպրիզ, Թիֆլիս, Թոսպոլաք, Թոքատ, Իսպահան, Լախսքիա, Խոքանտ, Խուիտայիս, Կարս, Հալէպ, Համատան, Հայտերապատ, Հէրաթ, Հուե, Մալաթիա, Մարտին, Մարսուան, Մէքքէ, Մէրվ, Մրաքօ, Մուշ, Մուսուլ, Նախիջեւան, Նոնքին Շամ, Շամախի, Շիրազ, Պալխ, Պաղտատ, Պայազիտ, Պերկամա, Պէնարէս, Պիթլիս, Պուխարա, Պրուսա, Սըվազ, Սըմրղանդ, Վան, Տէլհի, Տիալպէքիր, Քաշմիր, Քապուլ, Քարաման, Քէօթահէա, Քարբուիտ, Օմանք եւայլն։

2

Աշակերտը պարտի Աշխարհացոյց քարտէսին վրայ Ասիոյ հետեւեալ նաւահանգիստները մատնանիշ ընել։

Ահմէտապատ, Ատէն, Ատալիա, Եամպօ, Եոքօ—Համա, Թիէն Չին, Թրիփօլի, Իզմիտ, Իզմիր, Կիրասոն, Կօա, Հոնկ—Քոնկ, Մանտալէ, Մատրաս, Մաշկաթ, Մէտինէ, Մէրսին, Մուտանիա, Նակասակի, Շանկ—Հայ, Զէշմէ, Պաթում, Պաքու, Պանտերմա, Պասրա, Պալիքրուշ, Պանքոք, Պէյրութ, Պէնտէրապոսի, Պուշիր, Պոմպայ, Ռանկուն, Սալանկօր, Սամսոն, Սայկօն, Սինկափուր, Սինոպ, Տիու, Տրապիզոն, Ռէշտ, Փէկու, Փոթի, Փոնթիշէրի, Քալիքութ, Քանդոն, Քարիքալ, Օսաքա եւայլն։

Վ. ԱՐԺՈՒԹԻՒՆՔ

1. Կ. Պոլսէն նաւով պիտի երթանք ի Քալէ՝ միշտ ծովեզերքը քերելով։ Մեր այս ուղեւորութեան միջոցին՝ ուշադրութիւն պիտի ընենք թէ, ո՞ր ծովերէն, նեղուցներէն ու ովկէանոսէն պիտի անցնինք, ո՞ր երկրաց ծովեզերքներն ու ինչ երեւելի նաւահանգիստներ պիտի տեսնենք։

2. Իզմիրէն նաւով պիտի երթանք ի Քանդոն, ուշադիր ըլլալով որ մեր ուղեւորութեան միջոցին ի՞նչ ցամաքներ, կղզիներ ու նեղուցներ պիտի հանդիպինք և ո՞ր Ովկէանոսներէն ու ծովերէն պիտի անցնինք եւայլն։

3. Կ. Պոլսէն ուղղակի դէպ արեւելք՝ խաղաղական Ովկէանոսի եզրը պիտի երթանք ցամաքի ճամբով. — Կ'ուզենք գիտնալ թէ՝ այս առթիւ ո՞ր երկիրներէն պիտի անցնինք, ի՞նչ գետերու, լեռներու ու նշանաւոր քաղաքներու պիտի հանդիպինք մեր ուղեւորութեան միջոցին։

Ծանօթ. — Ուսուցիչք ազատ են այս հարցումները տարբեր ձեւերով կրկնել։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՓՐԻԿԷ

ԳԱՍ Ա.

ԱՓՐԻԿԷ կը տարածուի Արեւելեան կիսագունտի հարաւային արեւմտեան մասին մէջ եւ ունի կանոնաւոր ծովեզերքներ։ Սահմաններն են հիւսիսէն՝ Միջերկրական ծով, Սուէզի ջրանցք և Ճիպրալտարի նեղուց, արեւելքէն՝ Կարմիր ծով, Պապ-իւլ-Մանտէպի նեղուց և Հնդկաց ովկիանոս, հարաւէն և արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս։

Ափրիկէի հիւսիսային կողմը կը տեսնուին Սիրքի և Կապէսի ծոցերը՝ Միջերկրականէ ձեւացած։ Արեւմտեան կողմը կայ Կուինիոյ մեծ ծոցը՝ որմէ ձեւացած են երկու փոքր ծոցեր՝ Պէնէնի և Պիաֆրայի։

Ափրիկէի գլխաւոր կղզիներն են՝ Ասորեան, Քանարեան, Մատէրա, Դալարի Դլխոյ *արշիպեղագոսք*, Ս. Հեղինէ, Համբարձման *և Կուինիոյ ծոցի կղզիք։* —Ս. Թովմաս, Անընսպօն, Իշխանի կղզի և Ֆէրնանսոբօ՝ *Ատլանտեանի մէջ։* Սոֆօթրա, Սէշէլեան, Զանզիպար, Պուրպօն, Մորիս և Մատակասքար *մեծ կղզին՝ Հնդկաց ովկիանոսին մէջ։*

Ափրիկէի ամենամեծագոյն մասն անապատ է։ Ծովեզերաց մօտ կ'երեւին բարձրաբերձ լեռնագօտիներ, որք են՝ Ադլաս *լերինք՝ հիւսիսային արեւմտեան կողմը։* Եթովպիոյ *լերինք՝ հիւս. արեւելեան կողմը։ — Հնդկաց ովկիանոսի սահմանին վրայ* Քէնիա *և*

Քիլիմա-Նճարо, Քօնկ լերինք՝ արեւմտեան կողմը, իսկ դէպ ի հարաւ կը գտնուի Լուբադա գօտին։

Ափրիկէի չորս գլխաւոր հրուանդաններն են, Պօն հիւսիսային կողմը. Դալարի գլուխ՝ արեւմտեան կողմը. Բարեյուսոյ գլուխ՝ հարաւային ծայրը. Կուարտաֆուի գլուխ՝ արեւելեան ծայրը։

Ափրիկէի գետերն են՝ Նեղոս, որ Ափրիկէի մեծագոյն գետն է և կը թափի Միջերկրական ծով։ Իր երկու ճիւղերն են Սպիտակ և Կապոյտ Նեղոս։

Ատլանտեանի մէջ կը թափին Սենէկալ, Կամպիա, Նիկէր, Քօնկо, Օկուէ, Քօանզա և Օրէնճ։

Հնդկաց ովկիանոսը կը թափին Լէմփոփо, Զամպէզ, Ռուվումա և Լուֆիճի։

Ափրիկէի գլխաւոր լիճերը հետեւեալներն են.

Զաս՝ Սուտանի մէջ. Վիքտորիա-Նիանզա՝ (այս լիճէն կը բղխի Նեղոս գետը) Ալպէրդ-Նիանզա, Թանկանիքա, Պէնկուէլա, Նիասսա և Նրգիկէ՝ միջին մասին մէջ։

Ինչպէս որ տեսանք, Ափրիկէի մեծագոյն մասը անապատ և Այրեցեալ գօտւոյ տակ գտնուելուն համար սաստիկ տաք կ'ընէ. միայն հիւսիսային և հարաւային մէկ մէկ փոքր մասերը՝ բաղդատաբար աւելի բարեխառն են։

Ափրիկէի բարեբեր երկիրներուն մէջ յառաջ կուգան բրինձ, ցորեն, չաքարեղէգ, խահուէ, պղպեղ, լեղակ, խէժ, արմաւ, խնկեղէն, թուզ, քօքօ, նարինջ, լեմոն, ձիթենի, որթատունկ, դեղօրայք, և այլն։

Ափրիկէ ունի ոսկւոյ փոշի, պղինձ, երկաթ, կըրանիտ, ադամանդ, և այլն։

Ափրիկէի ընտանի կենդանեաց մէջ ամենէն օգտակարն է ուղտը, որ Անապատի նաւ կը կոչուի։ Ափրի-

կէր մէջ ամէն տեսակ վայրի գազաններ կը վխտան, ինչպէս փիղ, ռնգեղջիւր, վագր, յովազ, օձ, ևլն։

Ափրիկէի տարածութիւնն է 28,000,000 քիլմ. քառակուսի, իսկ բնակիչը (կարծեօք) 170,000,000։

Փիղ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Ափրիկէի հիւսիսային մասը կը պարունակէ հինգ երկիր. — Եգիպտոս, Պէրպէրիստան, Նուպիա, Սահարա ու Եթովպիա կամ Հապէշիստան։

Միջին Ափրիկէի երկիրներն են՝ Սենէկամպիա, Հիւսիսային Կուինիա, Հարաւային Կուինիա, Նիկրիտիա *կամ* Սուտան, Քոնկոյ պետութիւն *և* Սոմալ։

Հարաւայի Ափրիկէի երկիրներն են՝ Հարաւային Կուինիա, Օրէնիքացւոց երկիր, Ազատ Քոնկո, Մոզամպիք, Զանկէպար, Բարեյուսոյ երկիր, Նաթալ, Թրանսուալ, Քաֆրաստան, *և* Հանրապետութիւն Օրէնճի։

ԴԱՍ Բ.

ԵԳԻՊՏՈՍ

ԵԳԻՊՏՈՍ կը գտնուի Ափրիկէի հիւսիսային արեւելեան կողմը. և շնորհիւ Նեղոս գետին՝ աշխարհիս ամենէն բարեբեր, ճոխ և հարուստ երկիրն է։ Գլխաւոր բերքերն են առատ արմտիք, բրինձ, խաղողէ, բամպակ, ձիթենի, արմաւ և ուրիշ բազում պտղատու ծառեր։ Նեղոս գետի եզերքը կը բուսնի նաև Պապիրոս կոչուած եղէգը՝ որու ներքին մաշկը հին ատեն իբրեւ թուղթ կը ծառայէր։

Տարածութիւնն է իբր 1,000,000 քիլիմ. քառ. եւ բնակչաց թիւն է 7,000 000։

Մայրաքաղաքն է ԳԱՀԻՐԷ՝ Նեղոսի մօտ։ Նոր շինուած թաղը շատ գեղեցիկ է։ Ասոր մօտերը կը գտնուին՝ Քրիստոսէ հազարաւոր տարիներ առաջ շինուած բարձրաբերձ բուրգերը։

Միջերկրականի վրայ կը գտնուին Բոզէր, Տամիէր, Բոռ-Սայիտ *բայց մանաւանդ* Ալեքսանդրիա *վա-*

ռաւոր և վանաւաչահ նաւահանգիստը։ Կարմիր ծովու վրայ կը գտնուի Սուէզ։ Ներքին գլխաւոր քաղաքներն են Թանթան, Տամէնհուր, Զակազիկ, Մանսուրահ, Ֆայում եւայլն։

Նեղոս գետ, Պապիրոս և Բուրդ

ԳԻՏԵԼԻՔ

Հին դարերէ ի վեր Եգիպտոս նշանաւոր եղած է իւր անմման արգասաւորութեամբ և բարձր քաղաքակրթութիւնով, Եգիպտոսի Փոխարքան կը կոչուի Խըտիվ։ Եգիպտոս կը գտնուի ընդ գերիշխանութեամբ Օսմանեան Պետութեան։

ԴԱՍ Գ.

ՊԷՐՊԷՐԻՍՏԱՆ

Այս անունով կը կոչուի հիւսիսային Ափրիկէի այն մասը՝ որ Եգիպտոսէ մինչեւ Ատլանտեան ովկիանոս կը տարածուի և կը պարունակէ չորս երկիրներ ԹԱՐԱՊՈՒԼՈՒՍ, ԹՈՒՆՈՒԶ, ԱԼՃԷՐԻ կամ ՃԷԶԱՅԻՐ և ՄԱՐՕՔ։

Այս երկիրը՝ բաց ի Թարապուլուսէ՝ լեռնային է ընդհանրապէս և օդն ալ՝ Ափրիկէի միւս երկիրներուն նայելով՝ քիչ մը բարեխառն է։ Կ'արտադրէ արմտիք, ծխախոտ, արմաւ, ձիթենի, նարնջենի, որթատունկ, շաքարեղէգ եւայլն։

Պէրպէրիստան բաւական հարուստ հանքեր և ընտանի կենդանիներ ալ ունի։ Բնակիչք մահմէտական են։

ԴԱՍ Գ.

ԹԱՐԱՊՈՒԼՈՒՍ

Այս ընդարձակ ու տափարակ երկիրը կը տարածուի Եգիպտոսի և Թունուզի միջեւ։ Ունի 1 000 000 քիլմ. քառ. տարածութիւն և 1.000.000 ի չափ ալ բնակիչ։ Գլխաւոր քաղաքներն են ԹՐԻՓՕԼԻ կամ ԹԱՐԱՊՈՒԼՈՒՍԸ ՂԱՐՊ, Մէջերկրականի վրայ նաւահանգիստ է։ Երեւելի են նաեւ Պէնկազի և դէպի հարաւ՝ Ֆէզզանի անապատին մէջ՝ Մուրզուք քաղաքը։

ԴԱՍ Ե.

ԹՈՒՆՈՒՉ

ԹՈՒՆՈՒՉ Ափրիկէի ամենէն հիւսիսային երկիրն է՝ ի մէջ Թարապուլուսի և Ալճէրիոյ. — Ունի 120,000 քիլմ. քառ. տարածութիւն և 2,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԹՈՒՆՈՒՉ. Միջերկրականի մօտ՝ ուր կը գտնուին հին Կարքեդոնի աւերակները։ Երեւելի են նաեւ Կապէս, Պիզէրթա, Քէրուան, Համամէթ եւայլն։

ԴԱՍ Զ.

ԱԼՃԷՐԻ ԿԱՄ ՃԷԶԱՅԻՐ

ԱԼՃԷՐԻ՝ Ափրիկէի ամենէն հարուստ և քաղաքակրթեալ երկիրներէն մին է և կը տարածուի Թունուզի և Մարոքի միջեւ։

Ունի 670,000 քիլմ. քառակուսի տարածութիւն եւ 4,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԱԼՃԷՐԻ, ամուր եւ վաճառաշահ նաւահանգիստ է. կը բաժնուի երկու մասերու, Հին թաղ և Նոր թաղ, որ շատ գեղեցիկ է։

Երեւելի նաւահանգիստներն են նաև Օրան, Պոնֆ, Ֆիլիփվիլ, Մոսթականէմ։

ԳԻՏԵԼԻՔ

Ճէզայիր՝ Պէրպէրիստանի ամենէն հարուստ և քաղաքակրթեալ երկիրն է։ Բնակիչք մահմէտական են։

ԴԱՍ Է.

ՏԷՐՈՒԹԻՆ ՄԱՐՈՔԻ

ՄԱՐՈՔ կը տարածուի Ճէզայիրէն մինչեւ Ատլանտեան ովկիանոս։

Ունի 680,000 քիլմ. քառակուսի տարածութիւն. և 6,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՖԷՍ, ճարտարարուեստ ու վաճառաշահ քաղաք է։ Ունի Մարոքէն անուն գեղեցիկ ձեռագործներ։

Երեւելի է նաեւ Մարոք, իսկ իբր նաւահանգիստ կարեւոր են Թանճէր, Մոկասոր և Մազական։

ԳԻՏԵԼԻՔ

Մարոքի աշխարհագրական դիրքը շատ գեղեցիկ է և ծովային վաճառականութեան խիստ յարմար։ Ունի արմտեաց, կաշւոյ, մետաքսեղինաց, ճէթի, վայրի գազանաց մորթի առուտուր եւայլն։

ԴԱՍ Ը.

ՍԱՀԱՐԱ ԿԱՄ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ

Հիւսիսային Ափրիկէի այս ընդարձակ երկիրը աշխարհիս ամենէն մեծ անապատն է. կլիման սոսկալի կերպով տաք և աւազային մրրիկներն ալ անպակաս են։

Գլխաւոր ովասիսներն են Թուաթ, Թիտիքէթ, Աsrար, Թիպպու, Պիլմա, Թական եւայլն։

Բնակիչք կը հաշուուին իբր 4,000,000 (կարծեօք)։

ԴԱՍ Թ.

ՆՈՒՊԻԱ

ՆՈՒՊԻԱ կը տարածուի Եգիպտոսի հարաւակողմը։ Այս երկրին մինակ միջին մասերը բարեխառն են՝ Նեղոս գետին շնորհիւ, մնացեալ տեղուանքը աւազուտ անապատներ են և կլիման ալ սաստիկ տաք և վատառողջ է։

Գլխաւոր բոյսերն են բրինձ, եգիպտացորեն, գարի, ծխախոտ, բամպակ, թուզ, արմաւ եւայլն։

Տեղական բերոց մէջ կարեւորներն են նաեւ փըղոսկրը, խէժը, ջայլամի փետուրը, ոսկւոյ փոշին, վայրի գազանաց մորթը եւայլն։

Նուպիա ունի 1,200,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 4,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՔԱՐԹՈՒՄ, Նեղոսի երկու ճիւ-

ղերուն միացման տեղը՝ ամուր և վաճառաշահ քաղաք է։

Երեւելի են նաեւ Պէրպէր, Քorsoքան, Նոր Տոնկոյա, Սէնաար։ Իսկ Կարմիր ծովուն վրայ նաւահանգիստն է Սուաքիմ։

ԳԻՏԵԼԻՔ

Նուպիա կը գտնուի ընդ գերիշխանութեամբ Եգիպտոսի։ Բնակիչք կը պատկանին Արաբական ցեղին, եւ կրօնիւ մահմէտական են։

ԴԱՍ Ժ.

ԵԹՈՎՊԻԱ ԿԱՄ ՀԱՊԷՇԻՍՏԱՆ

ԵԹՈՎՊԻԱ փոքր ու լեռնային երկիր մ'է՝ Նուպիոյ հարաւակողմը։ Այս երկրին մէջ Մայիսէն մինչեւ Սեպտեմբեր կանոնաւորապէս կ'անձրեւէ։ Գլխաւոր բոյսերն են ցորեն, բրինձ, բամպակ, շաքարեղէգ, խահուէ, արմաւ, խէժ և աղնիւ փայտ։

Ունի ընտանի եւ վայրի շատ մը կենդանիներ։

Տարածութիւնն է 800,000 քիլմ. քառակուսի և բնակիչն է 3,000,000 ի չափ։

ԵԹՈՎՊԻԱ բաժնուած է այլ եւ այլ ինքնագլուխ իշխանութեանց։

Գլխաւոր քաղաքներն են ԿՈՆՏԱՐ, մայրաքաղաք Ամհարայի որ վաճառաշահ քաղաք է։

Ախսում. գլխաւոր քաղաքն է Թիկրէ. — Երեւելի են նաեւ Կալոպաս, Սահմարա և այլն։

ԳԻՏԵԼԻՔ

Եթովպիա իւր լեռնային կաղմութեան. բարձր գագաթներուն և բնական սիրուն տեսարաններուն համար՝ կոչուած է Ափրիկեան Զուիցերի։ Բնակիչք պատերազմասէր են։

ԴԱՍ ԺԱ.

ՍԵՆԷԿԱՄՊԻԱ

ՍԵՆԷԿԱՄՊԻԱ Ափրիկէի ամենէն արեւմտեան երկիրն է և այս անունն առած է իւր մէջէն անցնող Սենէկալ ու Կամպիա գետերէն։ Սենէկամպիա ընդհանրապէս տափարակ երկիր մ'է, մանաւանդ ծովեզերքն աւելի ցած ըլլալուն՝ շատ տաք կ'ընէ։

Սենէկամպիա Հասարակածային ամէն տեսակ բուսաբերութենէ ի զատ՝ ունի նաեւ Պաօպապ ըսուած հսկայ ծառը։

Այս երկիրն ունի 920,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 10,000,000 ի չափ բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են՝ Ս. Լուի, Սենէկալ գետին բերանը ամուր և վաճառաշահ քաղաք է. նոյնպէս Տաffար և Կորէ կը պատկանին Ֆռանսայի։

Պաթրուսթ և Ճորճսթաուն կը պատկանին Անգլիոյ։

Փորթոկալի կը վերաբերին Բիսսաու-Քաշէս և Բիսսաու-Կէպա քաղաքները։

Ասոնցմէ ի զատ երկրին ներքին մասանց մէջ կան՝ այլ եւ այլ անկախ իշխանութիւններ։

ԴԱՍ ԺԲ.

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԿՈՒԻՆԻԱ.

Հիւսիսային Կուինիա կը տարածուի Սենէկամ. պիաէ մինչեւ Լօփէզ հրուանդանը։ Երկիրը լեռնային ու խիտ անտառներով ծածկուած է։ Օդը շատ տաք, և տեղ տեղ ալ վատառողջ է։ Գլխաւոր բերքերն են արմաւ, ծխախոտ, եգիպտացորեն, բրինձ, պանան, լեզակ, նարինջ, համեմունք եւ այլն։

Երկրին գետերը իրենց աւազին հետ ոսկւոյ փոշի կը բերեն։

Հիւսիսային Կուինիա ունի 2,000,000 քիլոմ. քառ. տարածութիւն և 12 000,000 բնակիչ։

Երկիրը բաժնուած է այլ եւ այլ իշխանութեանց։

1. Սիէրա Լէօն — գլխաւոր քաղաքն է Ֆրիթաուն. — 2. Լիպէրիա. — գլխաւոր քաղաքն է Մոնրաւիա. — 3. Փղոսկրի ծովեզր. — գլխաւոր քաղաքն է Կրան-Պասամ. — 4. Ոսկւոյ ծովեզր. գլխ. քաղաքներն են Քէյպ-Քոռս, և Էլմինա. — 5. Աշանթիի երկիր. — գլխաւոր քաղաքն է՝ Գումասի. — 6. Գերեաց ծովեզր. — գլխաւոր քաղաքներն են Ապոմէ, Ուիտան և Քորբօ-Նովօ. — 7. Պէնէնի երկիր, որոր տէրութիւն մ'է համանուն քաղաքաւ։

ԴԱՍ ԺԳ.

ՆԻԿՐԿՏԻԱ ԿԱՄ ՍՈՒՏԱՆ

Այս ընդարձակ երկրին սահմաններն են հիւսիսէն՝ Սահարա, արեւելքէն՝ Եթովպիա, հարաւէն՝

կուինիա և Ազատ Քոնկո, արեւմուտքէն՝ Սենէկամ-պիա։

Այս անապատային երկրին մէջ կը գտնուին ընդարձակ ու բարեբեր ովասիսներ։ Նիկէր մեծ գետը այս երկրէն կ՚անցնի։ Գլխաւոր հարստութիւններն են՝ (տաք երկրի յատուկ բոյրերէ ի զատ) ոսկւոյ փոշի, փղոսկր, Ջայլամի փետուր, խէժ, գոհարեղէն, վայրի կենդանեաց մորթեր եւայլն։

Սուատան ունի իբր 3,000 000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն և 4,500,000 բնակիչ։

Սուատան բաժնուած է այլ և այլ իշխանութեանց, որք են՝

1. Ուասուլօ. 2. Պամպարայի երկիր, գլխաւոր քաղաքներն են Սէկու և Ճէնի. 3. Թոմպուքթու. 4. Կանսо. 5. Սաքաթու. 6. Գորնու. գլխաւոր քաղաքն է Գուքա. 7. Պակիրմի. գլխաւոր քաղաքն է Մասէյնա. 8. Ուատա. գլխաւոր քաղաքն է Ապէքր. 9. իսկ Տարֆուր և Քորտոֆան՝ արեւելեան կողմը ընդարձակ ովասիսներ են՝ Եգիպտական իշխանութեան ներքեւ։

ԴԱՍ ԺԴ.

ՍՕՄԱԼ

ՍՕՄԱԼ Աֆրիկէի ամենէն արեւելեան երկիրն է և կը տարածուի Պապ-իւլ-Մանտէպի նեղուցէն ու Եթովպիայէն մինչեւ Զանկէպար։

Այս երկրին ծովեզերքները տափարակ ու ճախ-

ճախուտ ըլլալով՝ օդը վատառողջ և շատ տեղ ալ սառուցիկ տաք են։ Գլխաւոր հարստութիւններն են դեղին սաթ, խէժ և խնկեղէն։ Տեղացիք կ՚զբաղին նախնական արհեստներով և վաճառականութեամբ։

Սօմալ ունի 850,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և իբր 5,000,000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են Զէյլա, Պէրպէրա և Մակատոնոս՝ որոնք նաւահանգիստներ են։

ԴԱՍ ԺԵ.

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒԻՆԻԱ

Այս երկրին սահմաններն են հիւսիսէն՝ հիւսիսային Կուինիա, արեւելքէն և հարաւէն՝ Ազատ Քոնկո, և արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս։

Երկրին ծովեզերքները ցած ու վատառողջ են. միայն ներքին մասերն են բարեխառն։

Քոնկո կամ Լիվինկսթընի մեծ գետը այս երկրին արեւելքէն արեւմուտք կը վազէ։

Հարաւային Կուինիա Այրեցեալ գօտւոյ ամէն տեսակ հարուստ բուսաբերութիւն ունի, նոյնպէս ոսկւոյ, ծծումբի, պղնձի և քարիւղի հանքեր։

Երկիրն ունի 1,000,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 11,000,000 ի չափ բնակիչ։

Բաժնուած է 6 գլխաւոր մասերու.

1. Թագաւորութիւն Լօանկօի գլ. քաղաքն է Պօալի

2. Քակոնկոյի երկիր, գլխաւոր քաղաքն է Բէնկէլէ
3. Քոնկոյի երկիր » » Սան-Սալվատոր
4. Անկոլայի երկիր » » Ս. Բոլ-տր-Լուանտա
5. Պէնկուէլա » » Ս. Ֆիլիփ-տր-Պէնկուէլա
6. Մոսամէտէս » » Մոսամէտէս

Վերջին երեք երկիրները Փորթուկալի կը պատկանին։

Ասոնցմէ ի զատ՝ Ֆռանսա եւս ունի կարեւոր կալուած մը՝ Ֆռանսական Քոնկո *անուամբ, որու գլխ. քաղաքներն են* Պրանզաւիլ, Լիպրէվիլ *և* Կապոն։

ԴԱՍ ԺԶ.

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՆԻԿՐԻՏԻԱ ԿԱՄ ԱԶԱՏ ՔՈՆԿՈ

Այս ընդարձակ երկիրը, որ կը գտնուի հասարակածի ներքեւ, ներկայ դարուս վերջը ճանչցուեցաւ Եւրոպացի ու Ամերիկացի խուզարկուներու շնորհիւ, ուր Եւրոպական ամէն ազգ ազատ է առեւտրով զբաղիլ։

Քոնկո բաժնուած է այլ եւ այլ տեղական իշխանութեանց, որոնց գլխաւոր քաղաքներն են Մրսալալա, Թապորա, Ուկուկո, Մբբուրբուա, Ունինի, Քասանկա, *եւայլն։ Այս երկիրը գտան* Լիվինկսթըն *և* Սթէնլի *անուանի խուզարկուները։*

ԴԱՍ ԺԷ.

ՕԹԷՆԹԱՑԻՈՅ ԵՐԿԻՐ

Այս երկիրը կը գտնուի Բարեյուսոյ գաղթականութեան հիւսիսային կողմը։ Բնիկները կռապաշտ սեւամորթեր են, կ'զբաղին խաշնարածութեամբ ու որսորդութեամբ։ Իրենց բնակարանները կը կոչուին Քրա'ալ որ, գլխիվայր դարձած կողովներու ձեւն ունին։

ԴԱՍ ԺԸ.

ԲԱՐԵՅՈՒՍՈՅ ԵՐԿԻՐ

ՔԱՓԻ տէրութիւնը Ափրիկէի ամենէն հարաւային երկիրն եւ քաղաքակրթեալ ու շատ հարուստ երկիր մ'է։ Թէեւ լեռնային, բայց ունի գեղեցիկ ու բարեբեր հովիտներ, որոց մէջ յառաջ կուգան արմտիք, նարինջ, լիմոն, թուզ, որթատունկ, բամպակ, խահուէ, շաքարեղէգ եւայլն։ Շատ յարգի է այս երկրի գինին։ Նոյնպէս կը գտնուի ադամանդի հանք։ Կլիման ընդհանրապէս բարեխառն է, բայց գարնան սկիզբները սոսկալի փոթորիկներ կը պատահին։

Ունի 630,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 1,350,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՔԱՓ, ծաղկեալ ու վաճառաշահ նաւահանգիստ է։ Երեւելի են նաեւ Բօռթ-Էլիզապէթ, Կոստանդինա եւայլն։

Այս երկիրը կը պատկանի Անգլիոյ։

ԴԱՍ ԺԹ.

ՖԱՖՐԱՍՏԱՆ

ՖԱՖՐԱՍՏԱՆ կը տարածուի Հնդկաց ովկիանոսի, Քափի երկրին, Մոզամպիքի և Օթէնթիաի միջեւ։ Լեռնային երկիր մ'է, անապատներուն մէջ կը գտնուին գեղեցիկ ովասիսներ։ Այս երկրէն կ'անցնի Զամպէզ կարեւոր գետը։

Ֆաֆրաստան ունի 1,200,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և իբր 2,000 000 բնակիչ։

Զուլուներու բնակարան

Գլխաւոր բաժանումներն են.

1. Նաղալի երկիր. գլխ. քաղաքն է Բօռ-Նաղալ։ 2. Հանրապետութիւն Օրէնճի. գլխ. քաղաքն է Պլէոմֆոնթայն։ 3. Հանրապետութիւն Թրանսուալի. գլխա-

ւոր քաղաքն է Իրէգորիա։ 4. Զուլուցերու երկիր՝ ո-
րու բնակիչք վայրենի և պատերազմիկ են։

ԴԱՍ Ի.

ՄՈԶԱՄՊԻՔ

Արեւելեան Ափրիկէի կարեւոր երկիրներէն մին է։ Կլիման ներքին մասանց մէջ բարեխառն, իսկ ծովեզերքը տաք ու վատառողջ է։ Գլխաւոր բերքերն են բրինձ, արմտիք, շաքարեղէգ, խահուէ, բամպակ, լեզակ, տրմաւ, նարինջ եւայլն։

Երկրին մէջ նաեւ կը գտնուին ոսկւոյ, արծաթի և ադամանդի հանքեր։

Մոզամպիք ունի 900.000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 2 ½ միլիոն բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են ՄՈԶԱՄՊԻՔ որ համանուն փոքր կղզւոյն վրայ բանուկ նաւահանգիստ մ'է։

Երեւելի են նաեւ Քիլիմանէ և Սոֆալա որք կարեւոր նաւահանգիստներ են։ Ներքին քաղաքներն են Սէնա և Թէթէ։ Մոզամպիք կը պատկանի Անգլիոյ, իսկ Փորթոկալ այսօր քիչ մը տեղ միայն ունի հոն։

ԴԱՍ ԻԱ.

ԶԱՆԿԷՊԱՐ

ԶԱՆԿԷՊԱՐ ծովեզերեայ նեղ ու երկար երկիր մ'է արեւելեան Ափրիկէի մէջ։ Երկիրը լեռնային է, բայց

ունի ջրոյ հոսանքներ՝ որոնք երկիրը կ'արգասաւորեն։ Մովեղերեայ մասին կլիման վատառողջ, բայց ներսերը բարեխառն են։

Զանկէպար ունի 650,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 1,200 000 բնակիչ։

Գլխաւոր քաղաքներն են Զանկէպար, համանուն փոքր կղզւոյն վրայ գեղեցիկ ու բանուկ նաւահանգիստ է։

Երեւելի են նաեւ Պակամոյo, Մէլէնs, Քիլմա եւ Մակաsofuo։

Գերմանացիք՝ վերջին տարիներս այս երկրին այլ և այլ մասանց տէր եղան։

1

Ափրիկէ երկրագնտիս ո՞ր մասը կը գրաւէ. — Ի՞նչ է իւր բնական ձեւը. — Ի՞նչ գիտես անոր մեծութեանը վրայ. — Որո՞նք են սահմանները. — Քանի՞ ովկէանոս եւ ի՞նչ ծովեր կը տեսնէ. — Հիւսիսային եւ արեւմտեան կողմերը ո՞ր ծոցերը կան. — Ո՞ր նեղուցներով բաժնուած է Ասիէ և որո՞վ Եւրոպէ. — Ափրիկէի բնական կազմութիւնն ի՞նչպէս է. — Որո՞նք են գլխաւոր լեռնագագաթները. — Ի՞նչ երեւելի հրուանդաններ կան։

2

Ափրիկէ քանի՞ աւազան ունի. — Ուսկի՞ց կը բղխի եւ ո՞ւր կը թափի Նեղոս. — Որո՞նք են Ատլանտեանի հարկատուները. — Նիկէր և Քոնկո գետերը ո՞ր երկիրները կը թրջեն. — Ո՞ր գետերը Հնդկաց ովկէանոսը կը թափին. — Ո՞ւր կը գտնուի Զատ լիճը. — Հասարակածի մօտերը ո՞ր մեծ լիճերը կան. — Ատլանտ-

եանի մէջ ո՞ր կղզիները և Արշիպեղագոսները կը գտնուին . Որոնք Հնդկաց ովկէանոսի մէջ են . — Ամենէն մեծ անապատը ո՞րն է :

3

Ափրիկէ ո՞րչափ տարածութիւն եւ ո՞րքան բնակիչ ունի . — Ափրիկէի մեծագոյն մասն ի՞նչ գօտիի ներքեւ է . — Ո՞ր երկիրները Հասարակածի տակ կը գտնուին . — Ափրիկէ ի՞նչ տեսակ բոյսեր կ'արտադրէ . — Ո՞ր երկրին մէջ կը գտնուի ադամանդ . Ափրիկէ ուրիշ ի՞նչ հանքեր ունի . — Որո՞նք են ընտանի ու վայրի կենդանիները . — Ուղտը ի՞նչ մասնաւոր կարեւորութիւն ունի Ափրիկէի անապատային երկիրներուն համար ,

4

Ափրիկէ քանի՞ տերութեանց բաժնուած է . — Բնակչաց քաղաքակրթութեանը մասին ի՞նչ գիտես . — Ափրիկէի ծովեզերեայ երկիրներու որո՞նք են . — Եւրոպական ո՞ր տերութիւններն Ափրիկէի մէջ ստացուածքներ ունին եւ որո՞նք են :

ՀՐԱՀԱՆԳ.

1. Բօռ-Սայիտէ նաւով ճամբայ ելնելով Ափրիկէի շրջանը պիտի ընենք : Պէտք է ցոյց տանք այն ծովեզերեայ երկիրներն ու տեղեաց գլխաւոր նաւահանգիստներն՝ որոնց առաջէն պիտի անցնինք :

2. Սեւ գրատախտակի մը վրայ [որչափ որ կարելի է] Ափրիկէ մը պիտի գծենք և անոր վրայ պիտի նշանակենք գլխաւոր գետերը ու անոնց վրան ու բերանը գտնուած կարեւոր քաղաքները :

3. Ամերիկէն պէտք է նաւով երթալ ճաբոնի մայրաքաղաքը և բացատրել մեր այս ուղեւորութեան մանրամասնութիւնները :

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ Ա.

ԱՄԵՐԻԿԱ, որ կը կոչուի նաեւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, կը գտնուի Արեւմտեան կիսագնդին մէջ և կը տարածուի Հիւսիսային Բեւեռէն մինչ Հարաւային Բեւեռ։

Ամերիկա կը բաժնուի երկու ցամաքներու, Հիւսիսային Ամերիկա և Հարաւ. Ամերիկա, որոնք միացած են Փանամայի պարանոցով։

Նոր Աշխարհը շրջապատած են չորս ովկէանոսներ, Արջային, հիւսիսային կնդմը, որմէ ձեւացած են Ս. Լորանի, Մեխիկայի և Հոնիտուրասի գլխաւոր ծոցերը, արեւմտեան կողմը՝ Խաղաղական ովկէանոս. որմէ ձեւացած են Քալիֆորնիոյ և Փանամայի ծոցերը։

Ատլանտեանէ ձեւացած են՝ Պաֆֆինի և Հուսընի ծովերը։

Նոր աշխարհի գլխաւոր նեղուցներն են՝ Պէհրինկայի նեղուց՝ Արջային և Խաղաղական ովկէանոսներու միջեւ։ Դէպի հարաւ կը գտնուին Տիվիսի եւ Պաֆֆինի նեղուցները. — Մակէլլանի նեղուց՝ հարաւային Ամերիկայի և Հրոյ երկրին միջեւ։

Նոր Աշխարհի գլխաւոր գետերն են՝ Մաքենզի, Մայն, Պաֆն, Զրէչի, Նէլսըն, Ալպանի, և Սէվէրն որք կը թափին հիւսիսային ուսաղանին մէջ։

Սէն-Լորան կը թափի Ատլանտեան։ Իսկ Մեքսի-

կայի ծոցը կը թափին երկու կարեւոր գետեր՝ Միսուրի և Մանուանդ Միսիսիպի։

Հարաւային Ամերիկայէն Ատլանտեան թափող գետերն են՝ Օրինոքո, Ամազոն, Թոքանթին, Սան-Ֆրանչիսկո, Բիո-տը-Բլատա եւայլն։

Նիակարայի Ջրվէժ

Խաղաղականի մէջ կը թափին Նուէոն, Օրէկոն, Քոլումպիա և Բիո-Քոլորատո։

Հիւսիսային Ամերիկայի գլխաւոր լիճերն են Մեծ

Արջ, Դեբեաց, Աբապասֆա, Ունիփէկ, Վերին, Միջիկան, Հուրոն, Օնքարիո եւ Էրիէ։ Այս լիճէն կը բիւղի գետ մը՝ որ կը ձեւացնէ 50 մէթր բարձրութեամբ Նիակարայի նշանաւոր ջրվէժը։ Հար. Ամերիկայի մէջ են Մարամայիպո, Թիթիքաֆա, և Լոսֆաբոս լիճերը։

Ամերիկայի մէջ կը գտնուին վեց գլխաւոր թերակղզիներ, Լապրատոր, Նոր-Սկոտիա, Ֆլորիտա, և Նուքաբան՝ ցամաքին արեւելեան կողմը։

Ալասֆա և Քալիֆոռնիա՝ արեւմտեան կողմը՝ Խաղաղականի մէջ։

Նոր Աշխարհի գլխաւոր կղզիներն են՝ Կրէնլանտա՝ Սառուցեալ ովկիանոսի մէջ։

Վիքտորիա, Բրէնս-Ալպէր, Մէլվիլ, Քրմպերլէնտ՝ նոյնպէս Սառուցեալ ովկիանոսի մէջ և որոնք կը կոչուին Արջային կղզիք։

Ատլանտեանի մէջ կը գտնուին Նիու-Ֆաուլէնտ (Նոր երկիր), Ս. Պետրոս, Միքլոն և Բրէնս-Էտուար՝ Ս. Լորան գետին բերնին մօտ։

Անդիլեան ծովուն մէջ կը գտնուին Պէրմուտեան, Լուքայեան, Մեծ և Փոքր Անդիլեանց արշիպեղագոսք։ Մեծ Անդիլեանք կը բաժնուին չորս մեծ ու կարեւոր կղզիներու. որք են՝ Քուպա, Հայիթի, Փորթո-Ռիքո, Նամայիքա։

Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան կողմը կը գտնուին Ալէուքեանք, Թագուհի Շարլոթ և Վանքուվր կղզիք։ Հարաւային արեւմտեան կողմը կը գտնուին՝ Չիլոէ, Ուէլինկթըն, Հանուվր, և Ասուանամոր արշիպեղագոս։ Իսկ Հար. Ամերիկայի Հար. ծայրը կը գտնուի Հրոյ Երկիր կոչուած հրաբխային փոքր կղզին։

ԳԱՒ Ը.

Նոր Աշխարհի հրուանդաններն են՝

Ֆէրուէլ, Կրօկնլանտիոյ հարաւային ծայրը. — Շառլը՝ Լապրատորի արեւելեան կողմը. — Հադէրաս Մխացեալ Նահանգաց արեւելեան կողմը։ — Ս. Ղուկաս՝ Քալիֆորնիոյ հարաւային կողմը. — Ս. Լուիզ՝ Լապրատորի արեւելեան կողմը։ Սէյպրլ՝ Նոր Սկովտիոյ հարաւային կողմը։ — Կալիֆնաս՝ Քոլոմպիոյ հիւսիսային կողմը։ — Գլուխ Հօրն՝ Հրոյ երկրին հարաւային կողմը։

Նոր Աշխարհի ամենէ նշանաւոր լեռնաշղթան է Ապառաժ գօտին, որ Ալասքայէն սկսեալ՝ ցամաքին արեւմուտքէն կ'երկարի մինչեւ հարաւ՝ ի Հրոյ Երկիր։ Այս գօտին Հիւսիսային Ամերիկայի մէջ կը կոչուի Ապառաժ, Մեքսիկայի և Կեդրոնական Ամերիկայի մէջ՝ Քորտիլեան. իսկ Հարաւային Ամերիկայի մէջ կ'առնու Անտեան կամ Ատէզ լերինք անունը։

Այս երեւելի շղթային գլխաւոր հրաբուխներն են՝ Ս. Եղիա, Ակոնկակուա, Փիչինկա, Արէգբփա, Քոբոփաքսի եւայլն։

Նոր Աշխարհը հիւս. բեւեռէն ի հարաւային բեւեռարարածուելով՝ կը կրէ հինգ գօտիներու ներգործութիւնը։ Երկու ծայրերը սառուցեալ. միջին մասը Հասարակածի տակ կը գտնուի, իսկ բեւեռներու և Հասարակածի մինչև գտնուած մասերը բարեխառն են։

Ամերիկայի հողն ընդհանրապէս բարեբեր է և առատօրէն կ'արտադրէ արմտիք. բրինձ, բամպակ, եգիպտացորեն, հաճար, վարսակ, մանեօքա, գետնախընձոր, նարինջ. որթատունկ, քօքօ, պանան, շա-

քարեղէգ, խահուէ, ծխախոտ, ներկի նիւթեր, բժշկական բոյսեր, վանիլիա, քինա, լեղակ, պտղատու, ծառեր, քաքաօ, չինուհեան ազնիւ փայտ եւայլն։

Քրիստաֆոր Քոլոմպոս

Հանքերու մասին ալ շատ հարուստ է Նոր Աշխարհը, ունի հանքածուխ, ոսկի, քարիւղ, պղինձ, բլա-

դին, երկաթ, անդիկ, թանկագին քարեր, ծծումբ, եւայլն։

Զանազան ընտանի կենդանիներ ունի, որոց մէջ նշանաւոր է լաման, որ ուղտի կը նմանի, կը գտնուին նաեւ շատ տեսակ վայրի գազաններ, ինչպէս Գակուար (կարմիր վագր), Եակուար գայլ, արջ, կոկորդիլոս, մեծամեծ օձեր, կինճ, կապիկ, ջայլամ եւն։

Ամերիկա իւր կղզիներով հանդերձ՝ ունի 42,000,000 քիլմ. քառ. տարածութիւն՝ որով աւելի մեծ է քան Ասիան։ Իսկ բնակչաց թիւն է 102,000,000 որոց մեծագոյն մասը Եւրոպացի գաղթականներէ սերած է։

Նոր Աշխարհը մինչեւ 1492 թուականը՝ անծանօթ էր Եւրոպացւոց, որ ատեն՝ Ճենովացի անուանի նաւապետ մը՝ Քրիստափոր-Քոլոմպոս, Եւրոպայէն դէպ արեւմուտք նաւարկելով՝ գտաւ Նոր Աշխարհի մէկ մասը։ Բայց այս Նոր Աշխարհն փոխանակ Քոլոմպոսի անուամբը կոչուելու, ԱՄԵՐԻԿԱ կոչուեցաւ Իտալացի Ամերիկոս Վէսփուչչի ճանապարհորդին անունով՝ որ այս ցամաքի մասին գրաւոր տեղեկութիւններ բերած էր յԵւրոպա։

Բաց ի Բրիտանական Ամերիկայէ ու Միացեալ նահանգներէ որոց կրօնն է բողոքականութիւն, մնացեալ երկիրներու բնակիչք կաթոլիկ են։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ԴԱՍ Դ.

ԿՐՕԷՆԼԱՆԴԱ

Այս մեծատարած ու սառնապատ կղզին կը գըտնուի Հիւս. Ամերիկայի հիւս. արեւելեան կողմը։ Մեայն հարաւային կողմը բնակելի եւ քիչ շատ ճանչցուած է։ Տեղացիք՝ թուով իրը 14 000 կարճահասակ մարդիկ են և կը կոչուին Եսքիմացի։ Գլխաւոր զբաղմունքնին է ձկնորսութիւն և որսորդութիւն։ Կրօէնլանտա կը պատկանի Տաքմարքայի։ Կլիման սաստիկ ցուրտ է և տարուան 9-10 ամիսը խիստ սաստիկ ձմեռ կ'ընէ։

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ

ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ կամ ՔԱՆԱՏԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆը կը գրաւէ Հիւս. Ամերիկայի հիւսիսային մասը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Արջային ովկիանոս, արեւելքէն՝ Ատլանտեան, հարաւէն՝ Միացեալ Նահանգք և արեւմուտքէն՝ Ալասքա և Մեծ ովկիանոս։

Բրիտանական Ամերիկայի հիւս. արեւմտ. մասերը տափարակ ու ճախճախուտ են, միայն արեւելեան ու հարաւային կողմերը քիչ քանակութեամբ՝ ցուրտ երկրի բոյսեր յառաջ կուգան։ Երկրին մէջ կը գըտնուին ոսկւոյ, արծաթի, երկաթի, կապարի, պղնձի եւայլն հանքեր, որոնք ընդհանրապէս կը շահագործուին։

Նոր Բրիտանիա ունի 8,300.000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 4,500.000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՕԹԱՎԱ համանուն գետակի վրայ, ունի ատաղձի մեծ վաճառականութիւն։

Երեւելի են նաև Քէպէք և Մոնրէալ՝ որոնք վաճառաշահ նաւահանգիստներ են Ս. Լորանի վրայ։

Երեւելի են նաեւ Թորոնթո, Ս. Օնանցէս, Հալիֆաքս եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ

Այս երկիրը թէեւ իրենէ շատ հարուստ չէ, բայց տեղացւոց աշխատութեամբ՝ երկրագործութիւն, արուեստ, ձեռագործ, ճարտարութիւն և կրթութիւն շատ զարգացած են։ Այս երկրին առաջին տէրն էր Ֆռանսա. հիմայ ալ երկրին մէջ բաւական Ֆռանսացիներ կը գտնուին։

ԳԱՍ Դ.

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ կը գրաւեն Հիւսիսային Ամերիկայի կեդրոնական մասը։ Սահմանները են հիւսիսէն՝ Բրիտանական Ամերիկա. արեւելքէն՝ Ատլանտեան. հարաւէն՝ Անդիլեան ծով, Մեքսիկա և Մեքսիկայի ծոց. արեւմուտքէն՝ Խաղաղական ովկէանոս։

Այս երկրին կեդրոնական մասը ընդարձակ հովիտ

մ'է, որուն մէջէն կ'անցնին Միսուրի և Միսիսիպի մեծ գետերը։ Երկրին օդը ընդհանրապէս բարեխառն է, միայն հարաւային ծովեզերեայ մասերը տաք կ'ընեն։ Միացեալ Նահանգաց մէջ հողագործութիւնը շատ ծաղկած է։ Առատօրէն յառաջ կուգան արմտիք, բամպակ, գետնախնձոր, ծխախոտ, լեղակ, բրինձ, շաքարեղէգ, որթեատունկ, պտղատու ծառեր, դեղօրայք, մեծատարած և հսկայ անտառներ՝ մանաւանդ ի Քալիֆորնիա.

Միացեալ Նահանգաց մէջ կան հանքածխոյ, քարիւղի, կապարի, զինկի, ոսկւոյ, պղնձի, սնդիկի, շինութեան քարերու առատ հանքեր։

Ունի ամէն տեսակ ընտանի կենդանի և հարաւային մասանց մէջ ալ կոկորդիլոս, ընձուղտ եւ մեծամեծ օձեր։

Միացեալ Նահանգներն ունին 7,650,000 քիլմ. քառ. տարածութիւն և աւելի քան 65,000,000 բնակիչ։

Այս երկիրը բաժնուած է 45 Դաշնակից Նահանգներու։

Մայրաքաղաքն է ՈՒԱՇԻՆԿԹԸՆ. Փոթամագ գետին վրայ հոյակապ ու ծաղկեալ քաղաք է։

Երեւելի նաւահանգիստներն են՝ Բօրլանս, Պոսթըն, և մանաւանդ Նիու-Եորք, որ Դաշնակցութեան ամենէն բազմամարդ, վաճառաշահ ու ծաղկեալ քաղաքն է։ Նոյնպէս երեւելի են Զարլսդրն, Պալթիմոր, Նոր-Օռլէան և Կալվէսթրն։ Իսկ Խաղաղականի վրայ ամենէն երեւելի նաւահանգիստն է Սան-Ֆռանչիսկո։

Ներքին գլխաւոր քաղաքներն են՝ Ֆիլատէլֆիա, Չիքակո, Ս. Լուի, Բիչմոնտ, Ֆրանֆֆորտ, Սինսինաթի, Լուիզվիլ եւայլն։

Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային արեւմտեան կողմը գտնուած Ալասֆա անուն մեծ թերակղզին եւ որ ունի իրր 70,000 բնակիչ, կը պատկանի Միացեալ Նահանգաց։ Գլխաւոր քաղաքն է Նոր Արխանկել։

ԳԻՏԵԼԻՔ

Միացեալ Նահանգներն ի սկզբան Անգլիոյ գերիշխանութեան ներքեւ էին, բայց ասկից իրր մէկ դար առաջ բաժնուելով՝ կազմեցին առանձին Հանրապետութիւն մը։ Բնակիչք Եւրոպայէ գաղթած Անգլիացիներ, Իրլանտացիներ, Գերմաններ. Ֆռանսացիներ եւ այլ ազգեր են որոնք երկրին մէջ վերջին կատարելութեան հասուցած են արուեստ, ճարտարութիւն, ձեռագործ, գիտութիւն եւ դաստիարակութիւն, այնպէս որ Միացեալ Նահանգներն՝ այսօր շատ նախանձելի վիճակ մ'ունին։ Իրենց ազգային ժողովը կը կոչուի Քոնկրէս։ Երկրին պաշտօնական կրօնն է բողոքականութիւն։

ԳԱՍ Ե.

ՄԵՔՍԻԿԱ

ՄԵՔՍԻԿԱ Հիւսիսային Ամերիկայի ամենէն հարաւային երկիրն է եւ կը տարածուի Միացեալ Նահանգաց, Խաղաղականի, Կեդրոնական Ամերիկայի եւ Մեքսիկայի ծոցին միջեւ։

Մեքսիկա ընդհանրապէս լեռնային երկիր մ'է եւ

մը պարունակէ երկու հրաբուխ Փոփոքաթէպէլ (5,300 կ. բ.) և Օրիզապա (5,300 մ. բ.)։ Երկրին լեռնային մասերը բարեխառն, իսկ Մեքսիկայի ծոցին եզերքը շատ վատառողջ է, զի հոն կը տիրէ Դեղին ջերմ ըսուած մահացու հիւանդութիւնը։

Մեքսիկայի հողը խիստ բարեբեր է և կ'արտադրէ տաք երկրի ամէն տեսակ բոյսեր, ունի նաև ոսկւոյ, կապարի, պղնձի և արծաթի հանքեր։ Տարածութիւնն է 2,000,000 քիլմ. քառակուսի եւ բնակիչն է 10,000,000։

Մայրաքաղաքն է ՄԵՔՍԻԿՕ, ունի երեւելի համալսարաններ, մայր եկեղեցի և բանուկ վաճառականութիւն։

Երեւելի նաւահանգիստներն են՝ Վէրա-Քրուզ եւ Քամբէչ՝ Մեքսիկայի ծոցին վրայ։ — Մազալբան եւ Ագաբուլգօ՝ Խաղաղականի վրայ։

Ներքին քաղաքներն են՝ Բուէպլա, Մէրիտա, Թամփիքօ, Կուատալաժարա։

ԳԻՏԵԼԻՔ

Մեքսիկա թէ եւ բնականէն շատ հարուստ՝ բայց այնքան զարգացեալ երկիր մը չէ։ Իր վաճառականութեան նիւթերն են՝ խահուէ, վանիլիա, ծխախոտ, լեղակ, շաքար, քաքաօ, չինութեան ազնիւ փայտ, այլ եւ այլ մետաղներ, դեղօրայք եւայլն։

ԳԼՈՒԽ Զ.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Այս անուամբ կը կոչուի այն նեղ երկիրն՝ որ Մեքսիկայէ սկսեալ՝ կ'երկարի մինչեւ Փանամա։ Կեդրոնական Ամերիկա լեռնային երկիր մ'է և կը պարունակէ 35է աւելի հրաբուխներ։ Կլիման՝ ներքին մասանց մէջ զով իսկ ծովեզերքը վատառողջ է։

Կեդրոնական Ամերիկա ունի հարուստ բուսաբերութիւն և զանազան հանքեր։

Տարածութիւնն է 446,000 քիլմ քառակուսի և բնակչաց թիւն է 3,000,000։

Բաժնուած է հինգ առանձին Հանրապետութեանց որք են՝ Կուաթէմալա, Սան-Սալվատոր, Հոնտուրաս, Նիքարակուա և Քոսթա-Ռիքա։

ԿՈՒԱԹԷՄԱԼԱ

Հինգ հանրապետութեանց ամենէն մեծն է։ Ունի 1,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է Կուաթէմալա։

ՍԱՆ—ՍԱԼՎԱՏՕՐ

Խաղաղականի վրայ՝ ծաղկեալ ու վաճառաշահ հանրապետութիւն մ'է։

Մայրաքաղաքն է Սան-Սալվատոր։

ՀՈՆՏՈՒՐԱՍ

Կուաթէմալայի հարաւային արեւելեան կողմը,

ունի բնդարձակ արուստաներիները։ — Մայրաքաղաքն է Քոմայակուա կամ Վալատոլիտ։

ՆԻՔԱՐԱԳՈՒԱ

Սոյն հանրապետութիւնը կը տարածուի Հոնտուրասի հարաւակողմը։

ԿՈՍԴԱ-ՐԻԿԱ

Կեդրոնական Ամերիկայի ամենէն հարաւային հանրապետութիւնն է։ Ունի հարուստ բուսաբերութիւն և շինութեան ազնիւ փայտ։

Մայրաքաղաքն է Սան-Ճոզէ։

ԳԼԽՈՒ Է.

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ կը պարունակէ 12 տէրութիւն. — Քոլոմպիա, Վենէցուէլա, Կույանա, Էկուադոր, Պրազիլիա, Բէրու, Բարակուէ, Պոլիվիա, Ուրուկուա, Չիլի, Արճէնտին և Փարակոնիա։

ԳԼԽՈՒ Բ.

ՔՈԼՈՄՊԻԱ

ՔՈԼՈՄՊԻԱ կը գտնուի Հարաւային Ամերիկայի հիւսիսային կողմը։ Սահմաններն են հիւսիսէն՝ Ան-

գիլեան ծով, հիւսիսային արեւմուտքէն՝ Կեդրոնական Ամերիկա. արեւելքէն՝ Վենէցուէլլա, հարաւէն՝ Էգուատոր և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս։

Այս երկրին կլիման՝ լեռնային գաւառներու մէջ բարեխառն, իսկ ծովեզերքը տաք ու վատառողջ են։

Քոլոմպիա ունի տաք երկրի ամէն տեսակ առատ բուսաբերութիւն։ Կան նաեւ հարուստ հանքեր՝ որոնք երեսի վրայ թողուած են։

Երկրին տարածութիւնն է 650 000 քիլմ. քառակուսի և բնակչաց թիւն է 2,000,000։

Մայրաքաղաքն է ՊՕԳՈԹԱ, բարձր լեռնադաշտի մը վրայ շինուած է. ունի անուանի մայր եկեղեցի, համալսարան ու կաշւոյ, գորգի և ոսկեղինաց գործարաններ։

Երեւելի են նաեւ Փանամա, Կարթագինէ, Սանթաֆէ և այլն։

Այս երկիրը, իսպանական Քրիստափոր Քոլոմպոսի, կոչուած է Քոլոմպիա։

ԴԱՍ Թ.

ՎԵՆԷՑՈՒԷԼԼԱ

Վենէցուէլլայի սահմաններն են հիւսիսէն՝ Անգիլեան ծով. արեւելքէն Կույանա, հարաւէն՝ Պրազիլ եւ արեւմուտքէն՝ Քոլոմպիա։

Վենէցուէլլա լեռնային երկիր մ'է, ծովեզերքը տաք, իսկ ներքին մասերը բարեխառն են։ Գլխաւոր

բոյսերն են խահուէ, քաքաօ, շաքարեղէգ, բամպակ, ծխախոտ, լեղակ, վանիլիա։ Ունի մարմարիոնի, կըրանիթի և պղնձի հանքեր։

Տարածութիւնն է 1,137,000 քիլմ. քառակուսի և բնակչաց թիւն է 2,200,000։

Մայրաքաղաքն է ՔԱՐԱՔԱՍ. գեղեցիկ հովտի մը մէջ զուարճալի քաղաք է, իւր նաւահանգիստն է Կուէյրաս։

Երեւելի են նաեւ Վալէնցիա, Բուէրթօ-Քապէլլօ, Պօլիվար, Պառչէլօնա։

ԴԱՍ Ժ.

ԿՈԻՅԱՆԱ

Այս երկիրը կը տարածուի Ատլանտեանէ մինչեւ Վենէցուէլլա, իսկ հարաւէն սահման ունի Պրազիլիա։ Երկրին ծովեզերեայ մասերը ցած ու ճախճախուտ, արեւմտեան կողմերը լեռնոտ իսկ ներքին մասերը քիչ ծանօթ են։

Գլխաւոր բոյսերն են բժշկական բոյսեր, խէժ, շաքար, խահուէ, քաքաօ, լեղակ, վանիլեա, եայլն։ Երկրին մէջ կը գտնուին բազում վայրի գազաններ։

Կույանա բաժնուած է Եւրոպական երեք տէրութեանց՝ Անգլիոյ, Ֆռանսայի և Հոլանտայի միջեւ։

Տարածութիւնն է 1,400,000 քիլմ. քառակուսի և բնակչաց թիւն է 400,000։

Անգլիական Կույանա, մայրաքաղաքն է Ճորճս-Թա-

ուն. վաճառաշահ նաւահանգիստ է։

Ֆռանսական Կույանա, մայրաքաղաքն է Քայէնա, փոքր կղզւոյ մը վրայ շինուած։

Հոլանտական Կույանա, մայրաքաղաքն է Փարամարիպօ, ծաղկեալ և ապահով նաւահանգիստ է։

ԴԱՍ ԺԱ.

ԷԳՈՒԱԹՈՐ

Այս երկրին սահմաններն են հիւսիսէն՝ Քոլոմպիա արեւելքէն Պրազիլիա, հարաւէն՝ Բէրու և արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս։

Էգուաթոր Հասարակած բսել է. այսպէս կոչուելուն պատճառն այն է որ՝ Հասարակածը այս երկրէն կ'անցնի։

Էգուաթոր լեռնոտ և հրաբխային երկիր մ'է։ Հողը թէեւ բարեբեր՝ բայց լաւ մշակուած չէ։ Ունի Հարաւային Ամերիկայի յատուկ բոյսեր. նոյնպէս ոսկւոյ և ապի հարուստ հանք։

Տարածութիւնն է 643 000 քիլոմ. քառակուսի եւ բնակչաց թիւն է 1,500 0000։

Մայրաքաղաքն է Քիթօ որ ծովու մակերեւոյթէն 3,000 մէթր բարձր է։ Այս քաղաքը քանի մ'անգամ երկրաշարժէ կործանեցաւ։

Երեւելի են նաեւ Կույաքիլ, Քուանսա եւայլն։

Էգուաթորի կը պատկանի Կալլափակոս փոքր արշիպեղագոսն, որ Սպանեօլներէն կը նշանակէ Կրիաներու կղզի։

ԴԱՍ ԺԲ.

ՊՐԱԶԻԼԻԱ

ՊՐԱԶԻԼԻԱ կը գրաւէ Հարաւային Ամերիկայի արեւելեան ու միջին մասերը։ Իր անունը առած է Գրանձա անուն տեղական բոյսէ մը։

Սահմաններն են հիւսիսէն՝ Վենէցուէլա և Կուլանա արեւելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Ուրուկէ, Բարակուա և Լարլատա, արեւմուտքէն՝ Պոլիվիա, Բէրու, Էգուատոր և Քոլոմպիա։

Պրազիլիա ընդարձակ ու տափարակ երկիր մ'է։ Կեդրոնական մասը բարեխառն, հիւսիսային մասը սաստիկ տաք, և ծովեզերքը տեղ տեղ վատառողջ է։ Այս երկրէն կ'անցնի աշխարհիս ամենէն ընդարձակ գետը՝ Ամազոն և իր մէջ կ'ընդունի բազմաթիւ գետեր։ Հողը ընդհանրապէս բարեբեր է և առատօրէն կ'արտադրէ խաղող, շաքարեղէգ, քաքաւ, ծխախոտ, բամբակ, մեխակ, վանիլիա, բժշկական բոյսեր և չինութեան ազնիւ փայտ։

Հանքայ մէջ երեւելի են ադամանդը, ոսկին, արծաթը, պղինձը, երկաթը, մարմարիոնը եւ հանքածուխը։

Պրազիլիա ունի 8,340.000 քիլոմ. քառակուսի տարածութիւն և 14 000.000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՐԻՕ ԵՒԱՆԷՑՐՕ աշխարհի ամենէն մեծ, ամենէն ապահով և ամենէն վաճառաշահ նաւահանգստաց մին է։ Ունի թանգարան, համալսարան եւ այլն։

Պրազիլիոյ երեւելի քաղաքներն ընդհանրապէս

նաւահանգիստներ են՝ ինչպէս Պահիա կամ Սան-Սալվատոր, Փէրնամպուք, Փորթո-Սէկուրо, Փորթո-Ալէկրէ եւայլն. իսկ ներքին մասին մէջ կարեւոր են. Ս. Բոլ-Կույապա եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ

Այս ընդարձակ եւ հարուստ երկիրն հետզհետէ ծաղկելու վրայ է քաղաքակրթութեան մէջ։ Երկրագործութիւնը բաւական յառաջ գացած է ու հողագործական բերոց վաճառականութեամբ՝ շատ սակ կը մտնէ Եւրոպայն այս երկիրը։

ԴԱՍ ԺԳ.

ԲԷՐՈՒ

Բէրուի սահմաններն են, հիւսիսէն՝ Էգուադոր. արեւելքէն՝ Պրազիլիա և Պոլիվիա, հարաւէն՝ Չիլի և արեւմուտքէն՝ Մեծ ովկիանոս։

Բէրու լեռնային երկիր մ'է, ուրնի ընդարձակ ու բարերեր հովիտներ որոց մէջ քաղցր կլիմայ մը կը տիրէ, իսկ ծովեզերքը սաք կ'ընէ։ Հողը լաւ մշակուած է և կ'արտադրէ արմաւիք, բրինձ, դեղօրայք և տաք երկրի բոյսեր։

Բէրուի մէջ կը գտնուին թանկագին քարերու, ոսկւոյ, արծաթի, անդիկի, կապարի ու երկաթի հարուստ հանքեր։

Այս երկրին մէջ գտնուած կուանիо անուն թըռ-

չունին աղբը՝ ծաղկի մշակութեան համար մեծ յարգ ունի Եւրոպիոյ մէջ։

Բէրու ունի 1,090.000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 3,000,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԼԻՄԱ, շէն ու ծաղկեալ քաղաք՝ որու նաւահանգիստն է Քալաօ։ Երեւելի են նաեւ Քուսկօ, Արէքիպա, Կուամապէլիքա, Իգա եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ

Այս երկրին մէջ կը գտնուին շատ հին դարերէ մնացած մեհեաններ ու փառաւոր շէնքերու մնացորդներ։ Բէրուի մէջ նոր սկսած է ծաղկիլ քաղաքակրթութիւնը։

ԴԱՍ ԺԴ.

ՊՈԼԻՎԻԱ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԲԷՐՈՒ

ՊՈԼԻՎԻՈՅ սահմաններն են՝ հիւսիսէն և արեւելքէն՝ Պրազիլիա, հարաւէն՝ Լա-Բլատա և արեւմուտքէն՝ Բէրու։ Անտէպ լերանց ամենէն բարձր գագաթներն այս երկրին մէջ կը գտնուին։ Կլիման ընդհանրապէս բարեխառն, հողը բարեբեր է և կ'արտադրէ որթատունկ, ձիթենի, բամպակ, արմաւ, շաքարեղէգ, խահուէ եւայլն։

Պոլիվիա ունի այլ և այլ հարուստ հանքեր որոնք չեն շահագործուիր։

Երկրին տարածութիւնն է 1,250.000 քիլմ. քառակուսի և բնակչաց թիւն է 2,500 000։

Մայրաքաղաքն է ՉՈՒԲԻՍԱՌԱ, զուարճալի դիրքով գեղեցիկ քաղաք մ'է։

Երեւելի են նաեւ Լա-Փազ, Քոչապամպա, Բոթոսի, Սանդա-Քրոնա եւայլն։

ԴԱՍ ԺԵ.

ԲԱՐԱԿՈՒԱ

Այս երկիրը փոքր հանրապետութիւն մ'է Պրազիլիոյ Լա-Բլատայի և Պարագվիոյ միջեւ։ Երկրին բարձր տեղերը զով, իսկ դաշտաց մէջ օդը տաք ու խոնաւ է։

Հողը բաւական լաւ մշակուած է և կ'արտադրէ հարաւային Ամերիկայի յատուկ բոյսեր։

Բարակուա ունի 150 000 քիլոմ. քառակուսի տարածութիւն և 3,500,000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ԱՍՍՈՄԲՍԻՕՆ կամ ՎԵՐԱՔՈՒԶՈՒՄՆ որ աննշան քաղաք մ'է տյսօր։

Երեւելի են նաեւ Վիլլա-Բիքա, Սան-Բէրro եւ Հումայթա։

ԴԱՍ ԺԶ.

ՈՒՐՈՒԳՎԱՅ

ՈՒՐՈՒԳՎԷ կամ ՈՒՐՈՒԳՎԱՅԼ Պրազիլիոյ, Ատլանտեանի և Արգենթինի միջեւ փոքր հանրապետութիւն մ'է։ Կլիման ընդհանրապէս բարեխառն և հողը շատ արգասաւոր է։ Ունի բաւական առատ բուսաբերութիւն և կաթնատու կենդանիներ։

Տարածութիւնն է 918 000 քիլմ. քառակուսի եւ բնակչաց թիւն է 600.000

Մայրաքաղաքն է ՄՕՆԹԷՎԻՏԷՕ. Լա-Բլատա ծոցին հիւսիսային կողմը մեծ ու վաճառաշահ նաւահանգիստ է։

Երկրորդական քաղաքներն են Մայսօնուսօ, Քոլոնէա եւայլն։

ԴԱՍ ԺԷ.

ՉԻԼԻ ԿԱՄ ՔԻԼԻ

Չիլի՝ հարաւային Ամերիկայի արեւմտեան կողմը նեղ ու լեռնային երկիր մ'է որ կ'երկարի Բէրուէն մինչեւ գրեթէ Հորն։ Չիլի ունի բարեխառն կլիմայ, ձմեռներն բնդհանրապէս կարճ ու գարուն երկայն է։ Երկիրը լաւ մշակուած է և կ'արտադրէ տարբերկրի յատուկ բոյսեր։ Ունի նաեւ ոսկւոյ, արծաթի և պղնձի հանքեր։

Չիլի ունի 900 000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 4.000.000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՍԱՆԴԻԱԳՕ. բնդարձակ դաշտի մը մէջ՝ դուարճալի ու ծաղկեալ քաղաք՝ որ երկրաշարժէ քանի մը անգամ մեծ վնասներ կրած է։

Երեւելի են նաեւ Վալպարէզօ, Քօքէմպօ, Սանֆուանիսկօ, Վալտիվիա եւայլն։

Չիլիի կը վերաբերին Խուդասական մէջ Չիլոէ կղզիք Անտուանտոր արշիպեղագոսն ու Փարակոնիոյ մէկ մասը։

ԳԻՏԵԼԻՔ

Չիլի հարաւային Ամերիկայի ամենէն զարգացեալ երկիրներէն մին է։ Հողագործութիւն, ճեռարուեստ և ճարտարութիւն բաւական ծաղկած են։ Իւր գլխաւոր հարստութիւններն են հողային բերքեր, կուանիս, կաշի և թանկագին մետաղներ։

ԴԱՍ ԺԸ.

ԼԱ-ԲԼԱԹԱ ԿԱՄ ԱՐՃԷՆԹԻՆ

ԱՐՃԷՆԹԻՆԻ սահմաններն են հիւսիսէն՝ Պոլիվիա, արեւելքէն՝ Բարակուա, Պրազիլ, Ուրուկուա և Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Փաթակոնիա եւ արեւմուտքէն՝ Չիլի։

Երկրին կլիմայն ընդհանրապէս առողջ է, միայն լեռնային գաւառաց մէջ ցուրտ կ'ընէ։ Հողը բարեբեր է և կ'արտադրէ տաք երկրի բերքեր։ Երկրի հանքերուն մէջ միայն ոսկին ու արծաթը կը շահագործուին։

Լա-Բլատա ունի 2,800,000 քիլմ. քառակուսի տարածութիւն և 4,000 000 բնակիչ։

Մայրաքաղաքն է ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ. որ Լա-Բլատա գետին վրայ գեղեցիկ դիրքով վաճառաշահ նաւահանգիստ մ'է։

Երեւելի քաղաքներ են՝ Ռoզառիo, Մէնiսoզա, Գorsուվա, Սանդիակo, եւայլն։

ԳԻՏԵԼԻՔ

Սպանեօլք այս երկրին գետոց շրջակայները առաջին անգամ շատ արծաթ տեսնելնուն՝ երկիրը կոչեցին Լա-Լպլա, որ արծաթ կը նշանակէ։ Երկրին գլխաւոր հարստութիւններն են՝ բուրդ, աղած միս, կաշի, ճարպ, ջայլամի փետուր, մետաղներ և այլն։

ԴԱՍ ԺԹ.

ՓԱԹԱԿՈՆԻԱ

ՓԱԹԱԿՈՆԻԱ կը գտնուի հարաւային Ամերիկայի հարաւային ծայրը և քարուտ ու անապատային երկիր մ'է։ Բնակիչք վայրենի ու թափառական Հընդիկներ են։ 1881 էն ի վեր՝ Չիլի և Արգենթին այս երկիրը բաժնած են իրենց մէջ։

ԴԱՍ Ի.

ԱՆԴԻԼԵԱՆ ԿՂԶԻՔ

Այն կարեւոր արշիպեղագոսը կը գտնուի Անդիլեան ծովուն արեւելեան կողմը՝ զոր 1492 ին գտաւ Քրիստափոր Քոլոմպոս։

Կը բաժնուի երեք գլխաւոր խումբերու, Լուքայեան կամ Պահամա կղզիք։ Մեծ Անդիլեանք, և Փոքր Անդիլեանք։

Այս կղզիք ընդհանրապէս լեռնոտ եւ ոմանք ալ հրաբխային են։ Երկու որոշ կլիմայ ունին, չոր եւ անձրեւային։ Հողը շատ արդասաւոր է և կ՚արտադրէ խահուէ, բամպակ, շաքարեղէգ, քաքաօ, ընտիր ծխախոտ, լեզակ, պանան, ներկի և բժշկական բոյսեր, համեմունք եւայլն։ Հանքայ մէջ երեւելիներն են ոսկին, արծաթը, պղինձը, հանքածուխը, ծծումբը և հանքային ջուրերը։

Այս արշիպեղագոսի ամենէն կարեւորն է Մեծ Անդիլեանց խումբը որ կը բաղկանայ չորս կղզիներէ՝ Քուպա, Հայիթի, Եամայիքա և Բորթօ-Ռիքօ։

Քուպայի	մայրաքաղաքն է	Հաւանա	
Եամայիքայի	»	»	Քինկսդրն
Հայիթիի	»	»	Բորթօ-Ռէնս
Բորթօ-Ռիքօյի	»	»	Սան-Ճուան։

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՐՈՐԴ

ՈՎԿԻԱՆԻԱ

ԳԼԽՈՒ Ա.

ՈՎԿԻԱՆԻԱ կը կոչուի Մեծ ովկիանոսի մէջ և Հին ու Նոր աշխարհներու մէջեւ սփռուած այն մեծ ու փոքր բազմաթիւ կղզիներն՝ որոնք երկրիս հինգեր-

բորդ մասը կը կազմեն և բաժնուած են չորս գլխաւոր խումբերու. 1. Մալէզիա. 2. Մէլանէզիա կամ Աւստրալիա 3. Միքրոնէզիա և 4. Փոլինէզիա։

Ովկէանիա մեծ մասամբ կը գտնուի Հասարակածի տակ. կղզիները լեռնոտ և հրաբխային են, բայց ունին պարարտ հող։ Գլխաւոր արտադրութիւններն են բրինձ, շաքարեղէգ. լեղակ, արմաւ, բամպակ, արմբաւիք, խաղողէ, քափուր, քօքօ, նարինջ, խնկեղէն, ծխախոտ, դեղօրայք, շինութեան ազնիւ փայտեր եւայլն։

Ովկէանիա գրեթէ ամէն տեսակ պիտանի հանք ունի։

Տարածութիւնն է 10,850,000 քիլմ. քառակուսի և բնակիչն է 37 000,000։

Ընտանի շատ մը կենդանիներէ ի զատ՝ կը գտնուին նաեւ Հարաւային Ասիոյ մ.չ գտնուած տեսակէն գազաններն ու վնասակար ճանճեր։

ԳԼՈՒԽ Ը.

ՄԱԼԷԶԻԱ

Մալէզեան արշիպէլագոսին գլխաւոր կղզիներն են՝ Սումատրա, Ճաւա և Պորնէօ։ Սումատրա՝ Մալաքքա թերակղզւոյն հարաւային արեւելեան կողմը մեծ և հրաբխային կղզի մ'է։ Գլխաւոր քաղաքներն են՝ Բատաւի եւ Բալամպանկ։ Ճաւա կղզին ունի 18 000,000 բնակիչ. հարուստ բուսաբերութիւն եւ

ընդարձակ առեւտուր։ Գլխաւոր քաղաքներն են Պա-
քսիա և Ճօֆճօֆարքա։ Պօրնէօ։ — Այս կղզին ունի,
14.000 000 բնակիչ և Աւստրալիաէ յետոյ՝ աշխարհիս
մեծագոյն կղզին է։ Գլխաւոր քաղաքներն են Պօրնէօ
և Պէնճէրմասին։

Ասոնցմէ ի զատ՝ Սունդայի մէջ երեւելի են նաեւ
Մօլուքեան, Զէլէպեան և Փիլիպեան արշիպեղագոսք։

ԳԱՍ Գ.

ՄԷԼԱՆԷԶԻԱ ԿԱՄ ԱԻՍՏՐԱԼԻԱ

Այս արշիպեղագոսը կը տարածուի Ովկէանիոյ հարաւ. արեւմտեան կողմը և կը պարունակէ Աւստրալիա մեծ կղզիէն զատ՝ Նոր Կուինիա, Թասմանիա, Նոր Քալէտոնիա և Սոլոմոնեան կղզիները։

ԱԻՍՏՐԱԼԻԱ երկրագնդիս մեծագոյն կղզին է։ Ունի 7,750,000 քիլիմ. քառակուսի տարածութիւն և իրր 4,000,000 բնակիչ։ Ունի առատ բուսաբերութիւն, հարուստ հանքեր և բազմաթիւ ընտանի կենդանիներ ու գազանք։

Գլխաւոր քաղաքներն են Մէլպուրն, վաճառաշատ և ծաղկեալ նաւահանգիստ է. ունի երեւելի շէնքեր, թատրոններ և դպրոցներ։

Երեւելի են նաեւ հետեւեալ նաւահանգիստներն՝ Սիտնէյ, Ատէլայիտ, Պրիսպան և Վիքթորիա։

Նոր Կուինիա կը տարածուի Աւստրալիոյ հիւսի-

սային կողմը. բնակիչք կը կոչուին Բաբու։ Երկրին ներսերը տակաւին ապէկ մը ճանչցուած չեն։

Թասմանիա կը գտնուի Աւստրալիոյ հարաւային արեւելեան կողմը։ Գլխ. քաղաքն է Հոպարթաուն։

ԴԱՍ Դ.

ՄԻՔՐՈՆԷԶԻԱ

ՄԻՔՐՈՆԷԶԻԱ կը նշանակէ մանր կղզի և կը պարունակէ բազմաթիւ փոքր կղզիներ, որոնք հրաբուխէ յառաջ եկած են։ Գլխաւոր արշիպեղագոներն են՝ Մարիանեան կամ Լադրոնեան կղզիք։ — Քարոլինեան կղզիք, որք բաղկացած են 500 է աւելի կղզեակներէ։ Ասոնցմէ ի զատ կան նաեւ Մակէլլանի, Ֆիլիպէրի, Անսօնի, Մարշալի փոքր արշիպեղագոսները։ Այս կղզիները ունին զուարճալի կլիմայ և ճոխ բուսաբերութիւն։

ԴԱՍ Ե.

ՓՕԼԻՆԷԶԻԱ

ՓՕԼԻՆԷԶԻԱ կը նշանակէ Բազմակղզի և տարածուած է Խաղաղականի արեւելեան կողմը։ Գլխ. արշիպեղագոներն են 1. Նաւասեայ կղզիք. — 2. Բարե-

կամաց կղզիք. — 3. Սանտուի կղզիք՝ որոց բնակիչք քաղցրարարոյ և ուշիմ են. որոնց մէջ շատ ալ քրիստոնեաներ կան։ Այս կղզիները խիստ բարեբեր են։

Երևելի են նաև Թայթի կամ Ընկերութեան կղզիք որոնց դիրքն զմայլելի և բնակիչք քաղաքակրթեալ ու քրիստոնեայ են։

Մարգիզեան կղզիք. — Մասնք հրաբխային և անբեր են. բնակիչներն ալ վայրենի։

Նոր Զէլանտա, կը բաղկանայ երկու մեծ կղզիներէ։ Բնակչաց կէսն Եւրոպացի է։ Այս կղզիք նշանաւոր են իրենց բուսական եւ հանքային հարստութեամբ։ Բնակչաց մէջ վայրենիներ ալ կան։

Ն. ԱՆՕՓՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ տեսանք, Ովկէանիա մեծ ու փոքր բազմաթիւ կղզիներէ բաղկացած է և կը կազմէ երկրիս Հինգերորդ մասը։ Այս կղզիներուն մէջ կան որ ժայռոտ ու անբեր են. բայց մեծ մասն ունի պարարտ հող, հարուստ հանքեր և ընտանի կենդանիներ։ Բնակչաց մեծ մասը տակաւին վայրենական վիճակի մէջ է. բայց քրիստոնեայ քարոզիչներու շնորհիւ՝ հետզհետէ քաղաքակրթուելու վրայ է։

Ովկէանիոյ մեծագոյն և ամենէն հարուստ մասը Եւրոպացիոց ձեռքն է, որոնք կ'աշխատին հետզհետէ շէնցնել զայն և նորա բնակիչներն ալ քաղաքակրթել։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎՐԱՅ

1

Ամերիկա ո՞ր կիսագունտին մէջ կը գտնուի. — Քանի՞ մասերէ կը բաղկանայ. — Ո՞ր պարանոցով միացած են. — Ո՞րոնք են սահմանները. — Ամերիկա քանի՞ ովկէանոս և ի՞նչ ծովեր կը տեսնէ. — Ո՞րոնք են գլխաւոր ծոցերն ու նեղուցները. — Ցամաքին արեւմտեան կողմը ո՞ր երեւելի լեռնաշղթան կ'երկարի. ի՞նչ հրաբուխներ կան. — Նոր աշխարհի գլխաւոր հրուանդանները ո՞րոնք են։

2

Ամերրկա քանի՞ գլխաւոր աւազան ունի. — Մեքսիկայի ծոցին մէջ թափող գլխաւոր գետերը ո՞րոնք են. — Հարաւային Ամերիկայի մեծագոյն գետը ո՞րն է. — Նոր աշխարհի գետերը ընդհանրապէս ո՞ւր կը թափին. — Հիւսիսային Ամերիկայի մէջ ո՞ր մեծ լիճերը կան. — Սառուցեալ ովկէանոսի մէջ ո՞ր կղզիները կան. — Անթիլեան ծովուն մէջ ո՞ր երեւելի արշիպեղագոսը կայ. — Խաղաղականի մէջ ո՞րոնք կան։

3

Ամերիկա ո՞րչափ տարածութիւն և ո՞րչափ բնակիչ ունի. — Ի՞նչ գոտիներու ներքեւ կը գտնուի. — Նոր աշխարհի բուսական ամենէն կարեւոր և յարգի բոյսերն ո՞րոնք են. — Եւրոպա ի՞նչ տեսակ բոյսեր կ'ընդունի Ամերիկայէ. — Ի՞նչ հարուստ հանքեր կան Նոր աշխարհի մէջ. — Ընտանի ու վայրի ի՞նչ տեսակ կենդանիներ ունի։ — Հողագործութիւնը ո՞ր երկիրներու մէջ շատ յառաջ գացած է։

4

Ամերիկա քանի՞ տերութեանց բաժնուած է. — Ի՞նչ է կառավարութեանց ձեւը. — Բնակիչք ի՞նչ ալգութիւններէ կը բաղկա-

նան. — Ի՞նչ կրօն կը գաւանին. — Եւրոպական ո՞ր տերութիւնք Ամերիկայի մէջ ստացուածքներ ունին. — Ո՞րոնք են Նոր աշխարհի ամենէն քաղաքակրթեալ երկիրները։ Ո՞ր թուականին և ո՞վ գտաւ Ամերիկան։ Ո՞վ էր Ամերիկոս Վէսփուչչի։

ՀՐԱՀԱՆԳ

1. Գծել համր Ամերիկա մը և վրան նշանակել ամենէն երեւելի նաւահանգիստները։

2. Նոյնին վրայ գծել Ատլանտեան թափող ամենէն երեւելի գետերը։

3. Նշանակել Նոր աշխարհի մէջ Եւրոպական ստացուածները։

ԲՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԴԱՍ Ա.

ԵՐԿԻՐ

1. ԵՐԿԻՐՄ՝ որուն վրայ կը բնակինք. նարնջի նման գնդաձեւ է, եւ առանց բանի մը վրայ յեցած ըլլալու՝ միջոցին մէջ կը դառնայ։

Երկիրս միջոցին մէջ

2. Երկրիս կլոր ըլլալն անկից կը հասկնանք որ,

երբ ընդարձակ ծովու մը եզերքը կենալով՝ հեռուէն եկող նաւ մը դիտենք, նախ և առաջ անոր կայմերուն ծայրերը՝ և ապա հետզհետէ կը տեսնենք ամբողջ կայմերն ու նաւը։ Եթէ Երկիրս տափարակ ըլլար, այդ երեւցող նաւը թէեւ փոքր՝ բայց ամբողջը պիտի տեսնէինք։ Նոյնպէս՝ Լուսնի խաւարման ատեն կը տեսնենք որ, Երկիրս Լուսնին վրայ կլոր շուք մը կը ձգէ։ Այս և ասոնց նման երեւոյթներէն կը համոզուինք որ, Երկիրս իրաւացնէ կլոր է։

3. Թեպէտ Երկրիս երեսին վրայ կը գտնուին ծովեր, ովկէանոսներ, բարձրաբերձ լեռներ ու ձորեր, բայց ասոնք՝ Երկրիս մեծութեանը հետ բաղդատելով, անոր կլորութեանը բնաւ արգելք չեն, ինչպէս որ նարնջին վրայ գտնուած դերբուկները անոր գընդաձեւութիւնը չեն աւրեր։

4. Այն երեւակայական, այսինքն մտքով դրուած ձողը որու վրայ Երկիրս կը դառնայ, կ'ըսուի Առանցք, այս առանցքին մէկ ծայրը դէպի Հիւսիս դարձած լինելուն՝ կ'ըսուի Հիւսիսային Բեւեռ, և միւս ծայրը՝ Հարաւային Բեւեռ։

ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԳՕՏԻՔ

5. Երկրագունախս մակերեւութին, այսինքն երեսին ուսումը դիւրացնելու և անոր այլ եւ այլ մասերուն դիրքը ճշդութեամբ որոշելու և չափելու համար, աշխարհագէտները Երկրիս վրայ քանի մը երեւակայական, այսինքն մտքով դրուած շրջանակներ կը մտածեն։ Այս շրջանակները 6 են, 2ը մեծ

ու կը փոքր։ Երկու մեծ շրջանակներն են՝ Հասարակած եւ Միջօրէական։

6. Հասարակած. — Երրոր բեւեռներէն հաւասար հեռաւորութեամբ՝ երկրիս բոլորտիքէն անցնող գիծ մը երեւակայենք, այդ գիծը կ'ըսուի Հասարակած, որ գունտը երկու հաւասար մասերու կը բաժնէ՝ Հիւսիսային և Հարաւային կիսագունտ։

7. Միջօրէական. — Այն շրջանակն, որ բեւեռէ բեւեռ ձգուելով՝ Հասարակածը կը կտրէ, կ'ըսուի Միջօրէական և ուրիշ ձեւով մը՝ երկիրս կը բաժնէ երկու հաւասար մասերու՝ Արեւելեան կիսագունտ և Արեւմտեան կիսագունտ։

8. Չորս փոքր շրջանակներն են՝ Արեւադարձ խեցգետնի, Արեւադարձ Այծեղջեր, Արջային շրջանակ և Հակարջային շրջանակ։

9. Արեւադարձ կը կոչուին Հասարակածէն դէպ ի Հիւսիս և դէպ ի Հարաւ 23 ½ աստիճան հեռաւորութեամբ քաշուած գիծերը։ Հասարակածին Հիւսիսային կողմինը կը կոչուի Արեւադարձ խեցգետնի, իսկ Հարաւային կողմինը՝ Արեւադարձ Այծեղջեր։

10. Բեւեռային շրջանակներ կ'ըսուին բեւեռներէն 23 ½ աստիճան հեռաւորութեամբ, կամ Հասարակածէն 66 ½ աստիճան դէպ ի Հիւսիս և դէպ ի Հարաւ զուգահեռական քաշուած շրջանակները։ Հիւսիսային կողմինը կը կոչուի Արջային Շրջանակ, Հարաւայինը՝ Հակարջային Շրջանակ։

ԴԱՍ Բ.

11. Աշխարհագիրք՝ Հասարակածը. Միջօրէականը և ուրիշ ամէն շրջանակները բաժնած են 360 մասերու, որոնք կը կոչուին աստիճան։ Իւրաքանչիւր աստիճան 60 մասերու կը բաժնուի և ամէն մէկ մաս՝ կը կոչուի մանրամասն։

Քառորդ շրջանակ մը հաւասար է 90 աստիճանի։ Միջօրէականի այն մասն որ Հասարակածէն դէպի բեւեռ կը ձգուի, քառորդ շրջանակ մ'է և հետեւաբար կը պարունակէ 90 աստիճան։

12. Երկրագունտիս վրայ տեղւոյ մը ուրիշ տեղէ դէպ Արեւելք կամ դէպ Արեւմուտք ունեցած հեռաւորութիւնը չափելու համար՝ երկու կերպ աստիճաններ մտածուած են, Լայնութեան ու Երկայնութեան։

13. Լայնութեան աստիճանները Միջօրէականին վրայ նշանակուած են՝ Հասարակածէն սկսեալ մինչև բեւեռները 90ական աստիճան՝ որով կ'ունենանք երկու կերպ լայնութեան աստիճաններ՝ Հիւսիսային և Հարաւային Լայնութեան աստիճանք։

14. Երկայնութեան աստիճանները Երկրագունտներու կամ աշխարհացոյց քարտէսներու վրայ նշանակուած են Միջօրէականին ուղղութեամբ ձգուած գծերով։

ԳՕՏԻ Բ.

15. Երկիրս բաժնուած է հինգ գօտիներու, Հիւսիսային և Հարաւային Սառուցեալ Գօտիներ. Հիւ-

սիսային և Հարաւային Բարեխառն Գօտիներ և Այրեցեալ Գօտի։ Սառուցեալ գօտիները կը գտնուին Բեւեռային շրջանակներուն և բեւեռներուն միջեւ, Բարեխառն գօտիները կը տարածուին Արեւադարձներուն և Բեւեռային շրջանակներուն միջեւ։ Իսկ Այրեցեալ գօտին կը գտնուի երկու Արեւադարձներուն մէջ տեղը։

16. Սառուցեալ գօտիներու մէջ սաստիկ ձմեռ կ'ընէ, ինչու որ արեգակին ճառագայթները հոն տեղուանքը ծուռ կը զարնեն և այս պատճառաւ բոյս և կենդանի չեն ամիր ու բնակիչներն ալ կարճահասակ կ'ըլլան։

17. Բարեխառն Գօտիներու մէջ ցուրտն ու տաքը չափաւոր են, այս պատճառաւ բոյսերն ու կենդանիները կ'ամին ու կ'առատանան։ Բարեխառն գօտիներու մէջ չորս եղանակ կը տիրէ։

18. Այրեցեալ գօտւոյ վրայ Արեւը իւր ճառագայթները ուղղակի զարնելուն պատճառաւ՝ սաստիկ տաք կ'ընէ ու միայն երկու եղանակ կը տիրէ հոն՝ Ջոր և Անձրեւային։

19. Երկրի կամ քաղաքի մը օդին տաք կամ պաղ, խոնաւ կամ չոր ըլլալուն աստիճանը կ'ըսուի կլիմայ։

ԳԼԽ Գ.

ԲՈՅՍԵՐ, ԿԵՆԴԱՆԻՔ ԵՒ ՀԱՆՔ

20. Բոյսերը թէեւ կենդանեաց պէս չեն շարժիր, բայց գործարանաւոր մարմիններ են, անոնք

ալ մարդոց և կենդանիներուն պէս, կը անանին ու կ'ածին:

21. Բոյսերը ամէն կլիմայի տակ հաւասարապէս չեն ածիր, այնպէս որ ամէն բոյս իրեն համար բարեխառնութեան առանձին աստիճան ունի: Օրինակի համար, սառուցեալ գօտիներու հիւսիսային մասանց մէջ միայն մամուռ կը բուսնի, իսկ աւելի վարերը՝ շատ քիչ քանակութեամբ հաճար ու վարսակ յառաջ կուգան, և գտնուած քանի մը տեսակ ծառերու անտառներն ալ կարճ կը մնան:

22. Բարեխառն գօտիներու մէջ կ'ածին տեսակ տեսակ գեղեցիկ անտառներ. յառաջ կուգան ամէն տեսակ արմտիք, պտղատու ծառեր, որթատունկ, թզենի, ձիթենի, նարնջենի, լեմոնի, բամպակ, ծխախոտ եւայլն:

23. Այրեցեալ գօտւոյ մէջ բոյսերն աւելի առատ, բազմատեսակ և սննդարար են: Այդ տաք երկիրներուն մէջ յառաջ կուգան շաքարեղէգ. խահուէ, արմաւ, համեմունք, անուշահոտ բոյսեր, ներկի նիւթեր. ծխախոտ, մեծատարած անտառներ են. են:

Ռ. ԿԵՆԴԱՆԻՔ

24. Կենդանիները երեք դասերու կը բաժնուին 1. Ցամաքային. 2. Օդային. 3. Ջրային: Կենդանիները իրենց ձեւովը, կազմութեամբ և բնաւորութեամբ երկու որոշ դասակարգերու կը վերաբերին՝ ընտանի և վայրի: Ընտանի կենդանիներն անոնք են զորս կ'ուտենք, մեր պէտքերուն կ'աշխատցնենք և

կամ կրնանք տան մէջ պահել. ինչպէս են ոչխարը, կովը, հաւը, ձին, շունը, կատուն եւայլն։

25. Վայրենիներն՝ ընութեամբ կատաղի և պատառիչ են. այնպէս որ կարելի չէ զանոնք տան մէջ պահել, ինչպէս են առիւծը, արջը, վագրը, օձը, կոկորդիլոսը եւայլն։

26. Ամենէն կատաղի գազանները, կը գտնուին Այրեցեալ Գօտւոյ մէջ։

27. Բարեխառն գօտիներու մէջ կան բազմաթիւ ընտանի կենդանիներէ ի զատ՝ նաեւ ճագար, այլ և այլ թռչուններ, որսի կենդանիներ եւայլն։

28. Ցրտային գօտիներու յատուկ կենդանիներն են սպիտակ արջ, եղջերու, աղուէս, մուշտակաւոր կենդանիներ եւայլն։

Գ. ՀԱՆՔ

29. Երկրիս խորերը կը գտնուին այլ և այլ հանքեր՝ որոնք կը բաժնուին երեք կարգերու 1. Ազնիւ քարեր. 2. Մետաղք. 3. Այրելի նիւթեր։

Ազնիւ քարեր են, օրինակի համար. ադամանդ, զմրուխտ, յակինթ, տպազիոն եւայլն։

30. Մետաղներու կարգէն են՝ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, կապար, սնդիկ եւայլն։

31. Այրելի մետաղներ են՝ հանքածուխը, ծծումբը, կուպրը, նաւթը եւայլն։

Այս կարեւոր հանքերը երկրիս զանազան մասերուն մէջ կը գտնուին և չորս մարդիկ կը շահագործեն—

ԴԱՍ Դ.

ՋՈՒՐ

32. ՋՈՒՐԸ հեղուկ մարմին մ'է, որ սաստիկ տաքութեամբ գոլորշի կը դառնայ. իսկ սաստիկ պաղութեամբ կը սառի։ Երեք տեսակ Ջուր կայ. Հասարակ, Հանքային և Ծովային։

1. ՀԱՍԱՐԱԿ ՋՈՒՐ

33. ՀԱՍԱՐԱԿ կամ ԱՆՈՑՇ կ'ըսուին այն ջուրերը որոնք աղի չեն և հանքային համ չունին, ինչպէս են ընդհանրապէս՝ գետերու, աղբիւրներու և լիճերու ջուրերն։

34. Այն ջուրերը՝ որոնք հանքերու մէջէն անցնելով՝ անոնց համն ու գոյնը կ'առնեն, կ'ըսուին Հանքային ջուրեր։

35. ԱՂԻ կ'ըսուին ովկիանոսներու, ծովերու և ասոնցմէ ձեւացած բաժանումներու ջուրերը։

ՕԴ ԵՒ ՕԴԵՐԵՒՈՅԹՔ

36. Երկրիս շուրջը պատող թոյլ և թափանցիկ մարմինը ՕԴ կամ ՄԹՆՈԼՈՐՏ և անոր զանազան երեւոյթներն ալ ՕԴԵՐԵՒՈՅԹ կամ ՄԵՏԷՕՐԱ կ'ըսուին։

Առանց օդի ո՛չ մարդիկ և ոչ կենդանիք կարող են ապրիլ երկրիս վրայ. նմանապէս՝ բոյսերն ալ չեն կրնար աճիլ։

Զարս տեսակ երեւոյթ կայ 1. Օդեղէն. 2. Ջրեղէն. 3. Լուսեղէն. 4. Հրեղէն։

1. ՕԴԵՂԷՆ ՄԵՏԷՕՐԱՑԻՔ

37. Օդին այլ և այլ շարժումներեսը. ինչպէս Հով, Մրրիկ, Թաքաւ և այլն կը կոչուին ՕԴԵՂԷՆ ՄԵՏԷՕՐԱՑ։

38. ՀՈՎ կ'ըսուի օդին այն շարժումը, որ երկու կերպով կ'ըլլայ. նախ, տաքութենէն օդը անցուրանալով՝ այսինքն թեթեւնալով կը տարածուի և քովի օդերը մէկդի հրելով՝ օդի շարժում կը պատճառէ։ Երկրորդ՝ ցրտութենէ օդը կը խտանայ, քիչ տեղ կը բռնէ և պարապ մնացած միջոցին մէջ վազելով՝ մեծ շարժում յառաջ կը բերէ որ կ'ըսուի Հով։ Հովերը այլ և այլ չափով ու զօրութեամբ կը փչեն։ Օրինակի համար, Գարունին անոյշ և թեթեւ հով մը կը փչէ զոր ախորժակով կը շնչենք, մինչդեռ աշնան վերջերու և ձմրան հովերը սաստիկ, ցուրտ և կծու են։

39. ՄՐՐԻԿ կ'ըսուի այն կատաղի հովն, որ յառաջ կուգայ երկու հակառակ հովերու դէմ առ դէմ գալովն և մեծ վնասներ կը պատճառէ ցամաքի և ծովու վրայ։

40. Երբեմն կը պատահի որ, իրարու հակառակ երկու կատաղի հովեր դիմացէ դիմաց գալով՝ ամպերը կը թանձրացնեն և անոնց՝ մէջ պարապ խողովակի մը ձեւ տալով՝ մինչեւ ցամաք կամ ծով կ'իջեցընեն, որոնք սոսկալի արագութեամբ յառաջ երթալով՝ ինչ որ գտնեն, կը տապալեն ու մինչեւ երկինք բարձրացնելով՝ դարձեալ ուրիշ տեղ մը կը ձգեն։ Այս զարհուրելի երեւոյթը կը կոչուի Թաքաւ։

41. Խորհակ կ'ըսուի այն վերատակար հովը, որ ապականեալ լիճերու կամ տաք անապատներու վրայէն փչելով՝ թէ՛ մարդոց, թէ՛ բուսոց և թէ կենդանեաց կը վնասէ։

ԳԼԽ Ե.

3. ՋՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՑՔ

42. ՋՐԵՂԷՆ ՄԵՏԷՈՐԱՑ կ'ըսուին գետնէն ելած գոլորշիներէ յառաջ եկած Մետէորաները որք են, Մէգ, Ամպ, Ցօղ, Եղեամ, Անձրեւ, Ձիւն և Կարկուտ։

43. Մէգ կամ Մառախուղ (տիւման) կ'ըսուի երբեմն առաւօտները երկրիս երեսը և մանաւանդ ձորերու մէջ տարածուած այն մուխի պէս երեւցած գոլորշին՝ որ գիշերուան ցրտութենէ խտացած է։

44. Ամպ կ'ըսուին արեւուն տաքութենէն վեր ելած ջրին գոլորշիները, որոնք մթնոլորտին բարձրութեան մէջ իրարու կը միանան, կը թանձրանան եւ օդին մէջ կը շարժին։

45. Ցօղ կ'ըսուի գիշեր առեն երկրիս վրայ անձրեւի պէս իջած թացութիւնը՝ որ գիշերուան ցրտութենէն խտացած շոգի է։

46. Եղեամը (գրաղը) գիշեր առեն երկրիս վրայ իջած ցօղն է, որ սաստիկ ցրտութենէ կը սառի եւ ընդհանրապէս գարնան ու աշնան առեն կ'ըլլայ։

47. Երբոր երկինք ելած գոլորշիները ամպերուն հետ միանալով կը թանձրանան, այն առեն շատ ծանրանալով կաթիլ կաթիլ կ'ըլլան և վար կը թափին։

Այս երևոյթը կը կոչուի Անձրեւ։ Բայց երբոր անձրեւի կաթիլները օդին ցրտութենէն սառելով՝ անկիւնաւոր հատիկներով երկրիս վրայ իջնան՝ կ'ըսուի Ձիւն։



Ձիւն

48. Կարկուտն է ձիւն կամ ձիւնախառն անձրեւ որ, օդին մէջ երկու հակառակ ելեքտրականութեամբ մէկ դիւն մէկալ դին նետուելով, պաղէն կը սառի, կը խաշնայ եւ ուժով վար կը թափթըփի։ Մինչեւ կէս հօտայ ծանրութեամբ կարկուտ եկած է։

ԴԱՍ Զ.

3. ԼՈՒՍԵՂԷՆ ՄԵՏԷՕՐԱՆԵՐ

49. ԼՈՒՍԵՂԷՆ ՄԵՏԷՕՐԱՆԵՐԸ արեգական ճառագայթներուն այլ. եւ այլ կերպով զարնուածքէն յառաջ կուգան եւ վեց տեսակ են, 1. Ծիածան, 2.

Արջալոյս, 3· Արեւանմանութիւն, 4· Բակ, 5· Զոդիակոսի լոյս և 6· Կրկնեռեւոյթ։

50. Արեւու լոյսին մէջ եօթը գոյն ճառագայթներ կան՝ կարմիր, նարնջագոյն, դեղին, կանաչ, բաց կապոյտ, մութ կապոյտ և մանիշակագոյն որոնք եռանկիւնի ապակիի մը մէջէ երբ անցնին, որոշակի կ'երեւան։ Անձրեւի ատեն ալ երբոր արեգակին շառաւիղները դիմացի անձրեւի կաթիլներուն մէջէն կ'անցնին, եօթը գոյները երկնից վրայ կամար մը կը ձեւացնեն որու կ'ըսուի Ծիածան։

51. Առաւօտները՝ քանի որ Արեւը հորիզոնէն 18 աստիճան վար է, իր շառաւիղները մթնոլորտին մէջ կոտրտելով՝ լոյսը կը տեսնուի։ Այս կարմարագոյն լոյսը կը կոչուի Արջալոյս։

Նոյնպէս ալ իրիկուններն՝ Արեւը մարը մտնելէն յետոյ՝ բոլոր արեւմտեան եզերքը կը կարմրի։ Այս կարմրութիւնն ալ Վերջալոյս կ'ըսուի։

52. Երբեմն Արեւուն կամ Լուսնին լոյսը իր դիմացի ամպերուն վրայ անանկ ձեւով մը կը զարնէ որ՝ այն ամպերուն վրայ ուրիշ արեւներ կամ լուսիններ կ'երեւան, այս տեսարանը կ'ըսուի Արեւապատկեր կամ Լուսապատկեր։

53. Ամառ ատեն Արեւուն շուրջը երեւցած ծիածանի պէս գոյնզգոյն շրջանակը, որուն պատճառը Արեւուն շուրջը գտնուած գոլորշիներն են, Բակ Արեւու կ'ըսուի։ Լուսինն ալ երբեմն Բակ կ'ունենայ, բայց արեւու բակին պէս գունաւոր չէ։

54. Զոդիակոսի լոյս կ'ըսուի այն տկար լոյսը՝ որ Մարտ ամսոյ սկիզբները, արեւը մարը մտնելէն ետեւ՝ երկինքին երեսը բուրդի ձեւով կ'երեւի։

55. Ամառ ատեն, դաշտերու մէջ գտնուած չէնքերը կամ ծովուն մէջի նաւերը՝ վրայէ վրայ երկու հատ կ'երեւան՝ մէկը միւսին վրայ գլխիվար։ Այս երեւոյթը կ'ըսուի Կրկնեռեւոյթ։

ԴԱՍ Է.

4. ՀՐԵՂԷՆ ՄԵՏԷՕՐԱՑՔ

56. ՀՐԵՂԷՆ ՄԵՏԷՕՐԱՑ կ'ըսուին օդին մէջ երեւցած կրակէ երեւոյթները, որոնք վեց տեսակ են. Փայլակ, Կայծակ, Հիւսիսայոյզ, Շրջմոլիկ Հուր, Ասուպ ու Երկնաքար։

57. Երբոր ամպերու մէջ լեցուած երկու տեսակ ելեքտրականութիւն իրար հաղորդուին, ձայն կրակ ու լոյս կը հանեն։ Ձայնը կ'ըսուի Որոտում, լոյսը՝ Փայլակ, կրակը՝ Կայծակ։

58. Հիւսիսայոյզը կամ Հիւսիսային լոյսը գեղեցիկ տեսարան մ'է զանազան գոյներով, որու մէջ կ'երեւին սիրուն չէնքեր, կամարներ, սիւներ եւայլն. ու վերջանալու ատեն կրակի պէս կը կարմրի։ Այս տեսարանը ցրտային գօտիներու մէջ կը պատահի՝ արեւամուտէն 3-4 ժամ յետոյ։

59. Շրջմոլիկ Հուր կ'ըսուին այն բռնկած գոլորշիները՝ որոնք ատեն ատեն գիշերները գերեզմաններու մէջ կամ խոնաւ տեղուանք կ'երեւան։ Ռամիկները՝ աւելորդապաշտութեամբ այս անվնաս կրակէն շատ կը վախնան։

60. Ասուպ կ'ըսուին երկնից մէջ թռչտող այն

լոյսերն, որոնք մթնոլորտին բարձրերը կը վառին եւ աստղի պէս երեւալով՝ կը սահին կ'երթան ու երբեմն ալ վար կ'իյնան։

61. Երբոր Աստուած մը երկրիս ձգողութեամբը ահագին որոտմունքով ու լոյսով վար իյնայ՝ Երկնամար կամ Շանթամար կը կոչուի։

ԳԼԽ Ը.

ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

1. ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ կը կոչուի երկնային մարմիններու խումբ մը՝ որ կազմուած է Արեգակէն, մոլորակներէ, գիսաւորներէ եւ անոնց արբանեակներէն։ Այս խումբին կեդրոնն է Արեգակը՝ որոյ շուրջը կը դառնան վերոյիշեալ մարմինները։ Այս դրութիւնը Կոպերնիկեան դրութիւն ալ կը կոչուի, ինչու որ ԺԶԸԴ դարուն՝ Կոպերնիկոս անունով Լէհ աստեղագէտը խորհեցաւ եւ հիմայ բոլոր աշխարհ ընդունած է այս դրութիւնը։

2. Արեգակը՝ երկնային մարմնոց ամենէն մեծն է, ինքն իրմէ լոյս եւ ջերմութիւն ունի զորս կը բաշխէ Մոլորակաց եւ անոնց Արբանեակներուն։

3. Մոլորակ կ'ըսուին Արեւին շուրջը ծուաձեւ դարձող աստղերը, իսկ արբանեակ անունը կուտան երկնային ա՛յն մարմիններուն՝ որոնք մոլորակի մը բոլորտիքը կը դառնան։ Օրինակի համար, մեր երկիրը Արեգակին մոլորակներէն մէկն է, Լուսինն ալ

մեր մոլորակին շուրջը դառնալուն համար՝ կ'ըսուի Արբանեակ։

4. Արեգակին երկրէս, կամ երկրիս արեգակէն ունեցած հեռաւորութիւնն է, միջին հաշուով 150 միլիոն քիլոմէթր։

5. 106 է աւելի Մոլորակներ կան ու երկու կարգերու կը բաժնուին. Մեծ և Փոքր մոլորակներ։ Մեծ մոլորակները ութն են. 1. Փայլածու կամ Հերմէս. 2. Արուսեակ կամ Աստղիկ. 3. Երկիր. 4. Հրաս կամ Արէս. 5. Լուսնթագ կամ Արամազդ. 6. Երեւակ կամ Կռոնոս. 7. Ուրանոս. 8. Նեպտոն։ Իսկ փոքր մոլորակները թուով 84 են և միայն դիտակով տեսանելի ըլլալնուն համար՝ կը կոչուին Հեռադիտական մոլորակներ։

6. Երկիրս մոլորակաց կարգին մէջ երկրորդն է, որովհետեւ մեծութեան կարգաւ՝ Փայլածուէն եւ Արուսեակէն ետքը կուգայ։

ԳԼԱՍ Թ.

Լ Ո Ի Ս Ի Ն

7. Լուսինը ինքն իրմէ լոյս չունեցող գնդակերպ մարմին մ'է՝ Երկրէս 49 անգամ փոքր և 380,000 քիլոմէթր անկից հեռի։

8. Լուսինը երկու տեսակ շարժում ունի. մէկ մը 27 օրուան և 8 ժամու մէջ իւր առանցքին վրայ կը թաւալի. երկրորդ՝ 29 օր. 12 ժամ. 44 րոպէ ու

3 մանրերկրորդի մէջ երկրիս շրջանը կ'ընէ՝ որու կ'ըսուի Լուսնական ամիս։

ԼՈՒՍԻՆԻՆ ԵՐԵՒՈՒԹՆԵՐԸ (1)

9. Լուսինը այլ և այլ երեւոյթներով մեզի կ'երեւայ։ Երբոր լուսինը Արեւուն ու Երկրին մէջտեղը կը գտնուի, իր մութ մնացած երեսը մեզի դարձած ըլլալով չենք տեսներ։ Այս երեւոյթը կ'ըսուի Նոր Լուսին կամ Ծնունդ Լուսնի։ Դարձեալ՝ լուսինը իւր շրջանն ընելով՝ Արեգակէն կը հեռանայ, այնպէս որ 2-3 օր յետոյ՝ Արեւը մտնելէն ետքը իւր լուսաւորեալ կէսէն մաս մը կը ցուցնէ մեզի մահիկի ձեւով։ Ութ օր յետոյ մահիկը երթալով կը թանձրանայ և կէս բոլորակի պէս կ'երեւայ մեզի՝ որու կ'ըսենք Առաջին քառորդ։

10. Այսպէս Լուսնին այն լուսաւորեալ մասը ամէն օր մէկ մէկ կտոր մեծնալով՝ 15 երրորդ օրը՝ իւր ամբողջ շրջանին կէսը լրացուցած կ'ըլլայ և իւր լուսաւորեալ կէսը ամբողջ սկաւառակ մը կ'երեւի, այս երեւոյթն կը կոչուի Լրումն լուսնի։

11. Լուսինը լրանալէն վերջը՝ դարձեալ կ'սկսի օր ըստ օրէ նուազիլ, և իւր ամբողջ շրջանին 22 երրորդ օրը նորէն երկու կէս բոլորակ կ'երեւայ մեզի և կ'ըլլայ Վերջին քառորդ։

---

(1) Պատ. Ուսուցիչք, եթէ կարելի է, Լուսնի երեւոյթներն մասնաւոր գործիքի մը վրայ, եթէ ոչ՝ գրատախտակի վրայ նշանակելով բացատրեն ուսանողաց։

ԴԱՍ Ժ.

ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐ ԼՈՒՍՆԻ ԵՒ ԱՐԵԳԱԿԱՆ

12. Երբեմն կը պատահի որ, Երկիրս Արեգակին և Լուսնին մէջտեղը կուգայ՝ որով լուսինը Արեգակէն չկրնար լոյս առնել։ Այս տեսարանը կը կոչուի խաւարումն Լուսնի։ Իսկ Արեգական խաւարումը կը պատահի նոր լուսնի ատեն՝ երբ լուսինը Արեգական ու Երկրիս մէջտեղը մէկ գծի վրայ գտնուի։ Այն ատեն լուսինը արգելք կ'ըլլայ Երկրիս իւր լոյսը արեւէն առնելու և կ'ըլլայ խաւարումն Արեգական, թէեւ աւելի ճիշդը՝ խաւարողը Երկիրս է որ՝ արեւուն լոյսէն կը զրկուի։

ԱՍՏԵՂԵՐ

13. Աստղերը իրենցմէ լոյս ունեցող մարմիններ են, որոնք պայծառ գիշերները երկնքին կամարին վրայ մեզի կ'երեւան, Հին ատեն այնպէս կը կարծուէր թէ աստղերն անշարժ են, բայց հիմայ հաստատուած է որ, աստղերն ալ իրենց շարժումն ունին։

14. Աստղագէտները՝ աստղերը ճանչնալու, անոնց դիրքն ու բնութիւնը ուսումնասիրելու համար՝ զանոնք խումբ խումբ բաժնած և անոնց կենդանեաց և կամ մարդոց անուններ տուած են, ինչպէս Մեծ Արջ, Վիշապ, Առիւծ, Պերսէոս, Անտրոմէտ, եւայլն. որոնք կ'ըսուին Համաստեղութիւն։ Մինչեւ հիմայ 117 Համաստեղութիւն ճանչցուած է։

15. Ասոնցմէ զատ՝ երկու հաստատուն աստղեր ալ կան երկրիս բեւեռներուն կողմերը, մէկը հիւսիսային բեւեռն է և կ'ըսուի Հիւսիսային Բեւեռական աստղ, որովհետեւ Արջ համաստեղութեան հիւսիսային կողմը կը գտնուի հոն։ Իսկ միւսը՝ Հարաւային Բեւե-

ական աստղ կամ Հակարջային կը կոչուի՝ առաջնոյն հակառակ կողմը գտնուելուն պատճառաւ։

16. Այս երկու հաստատուն աստղերը՝ իւրաքանչիւր ցրտային գօտւոյ մէջ մէկ մէկ հատ միայն կ'երևին. իսկ Հասարակածէն երկուքն ալ կը տեսնուին։

17. Գիսաւոր կ'ըսուին արեգակին բոլորտիքը շրջան ընող այն լուսաւոր մարմինները որոնք լուսաւոր պոչ կամ գէս մ'ունին և այս պատճառաւ կը կոչուի Գիսաւոր։

18. Գիսաւորները մեր հորիզոնին վրայ երևալու որոշեալ շրջան մը չունին. կան որ արեգակին բոլորտիքը ճուաձեւ շրջան ըրած ատեննին երբեմն կ'երևան և կան ալ որ հարիւրաւոր տարիներ աներևոյթ կ'ըլլան և այս պատճառաւ կը կոչուին պարբերական։ Ռամիկները նախապաշարմամբ՝ այս գիսաւորներուն երևումը պատուհասի մը նշան կը կարծեն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԲՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԴԱՍ Ա.

Երկիրս ի՞նչ ձեւ ունի. — Անոր կլորութեանն ի՞նչ ապացոյցներ ունիս. — Որո՞ւ կ'ըսուի Առանցք և որո՞ւ՝ Բեւեռ. — Հասարակածը ո՞ր գիծն է. — Միջօրէական շրջանակ որո՞ւ կ'ըսուի և Գունտը քանի՞ մասի կը բաժնուի. — Արեւադարձ որո՞նց կ'ըսուի եւ քանի՞ են. — Որո՞նք են Բեւեռային շրջանակները։

ԴԱՍ Բ.

Երկրագունտը քանի՞ աստիճաններու կը բաժնուի. — Երկայնութեան ու լայնութեան աստիճանները որո՞նք եւ ի՞նչ նպատակաւ նշանակուած են Գունտի վրայ. — Երկիրս քանի՞ գօտիներու

բաժնուած է. — Հինգ գօտիներու մէջ ի՞նչ տեսակ կլիմայ կը տիրէ եւ ի՞նչ տեսակ բոյսեր յառաջ կուգան։

ԴԱՍ Գ.

Որո՞ւ կ'ըսուի բոյս. — Հինգ գօտիներու ներքեւ ի՞նչ տեսակ բոյսեր կ'աճին. — Կենդանիները քանի՞ դասակարգերու կը բաժնուին. — Ի՞նչ տեսակ կենդանիներ կը գտնուին Սառուցեալ, Բարեխառն եւ Այրեցեալ գօտիներու մէջ. — Հանքն ի՞նչ է. — քանի՞ կարգերու կը բաժնուին։

ԴԱՍ Դ.

Ջուրն ի՞նչ տեսակ մարմին է. — Քանի՞ տեսակ ջուր կայ. — Օդ կամ Մթնոլորտ որո՞ւ կ'ըսուի. — Օդերեւոյթները քանի՞ են. — Ի՞նչ է Հովը. — Որո՞ւ կ'ըսուի մրրիկ. ի՞նչ է թաթաքը եւ ի՞նչ ժամաներ կը պատճառէ. — Խորշակ որո՞ւ կ'ըսուի։

ԴԱՍ Ե.

Որո՞նց կ'ըսուի Հրեղէն Մետէորա. — Ի՞նչ է Մէգը. — Ամպն ի՞նչ է. — Որո՞ւ կ'ըսուի Ցօղ. — Ի՞նչ է Եղեամը. — Ի՞նչ է անձրեւը. — Ի՞նչ է Ձիւնը. — Ի՞նչ է Կարկուտը։

ԴԱՍ Զ.

Լուսեղէն Մետէորաները որո՞նք են. — Ի՞նչ է Ծիածանը։ — Արշալոյսը՞, Վերջալոյսը՞, Արեւանմանութիւնը, Բակը՞, Զոդիակոսի լոյսը՞, Կրկներեւոյթը՞. — Հրեղէն Մետէորա որո՞նց կ'ըսուի եւ քանի՞ են. Որո՞ւ կ'ըսուի փայլակ։ Կայծա՞կ. — Հիւսիսայգն ի՞նչպիսի տեսարան է եւ ո՞ր գօտիներու մէջ կը պատահի. — Շրջմոլիկ Հուր որո՞ւ կ'ըսուի. — Աստղն ի՞նչ է. — Երկնաքար որո՞ւ կ'ըսուի։

ԴԱՍ Է.

Արեգակնային դրութիւն ըսելով ի՞նչ կը հասկնաս. — Ինչո՞ւ կոպերնիկեան դրութիւն ալ կ'ըսուի. — Մոլորակ որո՞ւ կ'ըսուի. — Արբանեակը ո՞րն է. — Արեգակը երկրէս ո՞րքան հեռի է. — Քանի՞ մոլորակ կայ եւ քանի՞ կարգերու բաժնուած են. — Ութը Մեծ մոլորակները որո՞նք են. — Երկիրս մոլորակաց մէջ քանի՞ երրորդն է։

ԳԱՍ Ը.

Լուսինն ի՞նչ տեսակ մարմին է. — Երկրես որչա՞փ մեծ եւ քանի՞ քիլոմէթր հեռի է. — Լուսինը քանի՞ տեսակ շարժում ունի. — Լուսինն ի՞նչ երեւոյթներ ունի. — Նոր կամ Ծնունդ Լուսնի որո՞ւ կ'ըսուի. — Լուսնի Առաջին քառորդն ի՞նչ է. — Լրումն Լուսնի որո՞ւ կ'ըսուի. — Ե՞րբ կ'ըլլայ վերջին քառորդ. — Լուսինն ի՞նչպէս կը խաւարի. — Խաւարումն Արեւու ըսուածը ի՞նչ է. — Աստղերն ի՞նչպիսի մարմիններ են. — Համաստեղութիւն որո՞ւ կ'ըսուի եւ քանի՞ հատ են. — Բեւեռական աստղերը որո՞նք են. — Գիսաւոր Աստղը ո՞րն է. — Ի՞նչ նախապաշարում կայ այս աստղերուն վրայ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

ԵՒՐՈՊԱՅԷ ԴՈՒՐՍ ՈՒՆԵՑԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ

ԱՆԳԼԻԱ

Ասիոյ մէջ ունի,

Հնդկաստան *եւ հրջակայ կղզիները*, Պիրմանիա Մալաքքա, Սինկապուր, Հոնկ-Քոնկ *եւայլն։*

Ափրիկէի մէջ ունի,

Սենէկամպիոյ *մէկ մասը*. Սիէրրա-Լէօն, Բարեյուսոյ երկիրը, — Ս. Հեղինէ, Համբարձման, Մորիս և Սէշէլեան *կղզիներէն ի զատ՝* Մոզամպիքի *մէկ մասը։*

Ամերիկայի մէջ ունի,

Նոր Բրիտանիա, Նուէֆաան *թերակղզիին մէկ մասը*, Լուբայեան և Փոքր Անթիլեանց *մեծագոյն մասը*, Նամայիքա *կղզին և* Կույանայի *մէկ մասը։*

Ովկէանիոյ մէջ ունի,

Աւստրալիա *մեծ կղզին*, Վան-Տիմէն, Նոր-Զէլանտա *և մի քանի մանր կղզիներ։ Տարածութիւն ընդհանուր կալուածոց* 22,800,000 *քիլոմէթր քառակուսի։ — Թիւ բնակչաց* 250,000,000։

ՖՐԱՆՍԱ

Ասիոյ մէջ ունի,

Բոնթիշէրի, Զանտէրնակոր, Եանաօ, Քարիքալ *եւ* Մահէ՝ *ի Հնդկաստան։ — Հնդկա-Չինաւ մէջ ունի* Թոնքին, Սիամի *մէկ մասը*, Քոչինչին՝ *Հնդկա-Չինաւ մէջ։*

Ափրիկէի մէջ ունի,

Սենէկամպիոյ *և* Քոնկոյի *մէկ մէկ մասերը*, Պուռպոն *և շրջակայ մի քանի կղզիները։ Իսկ թեւարկութիւն՝ Մատակասքարի վրայ։*

Ամերիկայի մէջ ունի՝ Կույանաի *մէկ մասէն ի զատ՝* Մարթինիք, Կուատալուպ *և ուրիշ մի քանի կղզիներ։*

Ովկէանիոյ մէջ ունի՝ Մարքիզեան, Թահիթի *եւ* Նոր Քալէտոնիա *կղզիները։*

Տարածութիւն ընդհանուր կալուածոց 3,000,000 *քիլոմէթր քառակուսի — Թիւ բնակչաց* 33,000,000։

ՀՈԼԱՆԴԱ

Հոլանտա Ամերիկայի մէջ ունի,

Կույանաի *մէկ մասն և* Փոքր Անթիլեանց *մի քանին։*

Ովկէանիոյ մէջ ունի՝ Սումադրա, Ճավա, Պանքա, Մատուրա, Թիմորի *արեւմտեան մասը*, Պորնէօի *հարաւ. մեծագոյն մասը*, Նոր Կուինիա *և* Մոլուքեան *կղզիք։*

Տարածութիւն ընդհանուր կալուածոց 2,000,000 *քիլոմէթր քառակուսի — Բնակիչ՝* 31,000,000։

ՓՈՐԹՈԿԱԼ

Ասիոյ մէջ ունի՝ Կօա և Տիու քաղաքները՝ Հնդկաստանի մէջ, Մաքաօ՝ Չինու հարաւային կողմը։

Ափրիկէի մէջ ունի՝ Մաէրա, Դալարի գլխոյ կլղզիք, Անկօլա և Մոզամպիքի ափունքը, Քօնկոյի և Սենէկամպիոյ մէկ փոքր մասը։

Ովկէանիոյ մէջ ունի՝ Թիմորի արեւմուտեան մասը

Տարածութիւն ընդհանուր կալուածոց 1,825,000 քիլոմէթր քառակուսի — Բնակիչ՝ 5,000,000։

ՍՊԱՆԻԱ

Ափրիկէի մէջ ունի՝ Քանարեան, Անգլօպօն և Ֆէրնանսօ-Փօ կղզիները՝ Սէօղա քաղաքը՝ Մարօքի մէջ։

Ամերիկայի մէջ ունի՝ Քուպա և Փորթօ-Ռիքօ կղզիները։

Ովկէանիոյ մէջ ունի՝ Փիլիպեան, Քարոլինեան և Մարիանեան կղզիները։ Տարածութիւն ընդհ. կալուածոց 10,000,000 քիլմ. քառ. — Բնակիչ 8,000,000

ՌՈՒՍԻԱ

Միայն Ասիոյ մէջ՝ բայց գրեթէ ամբողջ երկիրն ունի իբր ստացուածք, ինչպէս Սիպերիա, Կովկաս Թաթարիստանի մեծագոյն մասը և փոքր մաս մ'ալ Աֆղանիստանէն։

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիա վերջին տարիներս Արևելեան Ափրիկէի և Ովկէանիոյ մէջ մի քանի գաղթականութիւններ ունեցաւ որոց տարածութիւնն է իբր 2 միլիոն քիլմ։

—— ❋ Վ. Ե Ր Ջ ❋ ——

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi
ERM0930
255.07.02.01.06.00/